



Ա. Գ. Ի. Ն. Ժ. Գ. ՏԱՐԻ-1975 ՄԱՅԻՍ ԹԻԻ 5

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



ՅՈՎՀ. ՇԻՐԱԶ	Նայի ազոաները
Յ. ԿԱՐԱՊԵՆՑ	Սոսկալի Սահակ
* * *	Մեր մայրերը
ԹԼԱՏԻՆՑԻ	Ըսէ ինձի, ի՛նչ կայ
ՍԻԱՄԱՆԹՕ	Մօր մը երազը
Դ. ՎԱՐՈՒԺԱՆ	Կարօտի համակ
Մ. ՄԵՆՐԱՐԵՆՑ	Խունկ եւ արցունք
ՀԱՄԱՍՏԵՂ	Մայր իմ անուշ
ՅՈՎՀ. ՇԻՐԱԶ	Կշեռք
Վ. ՓԱՓԱԶԵԱՆ	Ենովք Շահէնի մայրը
Յ. ՕՇԱԿԱՆ	Մաթիկ Մելիքյանեան
* * *	Վասն բուրբի ու բամբի
ՃԵՅՄԸՍ ՊՐԱՅՍ	Հայաստանի ապագան
ՈՐՆՈՒՑ ԹՈՅԸՆՊԻ	Les massacres Arméniens
ՏԷՑՎԻՏ ԼՈՅՏ ՃՈՐՃ	Ժամը հնչած է հաշուեյարդարի
ՀԱՆՐԻ ՄՈՐԿԸՆԹԱՈՒ	Հայերը պէտք է ազատագրուին
ԺԱԳ ՏԸ ՄՈՐԳԱՆ	Հայաստան եւ Փրանսական շահերը
ՌԻՒՆՍԹԸՆ ԶԸՐԶԻՂ	The Aftermats
ՎԱՅՍՔԱՌԻՆԹ ԿԼԱՏԱԹՈՆ	Նախ՛ պէյի յուշերուն յառաքարանը
ԱՐՄԷՆ Թ. ՎԷԿԵՐ	Բաց մամակ՝ հայնագահ Ուիլյամի
ԺՈՐԺ ՔԼԵՄԱՆՍՕ	Պատառիան օսմանեան պատուիրակու- թեան ներկայացուցած յուշագրին
ՊՈՀՏԱՆ ԿԻՊԱՐՍԿԻ	Նամակ՝ ՄԱԿի ընդհ. հարտուղար ու թանիմ
ԼՈՒԻՃԻ ԼՈՒԾԵՆԹԹԻ	Իտալիան՝ ազատարարը Հայաստանի
Ս. ՍԱՆԻՆԵԱՆ	Հանդիպումներ
Մ. ԹՈՐԼԱՔԵԱՆ	Ջեւաճիւրի անարեկումը
ԱՐ. ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆ	Էնվէրի տեսքեկումը
* * *	«Եւ ինկա՛ն. եւ ինկա՛ն. եւ ինկա՛ն»
Լ. ԼԱՊԷՑ	Գրողներու ֆակտագիրը յեղափոխական շարժումներու ընթացքին (Հայացուց՝ Ք. Ճիւղաշեան)
Յ. Մ.	Ն. Չարխուտեանի «Ունայնութեան ակեր»ը
* * *	Օ. Ջարմուկի մահը

Բազմ

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒՐԵԱՆ և ԱՐՈՒԵՍՏԻ

Ժ. ՅԱՐԻ, ԹԻՒ 5

ՄԱՅԻՍ 1975

ԳԼՈՐԻՈՒՄ

Տե՛ր, ցաւ մ'ոյ այս է հիմա, ցաւերէն
հոգ մնիմար:

Վ. ԹԵՒԻՆՆ

Յոյ՛ի սենակին վրայ արտագրուած Շիրազի
ճեղքի ազատները միաժամանակ երեզաւ ըն-
կնոտկովմ գրականութիւնն եւ շփոթունն ամա-
ղիքներուն մէջ, երկու տարբերակներով: Տարբեր
տուններ յապառուած էին սեկէթէ՛ մէկուն եւ թէ
միւսին մէջ: Հոս արուածը վերակազմուած աճ-
բողջութիւնն է:

Ուշադրաւ է այն փաստը, որ շուրջ տասը
տարի առաջ Սփիւռքին ճանաթ այս ստանաւորը
նոր միայն կ'երեւայ Հայրենի մամուլին մէջ:

Շիրազի յաջող բանաստեղծութիւններէն մէ-
կը չէ անուշա անհկա եւ արգէն ոչ թէ էրբեւ
բանաստեղծութիւն, այլ էրբեւ երեւոյթ ուշա-
դրութեան կը յանձնենք զայն, մեր ժողովուրդին
սրտին յաջուող նոր վերջին էրբեւ մէկ կոտա-
չող արձագանգը:

Ճեղքի ազատներուն մէջ յիշուած ու դառ-
նարէն դատապարտուած արտագաղթի այդ ալիքը
վտանգաւոր Համեմատութիւններու Հասարակա-
կազմէն վերջին տարիներուն եւ խոր մասնա-
նջութիւններու մտանկ Հայրենի թէ արտասահ-
մանի մասնող տարբը, ազգային թէ քաղաքական
ազգայնական սպորող մեր ժողովուրդին բոլոր
խուսերը:

Ազգային միւսողի մը սրբազան պարտաւոր-
ութիւնները անհասական, սեւիք շուտ՝ կենդա-
նական հեռակարներու զոհելու նման թույլու-
թիւնները թերեւս Եանրակշիռ իրողութիւններ
չկատարին թուական Համարով մեծ եւ բարձ-
րուալ ու ապահով սակմաններ ունեցող ժողո-



ՆՈՅԻ ԱԳՈՒԱԻՆԵՐԸ

Ո՛ւր էք շտապում, ով խարուած ջրեր,
Մեկ ծարաւ թողած ո՛ւր էք շտապում,
Սեւանն է բաշում ծով կարօտը ձեր՝
Դուք ո՛ւր էք օտար ծովերը թափում:

Անուշ է թում ձեզ կանչող Հեռուն,
Բայց դուք կը կորչէք ծովերում օտար,
Դարձէ՛ք՝ ծովանայ թող Հայոց առուն,
Մի՛թէ՛ մօր դիրկը նեղ է ձեզ Համար...

244

20284.47

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ԵՐԵՎԱՆ
digitised by

162-000
A.R.A.R.®

վորչներու ժող, բայց մենք չենք կրնար նսնայի-
տի վտանգներու զիտաց տնտարբեր մտու, կր
թուական ու արական հեղա կրուսաներ զար-
մանելու հրամայականներ կ'ազդենք մէկ կողմէ,
և միւս կողմէ՝ զամկատար տննչեր ունեննէ մենք
շտան:

Ճիշդ է, որ նոր կարգերու հաստատման հետ
կտակածի, զրգարաութեան, հալածանքներու ու
ծովածաւալ կամայականութիւններու աւարեկէն
մթնոլորտ մը ախրեց հոն և մեր ժողովուրդը աչ-
րեցաւ ստալինեան երկարատեւ գիշերներուն զի-
շերային բուր անդունտները: Պատահեցան այդ
բարձր և սկսած զմեկնալը կը թուէ, թէ չը-
կրցաւ մարդաց հարկներն ամբողջովին արմա-
տախիլ ընել անվտանգութեան միջաւանը, այ-
նուամենայնիւ, հին բարքերուն կրկնութեան հա-
ւանականութիւնները բուարար պատճառներ չեն,
որ մարդիկ հայրենիքէ սահմաններէն դուրս դա-
լու դուստնութեան զիտեն և նախընտրեն ար-
տաստմանեան զիտը կորուստը:

— Գոչի, բայց իբրև հայ ուղիւ մթն-
լորտ մը շարուեցաւ ինձի հայրենիքն մէջ: Եկաւ,
և այսուհետեւ կ'ուզեմ կեանքս շարունակել իր-
բեւ մարզ: Ազգայինին՝ մերը, մարդկայինին՝ ոչ-
լոյն, — կ'ըսեն ժողուարարէս արապազթոյնե-
րը և կը ճզնին արգարացնել իրենց արտաքը՝ և-
րեւութապէս համոզել այդ փիլիսոփայութեամբ:
Բայց մարդկային է արդեօք զմեր ամենա-
ուրբ կուրենց մէջ տանձին ճզել հայրենի մայր
զանդուածը, և աղամարդկային է անճախարա-
թեան, անհաստապաշտութեան չըրճուկ հայրենիքու
միայ կոտորուած վերաուրբան պատճառարա-
նութիւններով հեռանալ հայրենի եղբայրներէն:

Մեզմէ ոչ մէկուն կեանքը աւելի թանկագին
է միւսին իրաւունքին, և եթէ կայ թանկագին
բան մը այս բուրբին մէջ՝ ստիկա հաստատար
յամատութիւնն է ա՛յն աղամարդուն, որ, բուր
պարագաներուն, սասանաններուն, սելուշներու,
մեմլուշներու, թաթարներու ու թուրքերու մա-
հարեք ճբրկիները արեւմտորակով Հայաստանի
մայրերն չքամուած ու Հայաստան պահած իր
նախահայրերուն օրինակով՝ որոշած է ամբողջ
կուրած մնալ արինապանգ մեր այդ հողային-
աին ու պահել ամենասուրբ այդ աւանդը:

Բաճաղալթի ենթարկուած ժողովուրդի մը
զմեղակ բախտը ծանօթ է մեզի է հեռուց անտի,
բայց կամաւոր զաղթի պատմութիւններ չկան
մեր տոմարներուն մէջ: Ասիկա նոր երևալթ է,
զուտ վատնում է և հայրենիքէն հեռացողները
պէտք է անդրաշուսան, որ իրենք կը զիտեն,
Միտանթոյի բառերով՝

Իւրի անսույց անգրուամները մտնացնող
օտարացումներուն...

Գամ՝
Վասնբու պէս զկսի մմկտցումիմ խորխո-
բատները գտնալիծելու:

Ախ, մի՞թէ նեղ է, որ դուրս էք փախչում,
Բայց դուք կը կորչէք ծովներում օտար,
Ձեր կոյր կորուստով իմ յոյսն է կորչում՝
Դաննում ծովասոյզ մի ջաղագաթար:

Իմ պանդուխտ ջրեր, զուր էք շտապում,
Դարձէք, տուն վաղէք, մեր մուրազ ջրեր,
Ինչո՞ւ էք օտար կնոջ դիրի թափում
Հայ կոյսի բաժին կեանքն ու պանձը մեր:

Դարեր զաղթել ենք, հիմի՞ էլ զաղթենք,
Երբոր ծաղկեալ է մայր Հայաստանում, —
Մայր լեզուի կուրում էլ ինչո՞վ յաղթենք,
Երբ մեծ Մաշտոցի զորքն է նսարանում:

Ո՞վ է մեր խելքը հեռուից զողանում,
Այս ո՞ւր էք շուտ մայր հայրենիքից,
Մեզ Աւարայրում մենակ էք թողնում,
Մի՞թէ մայր ազգը սուրբ չէ ճոխոյ
կեանքից:

Այս ո՞ւր էք փախչում, խելագար ջրեր,
Մեր բուս հողն էլ ծով ծարաւ թողած, —
Դարձէք, ևս վաղէք, որ դարձնենք
անմեռ

Թէկուզ հայրենի մի խեղճ ջրաղաց:

Մեր ամենասուրբ կոտից էք փախչում,
Սուրբ Աւարայրից մեր ամէնօրեայ,
Ձեզ հետ մայրենի լիզուն է կորչում,
Վարդանն է ճշում, ևս պոչն եմ նրա:

Ա՛խ, անմիտ ջրեր, ո՞ւր էք շտապում,
Մի՞թէ կարօտ են օվկիանները ձեզ, —
Դարձէք... Մեանը ձեզ է պապակում,
Կանչում՝ Սահարա անապատի պէս:

Ինչո՞ւ կանադա, ի՞նչ Ամերիկա,
Երբ թէկուզ մի բուս Հայաստանը կայ,
Տուն աղանաջէք, Նոյի ազաւաներ
Կը կորչէք, որպէս զայլախեղդ գառներ...

... էլ ո՞վ մեր հայոց լեզուով մանչայ,
Դարձէք, որ Արաքսն հայերէն հոսի,
Տուն դարձէք, հայեր, որ հողն էլ տուն
զայ՝
Մասին էլ նորէն հայերէն խօսի:

ՅՈՎ. ԾԻՐԱԶ

Յ. Կ Ա Ր Ա Պ Ե Ն Ց

ՍՈՍԿԱԼԻ ՍԱՀԱԿ

Հետագայ պատճառները վերջին կտորն է Յ. Կարապետյանի «Նոր Աշխարհի երկ անբախտացմանը» տեսնելու համարին, որ հրատարակ կ'ելլէ քանի որ օրին:

Յրեապարզ զրազէտին այս նոր հատորը կ'ընդգրկէ ամերիկեացի կեանքէն առնուած առաջ պատճառները ու կը հարուէ շուրջ երեք հարիւր էջ:

Իրենց ձեռնարկներով ու աշխատանքներով ամերիկեան մեծ մրցարանին մէջ նախանշիչ մակարդակներու տիրացած, այլ իրենց ազգային ճակատագրով տաղանդաւոր տիպարներ են Վին Սերմանյանները, որոնք ամէն բանէ առաջ, ինչպէս կ'ըսէ Հեղինակը, կեանքի կը կոչին իրրեւ հողու տուրք:

Յուլիսեան արեւի տակ Սահակը կանգնել էր երկաթաբաշտերի ճիւղ մէջնակ, ապրանքատար զնայքի տուջեւ եւ բըզաւում էր:

- Մէկ ուրջ անգամ թոյլ չեմ տայ առաջանալ:

- Բայց մեզ կարգադրուած է...

- Դանի ես ողջ եմ, զնայքը առաջ չի շարժուի, - Սահակի հայեացքը արագ անցաւ Ջէֆրերտոնից եւ այլ քաղաքներից եկած պատուիրակութեան անդամների վրայից ու կանգ առաւ Վալտերիկ անը Պասիֆիկի երկաթուղային ընկերութեան ղլխաւոր ներկայացուցիչ՝ Ուալթըր Սմիթի երկարաւուն դէմքին, որը պազդում էր քրտինքից:

Սահակի թիկունքում նրան օղակել էին իր մի տասնեակ աւագ օգնականները՝ աշխատանքի հողատ հազուստներով, մեծ մասամբ կրծքաբաց ու մազոտ: Երկաթապոսերը ձգւում էին դէպի հարաւ, դէպի սեխաստանի անծայրածիր թուացող տափարակը՝ հետզհետէ միանալով իրար, դառնալով դիմ ու վերջապէս մերուկով տօթից բեկբեկուող հորիզոնին: Երկաթուղուց արեւմուտք փոսել էին կանաչ-դեղին դաշտերը՝ ջրանցքների եւ հողէ ճանապարհների երկրաչափական դիթխարի քառակուսիներով անջատուած: Այս ու այն կողմ, արահետների պտուենդին դանդաղ շարժում էին բոնաստար ինքնաշարժներ, քաղհան մեքենաներ ու այլանդակ կոուցներով մետաղեայ դեղին կազմածներ: Դաշտը կէտ-

կիտուած էր մարդկային ուրուագծերով, երբեմն շարք-
 շարք, երբեմն ուղղահայաց, իսկ յաճախ առանձին: Թսիրէ
 սպիտակ դիւարկները իջնում էին, բարձրանում: Նրանց հե-
 տեւում էին երկարավիզ բերքահաւաք բեռնատարները: Մի-
 ջոցը յապեցած էր Հասուն սեխի բուրմունքով: Արեւը իջել
 էր ցած, մտել հողի կուրծքը եւ մեղրաւորել պտուղը:
 Բերքը Հասել էր, դիզուել, գրեթէ լեռնացել զաշտի հիւսի-
 սային եզրին գտնուող գործարանում, որը իր լայնաթեւ
 կապոյա ասնիքով գուռային օդանաւակայանի էր նմա-
 նում: Մէկ շարաթից ի վեր էր, ինչ լուել էր գործարանը:
 - Չեք արածը, մըստըր Սահակ, բացարձակ ինքնա-
 պանութիւն է, - ասաց Ուալթըր Մմիթը՝ դիւարկը հովհար
 ծառայեցնելով դէմքին, - Եթէ չփոխադրենք բերքը, ապա
 մի քանի օրից ամբողջովին կը փշանայ, եւ տուժող դուք
 կը լինէք:

- Դուք խախտել էք պայմանագիրը, - աւելի բորբոք-
 ւեց Սահակը, - այդպիսի փոխադրազին ես չեմ կարող վը-
 ճարել, ես չեմ կարող դիմանալ շուկայի մրցակցութեանը:
 Թէքասը, Արիզոնան ու Կալիֆորնիան վաղը կ'ողողեն շու-
 կան, իսկ ես կը նստեմ մացաներին: Տո՛ւն վերադարձէք,
 պարոններ: Ես ձեզ հետ այլեւս դործ չունեմ:

- Արէք տրամաբանութեամբ մտնեանք հարցին, - պա-
 տասխանեց Ուալթըր Մմիթը՝ գտեպնդուելով իր պաշա-
 նակիցներէ Վեյլը է տսում, այլ ելք չկայ բացազանչու-
 թիւններից, - ի նկատի առէք վառելահողմիկի սղութիւնը,
 ինչպէս նաեւ աշխատավարձերի բարձրացումը: Ընկերու-
 թիւնը վնասում է, իսկ վագոնները մէկ շարաթ է, ինչ զա-
 տարկ կանգնել են դաշտում: Եթէ չհամաձայնուէք, մըս-
 տըր Սահակ, մենք պարտաւորուած կը լինենք պտուկան իշ-
 խանութիւնների միջամտութեանն ապաիներու:

- Պատկան իշխանութիւններին չէ, գնացէք դաշնակցա-
 յին կառավարութեանը դիմէք:

Պատուիրակութեան տասնըհինգ հողինոց մաքուր հազ-
 նըւած, մաքուր սափուած անգամները նայում էին այդ
 թխադէմ Հային եւ գարմանում, թէ մինչեւ երբ կարող է
 դիմանալ ճնշմանը: Նրանք նոյնիսկ ներքուստ համակրում
 էին նրան: Ինչպէ՞ս կարելի էր չհամակրել նրան, որը իր բո-
 նապարտեան հասակով ու կեցուածքով դէմ յանդիման էր
 կանգնել Ամերիկայի խոշորագոյն ընկերութիւններից մէ-
 կին: Սահակը թեւերը մէջքին կանթած, կ'ուր փորը զուբս
 ցցած, արագ, արծիւային նայուածքներ էր նետում չորս
 դին՝ անընդհատ աղմուկով ծծելով բերանում չղոյ հրու-
 շակը, ըստ իր սովորութեան, երբ բորբոքում էր: Իսկ այդ
 պահերը անպակաս էին:

- Մըստըր Սահակ, - փորձեց կացութիւնը փրկել զըլ-
 խաւոր ներկայացուցիչը, - դուք գործնական մարդ էք, ին-
 չո՞ւ չէք բարձրացնում սեխի գինը, այդպիսով թէ՛ դուք կը
 շահէք, թէ՛ մենք:

- Ձեզ ասում եմ, դժոխք գնացէք: Ես պայմանագիր

ունեմ հնճած ընկերութեան եւ արհեստակցական միութեան հետ :

- Սակայն ներկայ պայմանները...

- Մինչեւ նոր պայմանադիր, պայմանները մնում են անփոփոխ :

- Դուք յամառ էք, մըտորը Սահակ, - ասաց Ուայթըրը Սմիթը :

- Ես պատասխանատու եմ այս ժարդկանց համար, - Հետապնդեց Սահակը՝ ձախ թեւը տարածելով դաշտի ուղղութեամբ :

- Բայց ձեր հերթին դուք կարող էք սպրանջի գինը բարձրացնել :

- Ինչպէս ասացի, այդ խորտակում կը նշանակի, երբ սեխարդիւնաբերական մեծ ընկերութիւնները իրենց աժտանագին սպրանջով կը գրաւեն Նիւ Շորքի, Շիքագոյի ու Լոս Անջելոսի շուկաները :

- Սակայն ձեր սպրանջի սրակը յայտնի է բոլորին, այնպէս որ՝ զնի բարձրացումը բացասաբար չի անդրադառնայ ձեր սպառման վրայ : «Արմենիա» պիտակը յայտնի է բոլորին :

- Տեսութիւնը այլ բան է, իրականութիւնը՝ այլ : Ես քսանըհինգ տարի է, ինչ գործ ունեմ պողարդիւնաբերութեան շուկայի հետ : Չեմ կարող ձեր պահանջած փոխադրադինը վճարել, նախ՝ որովհետեւ այդ մեր պայմանագրի խախտում կը նշանակի, եւ երկրորդ՝ այդ ինձ գէպի ստորգ սնանկութիւն կը տանի :

- Ըստ երեսյթին, մենք չենք հասկանում իրար :

- Շատ լաւ ենք հասկանում, սակայն դուք ձեր էջն էք քշում :

- Այդ գէպըում ընկերութեանը մնացել է մի բան՝ յետ քաշել վազոնները դաշտից :

- Վազոնները կը մնան այստեղ, մինչեւ որ համաձայնուէք փոխադրել սպրանջը :

- Դուք ինձ սպառնալի՞ք էք կարդում, - իր հերթին բորբոքուեց Ուայթըր Սմիթը, սակայն մի վայրկեան յետոյ վերապտաւ իր բարեկիրթ կեցուածքը :

- Եթէ ուզում էք ճշմարտութիւնը, այո՛ :

- Մըտորը Սահակ...

- Դժոխք գնացէք բոլորդ միտսին :

Յանկարծ շոգեքարը փնչաց եւ իր սեւ, մետաղեայ թոքերից գոլորշու ահագին քուլաներ արձակեց : Պատուիրակութեան անդամները մէկ կողմ քաշուեցին : Սահակը մէկ քայլ աւելի մտեցաւ շոգեքարին : Նրան հետեւեցին իր օգնականները : Գնացքը վառեց իր դեղին աչքը՝ տաք լոյսի մէջ ողողելով Սահակի գլուխը : Սահակը հայերէն հայհոյեց՝ մտովին հասնելով մինչեւ «Աթլանթիկ անդ Պատիֆիկ» ընկերութեան նախագահի եօթը պորտը : Շոգեքարչի շիտակ տաղանազանար ոտլոցներ արձակեց : Սուրջը տարածուեց դաշտում ու մնաց անարձաղանդ : Այժմ ամէհի գանդուածը

զողում էր ջերմախոտով բռնուած զազանի պէս: Սահակը բարձրացաւ շոգեբարչի պատուանդանի վրայ, շուտ եկաւ եւ ձեռքի թաշկինակը ճօճեց աջից ձախ: Դաշտի ամէն կողմից խտրէ գլխարկներով պտղաբաղները շարժուեցին զէպի զընացքը:

Ետժունն շառաւիղները խաանում էին քայլ առ քայլ: Ուայթըր Սմիթը կարգադրեց իր օգնականին հեռախօսել Ջէֆըրսոն՝ նահանգային իշխանութեանը: Մի հսկայ իրանդացի մեքենագործ կտրեց նրա ճամբան՝ Ծխախոտի ծուխը փչելով դիմացինի երեսին: Ընկերութեան ներկայացուցիչներից մէկը փութաց զէպի իր ինքնաշարժը՝ օդնութիւն հայցելու քաղաքից: Սակայն մի խումբ աշխատուորներ ուղեկցեց չափ՝ շրջապատել էին ինքնաշարժները՝ անտարբեր հեռուն նայելով, իբր լուկ պատահականութիւն է, որ իրենք այդ պահին այդ կէտում էին գտնուում: Ընդհանուր լարումը կարծես ընդարմացրել էր բոլորին: Միջոցում կար քարացած սպասում եւ յետոյ հատուն սեխի զաղջ բուրմունք:

Մինչ շոգեբարչը իր ներքին հարիւրաւոր դրաններից զըրդիւններ էր արձակում, արեւախանձ հարիւրաւոր աշխատուորներ հաւաքում էին Սահակի շուրջ, զնացքի առջեւ, երկաթադժերի վրայ, մռայլ, մտահոգ, լուռ, զբոնաթոր: Նրանք մեծ մասամբ մեքսիկացիներ էին, շրջուն պտուղահաւաքներ, որոնք Սաորին Կալիֆորնիայից սկսելով անցնում էին թէքասս, ապա Օքլահոմայի վրայից Յունիսի կէսերին հասնում Ջէֆըրսոն եւ մինչև Օչոտտոսի վերջը աշխատում Վերմենիայ զաշտում: Սահակը դիտէր նրանց իւրաքանչիւրին: Երբեմն գալիս էին ընտանեօք: Ոմանք զաշտում էին աշխատում, ոմանք՝ սեխի տեսակաւորման ու արկղաւորման գործարանում, իսկ ոմանք էլ օգնում էին մնայուն աշխատուորներին, մասնաւորապէս փոխադրական գործում:

Դաշտը բաժանուել էր հակառակորդ երկու բանակների: Երկաթուղային աշխատուորներն ու ծառայողները բարձրացել էին վազոնների վրայ եւ դիտում տեսարանը: Երկաթուղայինները չէզոք էին, աշխատում էին այդպէս ձեռնալ, կբր ներքուստ նրանց համակրանքը Սահակի գորարածների կողմն էր: Նրանք տարբեր շարունակ Սահակի հետ աղ ու հաց էին կիսել: Գիտէին, թէ նրա սիրտը ում համար է բարբառում: Սակայն կար օրէնքը: Օրէնքը կարելի էր մեկնաբանել թէ՛ այսպէս, թէ՛ այնպէս, նայած թէ ինչ տեսանկիւնից էիր մօտենում իրերին: Քամին խառնել էր նրա մտխրագոյն մագերը: Նրա քառակուսի զէմքին պինդ նստել էր վճռականութիւնը: Հարցը կիրառական նկատումներից ու սկզբունքային որոտներից այն կողմն էր անցել եւ ստացել, այսպէս սասած՝ սահակային տարածք, որն ոչ այլ ինչ էր, եթէ ոչ խարբերոցու յամտութիւն: Երբ Սահակի թիկունքում խտացան շարքերը, պատուիրակութեան անդամները նոր միայն նկատեցին, թէ որչափ կարճահասակ էր նա, հազիւ հինգ ոտք, կրու, յարայարժ մի գունտ, որի ներկայութիւնը սակայն սոսկում էր պատճա-

ուսմ շրջապատին: Ի զուր չէր, որ մեքտիկացիները նրան փառաբարար Սոսկալի Սահակ էին կոչում: Մի քանի մը-
 ոայլ, հուժկու մարդիկ ճեղքեցին շարքերը եւ երկաթէ վեց
 վեթխարի տէղ մեխեցին խճախան հողին՝ շոգեքարչի ճիւղ
 զթի առջեւ: Մուրճի ամէն մի հարուածից ցնցում էին ըն-
 կերութեան մարդիկ: Յետոյ միանգամից տիրեց լուսթիւն:
 Ետքեքարչը դադարել էր մոնչալուց: Արեւը բարձրացել,
 կախուել էր մարդկանց գլխին: Ուայթրբ Սմիթը թաշկինա-
 կով շարունակ վիզն ու ճակատն էր մաքրում:

Ճակատամարտը դեռ չսկսուած վերջացել էր:

Երկաթուղային ընկերութեան ներկայացուցիչները գըլ-
 խարկները թափ տալով չորս սեւ ինքնաշարժ մտան եւ փո-
 չի բարձրացնելով հեռացան դաշտից: Դաշտում մնաց յուս-
 րած զնացքը: Ամէն ոք վերադարձաւ իր գործին: Սոսկալի
 Սահակը ժօտեցաւ դաշտային ջրի ծորակներից մէկին, գոյլը
 ջրով լցրեց, գլուխը ջրի մէջ խոթեց եւ ոնգեղջիւրի պէս
 փնջացնելուց յետոյ, նստեց մի թումբի, գրպանից դանակը
 հանեց, կտրեց սեխը ու սկսեց ախորժակով կրծոտել հիւ-
 թալի դեղին շերտերը:



Սոսկալի Սահակը Զէֆըրսոնի ամէնից փոքրահասակ
 խարբերչին էր:

Կազմախօսական տեսակէտից ելնելով, եւ, առաւելա-
 պէս ի նկատի ունենալով խարբերչիների յաղթանակա-
 մատուցութիւնը, չափազանցութիւն չի լինի ստելը, որ նա
 Ամերիկայի եւ աւելի լայն առումով աշխարհի ամենակար-
 ճահասակ խարբերչին էր: Այդ հանգամանքը նրան տուել
 էր եզակիութիւն, այսպէս ասած՝ շեշտուած անհատակա-
 նութիւն, որը հոգեբանական մի շարք բարդութիւնների բովից
 անցնելով, դեռ մանուկ տարիքից, նրան պարզեւել էր ա-
 նասելի ինքնավստահութիւն: Սրէնքով այդ այդպէս շղի-
 աի լինէր, սակայն եղել էր: Մի՞թէ աշխարհի պատմու-
 թիւնը մեծ մասամբ չի կերտուել ամենազգի Սոսկալի Սա-
 հակների կողմից: Ամէն պարագայի, եթէ Սոսկալի Սա-
 հակը չէր ժառանգել իր համազաւտացիների մարմնական
 խոշոր չափերը, փոխարէն նա օժտուած էր այն բոլոր ցե-
 ղախօսական տուեալներով, որոնց համազրումից գոյանում
 է խարբերչին: Յամառութիւն, գործնականութիւն, ուշի-
 մութիւն եւ դեռ քարի-տակից-հաց-ճարելու-կարողութիւն:
 Ամերիկա Հաստատուած բոլոր խարբերչիների նման՝ Սա-
 հակն էլ հենց առաջին օրից կիրառականի յեանից էր վա-
 զել: Թող արուեստները, փիլիսոփայութիւնն ու մարդասի-
 բական այլ գիտութիւնները այլոց բաժին լինեն, խարբերչի-
 ցին կը կառչի գիտութիւններին, կը դառնայ բժիշկ, իրա-
 ւարան, ելեւմտագէտ, առեւտրական, բնագէտ կամ գիտու-
 բական: Խարբերչին օրրում է կազմակերպել ու առաջնոր-
 դել: Եթէ այսպէս շարունակուի, շուտով Ամերիկայի տըն-

անսութիւնը խորրեղցիների մենաշնորհը կը լինի :

Սակայն այլ է Սահակի պատմութիւնը :

Նա շէր յիշում իր ծնողներին : Աչք էր բացել ու իր բեղաւոր Հօրաքոյրին տեսել՝ խոշոր, բարի, խիստ ու խելացի մի կին, որը առանց մէկ բառ անգլերէն իմանալու, իր ձեռքն էր առել զսանական թուականների Ձէֆըրսոնի խոսյալունական թաղի բանջարեղէնի մեծաքանակ առուծախը : Ասենք, այդ օրերին բաղմազգի նորեկ տարադիրներից եւ ոչ մէկը կարգին անգլերէն խօսել չգիտէր : Ամէն օր, վաղ առաւօտեան Հօրքուր Իւղարերը իր սեւ ձեռնափայտին կը թնամած՝ կանգնում էր Մաքընթաշ շուկայի քարքարոտ հրապարակում, զննում սայլերով ու բեռնատար ինքնաշարժներով առաքուած նոր բերքը եւ հենց տեղի վրայ մէկկէց առնում, միւսին էր վաճառում ապրանքը՝ արագընթաց առուծախից մի շօշափելի շահոյթ ապահովելով իրեն : Հրաշալի սակարկել գիտէր Հօրքուր Իւղարերը : Ձեռքով-ոտքով էր խօսում, հայերէնն ու թուրքերէնը իրար խառնում, ձեռնափայտով սպառնալիքներ կարգում եւ դեռ արեւը չծաղած՝ տեսարկում արձանադրում էր տոկոսների ելեւէջը : Պատանի Սահակը բերանի չգոյ հրուշակը չփչփացնելով որոշում էր մարդ դառնալ, որոշել էր մարդ դառնալ :

- Ես որ մեծնամ նէ՛, խանութպան պիտի դառնամ :
- Դուս որ մեծնաս, փաստարան պիտի ըլլաս :
- Ի՞նչ է փաստարան :
- Փաստարան դատասաց է, վէճիլ, օրէնքի մարդ, որ Հայոց Գատը պաշտպանես :

Եւ Հօրքուր Իւղարերի շուքի տակ, նրան ապուինած՝ Սահակը շիմացաւ, թէ ինչպէս անցաւ իր մանկութիւնը : Փողոցներում լրագիր ծախեց, իրեն «Շորթի» անուանող տղաների հետ յաճախ ծեծկրուռքի մէջ մտաւ, այդ բոլորի արանքում միջնակարգը աւարտեց, եւ գիշերները Բիւքարնը փողոցի ճաշարանում աման լուանալով համալսարան գնաց, իրաւարան դարձաւ : Առաջին հերթին Սոսկալի Սահակը մի ձեռք սեւ հագուստ գնեց, փողկապ ու գլխարկ եւ Ձէֆըրսոնի ամէնից բանուկ անկիւնում բացեց իրաւարանական իր զրասնեակը՝ շէնքի ճակատից կախելով օսկետառ իր անլանատախտակը : Ամբողջ մէկ ամիս նա պարապ նստեց փայլուն դրասեղանի առջեւ, յաճախորդի սպասեց, եղունգները մաքրեց ու երազեց Ձէֆըրսոնի մօտակայ դաշտերի կանաչը, ուր լոյսին ու սմբուկը առանց օրէնսգրքի ու մարդակերտ կանոնների ծլում, ծաղկում ու պտղաւորում էին յուլիսեան կիզիչ արեւի տակ : Սակայն Ի՞նչ է պատահել այս քաղաքին : Մի՞թէ ամուսնալուծութիւն, կռիւ, խարդախութիւն չկայ, իսկ եթէ դատ ու դատաստան կայ, հասա ինչո՞ւ իրեն չեն գիտնում : Մի օր էլ հեռախօսը զնկաց : Երջանային դատաւորն էր : Մարտիրոս Պապադոպուլոս անունով մի յոյն շոտլանդացու գլուխ էր ջարդել՝ նրան զկեղտոտ օտարականն անուանած լինելու համար : Իրօք որ շոտլանդացու գլուխը վատ վիճակի մէջ էր : Սպիտակ փաթթոց-

ների տակից հազիւ էին երեւում նրա աչքերը: Սոսկալի Սա-
հակը իր հանդուցեալ հօրաքոյրի ներկայացրած բազում
փաստերով զինուած, ինչպէս նաեւ յենուած օրէնսդիտական
իւր ահազին տեսութիւնների վրայ, մի ամբողջ ժամ ատեա-
նին դասախօսեց հայոց պատմութեան հիմնական փուլերի
մասին, ժողովուրդների իրաւունքների մասին, հայ եւ յոյն
ժողովուրդների զուգահեռ ճակատագրերի մասին, եւ դատը
տանուէլ տուեց: Յոյնն ու շոտլանդացին մանկան պէս հե-
կեկում էին: Դատարանի հրապարակում Սոսկալի Սահակը
բռնեց ամբաստանողի եւ ամբաստանեալի ձեռքերը, միմ-
եանց միացրեց, ծոցից դրամապանակը հունեց, իր մօտ ե-
ղած ամբողջ դրամազուխը հաւասար բաժանեց նրանց մի-
ջեւ, ապա թեթեւ սրտով վերադարձաւ գրասենեակ: Հա-
ղիւ կէտօր էր: Սոսկալի Սահակը ելարանը դբաւ, բարձրա-
ցաւ, ոսկեզօծ ցուցանակը սալալատակին նետեց, իջաւ,
ջարդուփչուր արեց անուանատխտուկը, բեկորները դամ-
բիւղը դցեց, ափերի փոշին թափ տուեց, զլուխն առաւ ու
զնաց:

Այդպիսով սկսուեց ու վերջ գտաւ Սոսկալի Սահակի
իրաւարանական ասպարէզը:

և

Սոսկալի Սահակի սիրտը հողի հետ էր:
Փալիս, ասում էին, թէ չի՛ լինի, որ անհնար է, որ
Ջէֆրըսոնի կիսախնաւ կլիմայական պայմաններում սեխը
չի՛ հասնի, չի՛ քաղցրանայ: Երէց փորձառու հողագործները
կռանում էին, հողը տրորում իրենց ափերի մէջ, քթների
տանում, հոտտում եւ գլուխները շարժում: Սակայն Սո-
կալի Սահակը արդէն որոշել էր: Ջէֆրըսոնից հարաւ, Նան-
կուանա գետից մի տասնը՛հինգ կիլոմետր հեռաւորութեան
վրայ տարածւում էին դաշտերը, որոնք թէեւ չէին կարող
չափուել Կալիֆորնիայի Սան Հոսաքին կամ Իմփերիալ հո-
վիտների արգասաբեր հողերի հետ, սակայն ըստ գիւղա-
տնտեսութեան նախարարութեան նահանգային դիտահետա-
զօտական բաժանմունքի տուեաների, հարուստ էին պլուտա-
նով եւ բնական պարտաացուցիչներով: Այս փաստերով գօ-
տեպնուած, եւ առաւել՝ իր յամառութեանը ապաւինած՝
Սոսկալի Սահակը իր եւ հօրքուրի տարիների խնայած գու-
մարը դրեց հողի վրայ: Ամէն օր, դեռ արեւը չձագած՝ նա
բեռնատարը քլում էր քաղաքի հին թաղամասով, գէսից-
դէնից հաւաքում գործազուրկ նորեկ տարագիրների, ան-
հանգրուան դատարկապորտների ու մանաղէտ խմանների,
եւ աշխատանքի անցնում: Արիւն ու քրտինք մտած՝ աշխա-
տում էր եւ աշխատեցնում այլոց: Հերիկցին աւազախառն
սեւ հողը, ահօսներ բացեցին, առուններ ճեղքեցին եւ Պարո-
կաստանից ու Աւղանատանից բերած սերմը ցանեցին ու ըս-
պասեցին: Այդ տարի, Սոսկալի Սահակի բախտից արեղակը
էկաւ ու ամբողջ Յուլիսին նստեց դաշտի վրայ, մտաւ հո-

դի ընդերքը եւ հրաշք գործեց: Բերքը այնքան առատ էր, որ յաջորդ տարի նա ընդարձակեց սեխի մշակոյթը եւ սկսեց գիւղատնտեսութիւնը արդիւնարեւութեան վերածել, առաջին հերթին մեքենայացնելով ամբողջ գործը: Հինգ տարի շանցած՝ Սոսկալի Սահակի «Արմենիա» պիտակով սեխը ամէնից շատ փնտուռած պտուղներից մէկն էր ամերիկեան շուկայում:

Հանգիստ չունէր Սոսկալի Սահակը: Եարուենակ շարժման մէջ էր: Եարուենակ թղաւում էր, կարգադրում, հայհոյում, հեռախօսային կարելուր խօսակցութիւնը ընդհատում, մտնում հողհան մեքենայի տակ, գլանները քահում, իւզում, մի պահ յետոյ գնացքավարի հետ վէճի բռնում, յետոյ ցատկում ինքնաշարժի մէջ եւ զնգակի արագութեամբ սուրում գալտերի երկայնքով, նորից իջնուլով, նորից բղաւելով եւ նորանոր կարգադրութիւններ աւնելով: Նա ութ հատ ինքնաշարժ ունէր, ութն էլ յարատեւ նորագութեան ենթակայ: Նա ինքնաշարժը չէր վարում, այլ արարական նժոյշի պէս վազեցնում էր քաղաքից դուրս, դաշտից մօտակայ գաւառանիստ կենտրոնը եւ ապա՝ Աստուած գիտէ ո՛ւր: Երբ նանկուանա գետի կամուրջը խճողում էր լինում, Սոսկալի Սահակը արագացնում էր մեքենայի թափը եւ ուղղակի դետը ճեղքելով միւս ափն էր դուրս գալիս, երբեմն մինչեւ կուրծքը ընկզմուած տղմուտ ջրի մէջ: Մի անգամ, նման արկածախնդրութեան ժամանակ, մեքենայի շարժիչը մարեց եւ նոր լինէրնը վիթխարի կրիայի պէս նստեց ու խելօք իջաւ ջրի տակ՝ ահապին պղպշակներ դուրս տալով: Սոսկալի Սահակը մի կերպ մաքառելով դուրս ելաւ գետափի եւ մի լաւ հայհոյեց Ծորդ ինքնաշարժարդիւնարեւական ընկերութեանը, որ այդպիսի յիմարբան է փաթթել իր գլխին:

Նրան շճանաչողները պիտի կարծէին, որ նա վայելում է ոստիկանական վարչութեան պատուոյ ուղեկցութիւնը: Գրեթէ միշտ նրա ինքնաշարժի առջեւից կամ յետեւից սուրում էր քստիկանական մեքենան՝ սոսկալի ահազանգ հնչեցնելով: Պատճառը շատ պարզ էր: Սոսկալի Սահակը կամ կարժիր լոյսին կանգ չէր առել, կամ սահմանուած արտագութիւնն էր խախտել եւ կամ, ով գիտէ, ի՞նչ օրինազանցութիւն էր արել: Նրա տուգանագների գումարով չորս հոգուց կազմուած մի ընտանիք կարող էր առօր-փառօր ապրել: Այդ բոլորով հանդերձ, խիստ ժլատի համբաւ էր հանել Սոսկալի Սահակը: Վատնում չէր սիրում: Չէր կարողանում հանդուրժել, երբ պտղաքաղը սխալմամբ խակ սեխը պոկելով նետում էր աղբարկղ: «Մօ, հայվաններ, - աղաղակում էր նա՝ անգլերէնին հայերէն ու թուրքերէն բառեր խառնելով, - շաբաթներ է տեսել մինչեւ որ սերմը կեանք է ստացել, իսկ դուք վերցնում, փչացնում էք այդ կեանքը»: Խնայում էր ամէն ինչ եւ խնայողութիւն պարտագրում էր շրջապատին: Աշխատավարձի դիմաց արգար աշխատանք էր պահանջում, իսկ ամէնից շատ՝ ինքն էր աշ-

խատում: Նա նոյնիսկ ինչպում էր էլեկտրական լոյսը, երբ քարտուղարուհիները օրը ցերեկով «հրավառութիւն էին կազմակերպում»: Մէկ առ մէկ շրջում էր դրասենեակներում եւ մարում անտեղի վառուող լոյսերը: Ու սակայն այդ նոյն մարդը թաքուն ու անաղճուկ տասնեակաւոր հայ եւ այլազգի ընտանիքների էր օգնութեան հասնում, յիսուելից աւելի հայ որբեր պահում էր Էրբանում, եւ պարբերաբար իր լուման մուծում հայ բարեսիրական ու կրթական հաստատութիւնների գանձարկղը: Իսկ եթէ Եաբաթ իրիկունները հետեւէիք նրան, ապա կը տեսնէիք, թէ ինչպէս գլը պանները թղթադրամով լցած նա ման էր գալիս Ձէֆրատնի հայկական հին թաղամասում եւ իր վաստակածից բաժին հանում նոր տարազիւններին, անզորձ հայրենակիցներին եւ չքաւոր ընտանիքներին:

Երբ Վերմենիայ սեխարդիւնաբերական սունը իր առաջին տասնամեակը բուրեց, եւ երբ միանգամայն արդիականացուեց գործառնութիւնը, եւ, յատկապէս, երբ Վեխլանթիկ անդ Պատիֆիկ ընկերութիւնը իր երկաթուղին մինչեւ նրա դաշտերը տարածեց, Սոսկալի Սահակը ամուսնացաւ Թարբերդի Եփրատ ճեմարանի նախկին տեսուչ՝ Արիստակէս Եմաունեանի դստեր՝ Հեղինէի հետ: Հրաշալի կին էր Տիկին Հեղինէն: Բարի, կիրթ ու վսեմուշ: Մի որոշ ժամանակ Սոսկալի Սահակի կեանքը բնականոն հունի մէջ մտաւ: Առաջին անգամը, երկար տարիներից ի վեր, նա նոր հագուստներ դնեց, սովորեց նախաճաշի նստել, հիւր գնալ, հիւր ընդունել, Տլորբիդա այցելել, ինչպէս այդ անում էին մեծահարուստները: Իր գրասէր կնոջից յետ շմաւու համար ինքն էլ մի կերպ, պարտադրաբար, ընթերցանութեամբ զբաղուեց, զրբեր դնեց եւ զրակաները լցրեց, սակայն գլը նոց-եկաւ ու Համաստեղից քացի ոչ ոքի չհաւանեց: Համաստեղը իր մարդն էր, իր աշխարհը, գիտէր հողը ու հողի երգը: Յետոյ Համաստեղը իրենցից էր՝ խարբերոյցի: Տիկին Հեղինէի ստեղծած մշակութային մթնոլորտը մի որոշ ժամանակ, եթէ ոչ յղեց, գոնէ զսպեց Սոսկալի Սահակին, որը մերթ ընդ մերթ թեթեւ նուաղում էր ունենում: Երկաթ էլ լինէր՝ չէր դիմանայ նրա յարաշարժ յորձանքին:

- Սահակ, ինչո՞ւ կը պոռաս, հանգարտ չե՞ս կրնար խօսիլ:

- Ես չե՛մ պոռար...
- Սակայն ճիշդ այս պահուն ալ կը պոռաս:
- Որ չպոռամ ինչ ընեմ: Սա փեւաւանգի լակոտները մոռցեր են ջրանցքը բանալ: Վաղը տունկերը պիտի չորնան եւ քարին պիտի նստինք:
- Որ տունկերը չորնան, նորէն կրնաս ցանել, սակայն ամէնէն կարելոքը քու առողջութիւնդ է:
- Ի՞մ առողջութիւնս միշտ ալ լաւ եղած է:
- Նորէն կը պոռաս, եւալքում:
- Ի՞նչ ընեմ, պոռալով ծնած եմ: Ատիկա իմ բնութիւնս է:

Երկար շտեկից Սոսկալի Սահակի վերակրթումը: Աճումնութեան տարին շրջացած՝ մէկ կողմ նետեց նոր Հագուստներն ու ոսկեթել փողկապը, Հին շորերը Հագաւ, սիւզարն առաւ աստամների արանքում, եւ գլխաբաց կանդնեց դաշտի պտուղին: Երջանիկ էր, որ ձերբազատուել էր պաճուճանքներից, երջանիկ, որ Հեղինէն իր կիճն է, իր տունն ու սէրը, որ կայ մէկն աշխարհում, որ գուրգուրում է իրեն: Դիմացում կանաչ ծփուն ծով էր: Դաշտից նոր ծիլերի բուրմունքն էր բարձրանում: Եռտուով պտուղը կը Հասնի, եւ կը վերադառնան արեւից խանձուած մեքսիկացիները: Ամէն օր, Սոսկալի Սահակը կանգնում էր դաշտի եզրին, Հողի խրտումը զգում իր Հոգում, իր արեան մէջ: Նա տեսնում էր ծիլերի ծլարձակումը: Եւ յանկարծ դառնում էր մեքենաների նորոգման բաժանմունքում աշխատող խարտեաշ պատանուն եւ գոռում:

– Ե՛՛՛՛ Բնարխանաչի, մուրճը այդպէս չեն բռներ:

Եւ ամէն ինչ մոռացած, մուրճը առնում էր պատանու ձեռքից, կռում երկաթէ օղակը, խարտում, սղոցում, իւզում դլանը, անուաղողը անցկացնում եւ սեւացած ձեռքերով ճակատի քրտինքը մաքրում: «Ա՛հա, եղաւ»:



«Արմենիա» դաշտում սեխը Հասել, Հասունութիւնից ճաքել էր:

Սեխով լցուել էին արկղաւորման դործարանի շտեմարանները: Քաղաւած սեխի բուրգեր էին դոյացել դաշտի աճէն անկիւնում: Սեխը կուտակուել էր քաղհան տասնեակ մեքենաների մեծ տարաններում, բեռնատար ինքնաշարժների մէջքին, նոյնիսկ դրասնենակներն ու կառատները վըխտում էին սեխի տարրեր մեծութեան արկղերով: Տեղական մամուլն ու տեղեկատուութեան միջոցները «Սեխի պատերազմ» վերնագրերով լուրեր էին Հաղորդում եւ զանազան դուշակութիւններ կատարում: Եթէ մի-երկու օրից սառցարան-վազոններով չփոխադրուէր բերքը, ապա սնանկութեան շեմին պիտի կանգնէր Սոսկալի Սահակը: Ծակատազրական գրոհին նախորդող օրուայ յատուկ յուզում էր ախրում սեխաստանում: Աւելի քան Հինգ Հարիւր աշխատուորներն ու պտղաքաղները քաջ գիտենալով Սոսկալի Սահակին, դործ ու գրադմունք էին հնարում՝ առերեւոյթ բնականոն ընթացք տալով իրերին: Սակայն ներքին լարումը ակնյայտ էր նըրանց շարժումներում ու զէմքերի վրայ: Շչուկ կար, թէ դործաւորները ծրագրում էին Հրդեհել բեռնատար զնացքը: «Աթլանթիկ անդ Պասիֆիկ» ընկերութեան ներկայացուցիչները այլեւս չէին Համարձակում ոտք դնել «Արմենիա» կայսրութեան սահմանները, եւ Հեռախօսով էին շարունակում իրենց ապարդիւն բանակցութիւնները:

Անդրդուելի էր Սոսկալի Սահակը:

Ատանձնացել էր իր գրասենեակում: Կանգնել էր մե-

Ծաղիր պատուհանի առջև եւ հեռունները դիտում: Դաշտի
ամէն մի բուս հողին իր քրտինքն էր խառնել: Առեւտուրից
առաւել սիրել էր հողը, հողի բոյրն ու սերմի խորհուրդը:
Եթէ սոսկ մի հողագործ լինէր, նորից նոյն երանութիւնը
պիտի զգար՝ ի տես հունտի ծլարձակման: Իր համար կա-
րեւորը աշխատանքն է հղել, բերքի բարեբը: Մի պահ նրա
հայտնիքը կարուեց հեռուններից եւ ապակու մէջ նա տեսաւ
իր մարմնի արտացոլումը: Խորշոմել էր դէմքը, թորշոմել
վիզը՝ ինչպէս հնդկահաւի պարանոց, աչքերի փայլը կորել
եւ պղտոր լոյսեր էին իջել աջտեղ: Դեռ երէկ էր կարծես,
էր իրաւաբանի իր սեւ հագուստով բրինջ վերցրել եւ ակօս
էր փորում, այն օրերին հարկեր չէ, հազար հեկտար հողն
էլ կարող էր միայնակը հերկել, իսկ հիմա անտանի յողնու-
թիւնը եկել, պատուարել էր նրա մարմնի ամէն մի բլի-
ջում: Այդ ինչպէս արագ անցան տարիները, այնքան դադ-
ւած է հղել, որ ժամանակ չի ունեցել անդադաւանալու,
չափելու երեւոյթների խորքը, մտածելու կեանքի մասին:
Սոսկալի Սահակը չսիրեց իր կրճի յարատեւ հեւքը, աւելի
մօտեցաւ լուսամուտին եւ հապճեպով փակեց իր բերանը,
որն այդ պահին ոչխարային, ողորմելի տեսք էր ընդունել:
Նա ակամայից թեւով մաքրեց ապակին՝ չէզոքացնելու հա-
մար պէշ-պէշ իրեն նայող անծանօթին: Ո՛չ, ո՛չ, անհեթեթ
կրկնեւեւոյթ է եղածը, իր ներսում, իր մարմնի տակ ինքը
դեռ վառվառն երիտասարդ է, ամա՛ռ, ամա՛ռ, վաղը կը
դնայ իր փողոցի մանուկների հետ կրկին բէյբուր կը խա-
ղայ, ինչպէս այդ անուս է ամէն Կիրակի առաւօտ, այնքան
զարուներ ունի կուտակած սրտում, որ կարող է բոլորին
բաժանել, իսկ ամէնից զմբուխը տանել ու փռել Հեղինէի
ոտքերի տակ, միայն թէ՛ Աստուած մի զաւակ ընծայէր,
որ տունը լցուէր ճիչ ու խինդով, որ հեղհեղ ծանրացող
օրերը թեթեւանային դոյնըդոյն փետուրի պէս: Սոսկալի
Սահակը աշխուժով չփչփացրեց բերանը: Թուքը կուլ չէր
դնում: Անկրեւոյթ ձեռքեր ողակել էին նրա կողորդը: Ներ-
քին ցաւից ծամածուռեց նրա դէմքը՝ ստանալով գոտամեակ
մտնկան արտայայտութիւն: Նա ապակու մէջ յստակօրէն
տեսաւ արցունքի խոշոր կաթիլը, որը պայթեց ու թրջեց
նրա այտը:

- Ծան լակոտ, խենթեցա՞ր, ի՞նչ է, - բարձրաձայն ինքն
իրեն կշտամբեց նա, դարձաւ ու ամբողջ ուժով սեղմեց հե-
ւախօսին կից քառակուսի տուփի բոլոր կոնակները: Գրա-
սենեակի դռները միանգամից բացուեցին եւ յարակից բա-
ժանմունքներից մէկը միւսի յետեւից ներս խուժեցին քար-
տուղարուհիները:

- Կապուէ՛ք Ձե՛քըրսոնի եւ Ամերիկայի հայկական բո-
լոր կենտրոնների հետ եւ յայտնէք, որ 50 բեռ սեխ է ուղար-
կուում իրենց՝ Հասոյթը տեղական դպրոցներին ու ազգային
Հաստատութիւններին: 10 բեռնատար ուղարկել Բոստոնի,
Քէյփ Քալի, Դիթրոյտի, Լոս Անջելոսի ու Ֆիլադելֆիայի
հայկական ճամբարներին՝ մանուկների ու պատանիների

Համար: 10 բեռ էլ ՁէՖըրսոնի Մանկական Հիւանդանոցին: Էլ ինչո՞ւ էք սպասում, անմիջապէ՛ս, զործի՛:

Քարտուղարուհիները մի պահ շճմած միմեանց երես էին նայում, երբ Սոսկալի Սահակը հեռախօսի ընկալուչը վերցրեց ու կապուեց ՁէՖըրսոնի «Ճիմիք» փոխադրական խոչորապոյն ընկերութեան հետ եւ առանց նախաբանի բղաւեց:

- Քանի՞ բեռնատար ունէք:
- Ա՛հ, զո՞ւք էք, մըստըը Սահակ, ձեր ձայնից ճանաչեցի:

- Այո՛, քանի՞ բեռնատար, նախընտրաբար սառցարանով օժտուած:

- Մի վայրկեան, մըստըը Սահակ, - պատասխանեց փոխադրական բաժնի վարիչը, - շարաթափերջ լինելով բեռնատարների մեծ մասը նորոգութեան է ենթարկուում: Մինչև վաղը, մեզ կարող ենք տրամադրել 70ից 100 մեքենայ:

- Մինչև մէկ ժամ ինձ Հարկաւոր է 150 բեռնատար:

- Անկարելի է, մըստըը Սահակ:

- Կարելի՞ դարձրէք: Մինչև մէկ ժամ:

- Մեր լաւադոյնը կ'անենք:

- Մինչև մէկ ժամ, լսեցի՞ք:

- Այո, անպատճառ, մըստըը Սահակ:

Սոսկալի Սահակը մի քանի անգամ բերանի չզոյ հրուշակը ծծեց, ապա՝ բարձրախօսի կտուցը յափշտակելով կարկուտի պէս հրահանգներ տեղաց իր օգնականներին գլխին: Որեւէ միջոցով գտնել 50 բեռնատար, իւրաքանչիւր բեռը նուազագոյնը երեք հազար դոլար: Հասոյթի կէսը որպէս նուէր Հաւասարապէս բաժանել «Արմենիա» ձեռնարկութեան աշխատակորներին միջեւ, միւս կէսը՝ 75,000 դոլար, յատկացնել ՁէՖըրսոնի Հայոց Մշակութային Տանը: Հիմնական խնդիրները կարգադրելուց յետոյ, Սոսկալի Սահակը հեռախօսով կապուեց ՁէՖըրսոնի Հայոց Համայնքի ղեկավարներից Գոնսուլ Առաքելի ու Իշխան Փիլիպոսի հետ: Վաղը՝ Ծաբաթ, քաղաքի բոլոր հայերը հրաւիրուում են «Արմենիա» սեխահանդէսի, այսինքն՝ ով ի՞նչ քանակութեամբ որ կարող է սեխ կրել ու տուն տանել, իր արգար բաժինն է, թող դան ոտքով ու ինքնաշարժով, բեռնատարով ու եթէ կ'ուզեն, օդանավով, միայն թէ՛՝ գա՛ն ու ազատեն իրեն լեռնացած Հասուն սեխի մղձաւանջից:

Սոսկալի Սահակը իր տարերքի մէջ էր:

Բարձրացել էր սեխի արկղի վրայ, ձայնը դուրսը դցել եւ կարդադրութիւններ տնում՝ ինչպէս օրհասական ճակատամարտին պատրաստուող զօրավար: Աշխատակորներին, ըստ իրենց մասնագիտութեան, բաժանեց ջոկատների՝ իւրաքանչիւրին յանձնարարելով իր պարտականութիւնը: Կարելորդ արագութիւնն է: Պիտի աշխատել մինչև Երկուշաբթի շուկայ հասցնել բերքը՝ հասունը մօտակայ քաղաքները, իսկ կիսահասունը՝ Բոստոն, Շիքագօ ու Լոս Անջելոս: Նապոլէոնի նման նա իր զինուորականների բոլորի անուաններն

էլ դիտէր:

- Պեղրո՛, դու ստանձնիր բեռնաւորման գործը:
- Չարլի՛, ստուգիր մեքենաները:
- Բարսեղ՛, քեզ է յանձնուած փոխադրաբան աշխատանքը:
- Անտոնիո՛, քեզ եմ թողնում արկղաւորումը:
- Նիկո՛ս, դու վերահասու եղիր ցանքատարածութիւններին:

Եւ դեռ Ալֆրէդ՝ ա՛յս, Կարօ՝ ա՛յն, Քէնէթ, Արդուէ, Մայքըլ... Տարատը կախ, կլոր փորը ղուրս ցցած, հեւասպառ ու փոշեթաթախ՝ նա դեղակի պէս գլորում էր մէկ աջ, մէկ ձախ, մէկ առ մէկ աջացի տալիս բեռնատարներին անուազողներին, յայտնի չէ անիւների կ'նշը ստուգելու, յետոյ դառնում էր պտղաքաղների որպիսութիւնը հարցնում, քաջալերում, սիգարը վառում եւ ծուխը ախորժակով ներս քաշում: «Մենք երկաթուղային բնկերութեան հէրը կ'անիծենք»:

Մէկ ժամ շանցած՝ բանակատեղիի էր վերածուել Վերմոնտին: Սահայն ետուզեւր փեթակային էր, կանոնաւոր, վերահսկուած: Ամէն ոք աշխատում էր: Դատարկ բեռնատար ինքնաշարժները գալիս, բարձոււմ էին սեխի արկղերով, ճանապարհուած դէպի Ջէֆրրոն, դէպի Ամերիկայի մօտաւոր ու հեռաւոր կենտրոններ: Ինչպէս միշտ, Մոսկալի Սահայր ամէն տեղ էր, հասնում էր, օգնում, բղաւում, հայտնում, կատակում, ապա սեւ մէրսէրը հեծած՝ արշաւում դէպի զաշտի երկայնքը՝ ճանապարհին կանգ առնելով ու զրկելով իրենց ծնողների հետ թոշուորումը մեքսիկացի մանուկներին: Մանուկները սիրում էին նրան: Գիտէին: Նրանց միջեւ դաշնը անմիջական էր: Կարծում էին, թէ նա էլ մտնուկ է: Մանուկների հետ նա վերադրում էր այն՝ ինչ չէր ապրել: Այս անգամ նա շարունակեց Հոգոտ ճանապարհը, արազացրեց թափը եւ հետզհետէ հորիզոնը բացուեց, կրկին մնալով անհասանելի: Ամէնուր մշակուած ամառութիւն, ուր անվերջ ամուսնեքը վայրկեանբար շաւղանում, խելակորոյս փախչում էին, վերստին զոյանալով նրա տեսողութեան զաշտում: Արագութիւնը նրան հանդրատացնում էր, ահա մեքենան պիտի պոկուէր Հողից, ճախրէր վեր, վե՛ր՝ դէպի անհունը: Յանկարծ նա սկսեց աղաղակել, երգել, վայրենի ճշոցներ արձակել՝ է՛լ աւելի սուտը կառչելով դեկին: Նա այլեւս աչքերը փակել ու սաւառնում էր իր չապրած օրերի անդարձ ծիրում: «Ձեր բոլորի...», հայտնեց նա՝ ինքն էլ չիմանալով, թէ ում հասցէին էին դնում թէ՛ խօսքերը: Սեխտատանի զոյները փոխւեցին: Հասել էր երրորդ ցանքատարածութիւններին, ուր նորածիլ տունկերը վաղ սուսուտեան կուշտ ջրում լինելով՝ ծիծաղում էին կապուտակ երկնքին: Ըստ իր սովորութիւնան, նա ամուր սեղմեց արգելակը, մէքսիկէսը սուր վայնասուն բարձրացրեց, անիւները քերեցին Հողը, մի անգամ եւս մոնչաց մեքենան, ապա մեխի պէս կանգնեց՝ փո-

չու թանձր ամպ առաջացնելով: Մի քանի վայրկեան, նա անշարժ մնաց իր տեղում: Եունչը կտրոււմ էր, ասես, արծիճէ սալ էին դրել կրծքին: Յետոյ՝ մէկը լանկոնց նրա սիրտը: Աջ ձեռքով տորոնց սիրտը: Ուրիշ, ապուշութիւն է, անցաւ նրա մտքով: Ի՞նչաւ նստարանից, շորս դին նայեց: Հարթ, կանաչաւէտ տարածութիւնը ծփում էր յետմիջօրէի թարփում: Դարձաւ հիւսիս: Հեռուում, քառակուսի, դեղին մրջիւնների պէս դանդաղ շարժում էին բեռնատարները, մարդիկ ստորակէտերի էին վերածուել: Աստուած մեծ է, երկրորդ բերքը կը հասնի շուտով եւ կը սոսի առջինի բացը: Իսկ դեռ կայ երրորդը, իր նախասիրածը: Սոված չինք մնայ: Ահա այստեղ էր, որ առաջին անգամ նստեց ու ակնածանքով դիտեց անմշակ դաշտերի խորհրդաւոր լուսթիւնը, տաճար լինէր կարծես՝ խորանը երկնքում: Այդ տարօրինակ նոյն զգացումը համակեց նրան նաեւ այժմ, երբ Հողակոյտին նստած՝ դժուարաւ էր շնչում: Զխմացաւ ինչու արեւը բացեց ու զննեց նրանց կոշտ դժերը: Աշխատեց վանել միտքը: Մտալուտի հաւանականութիւնը ցնցեց նրա ողջ էութիւնը: Դէմքը վեր տնկեց՝ մի պատառ օդ առնելու համար: Զի՛ կարող պատահել, դեռ նոր է սկսում ամէն ինչ, մինչ այժմ եղածը միայն նախասկիզբն է, ամէն ինչ արեւ է վաղուայ համար, իսկ վաղը տակաւին պիտի դայ, շէ՞ որ Հեղինէն սպասում է, թուրն են սպասում, դեռ այնքան սպիտակ օրեր կան, այնքան անելիք, գուցէ, ո՞վ դիտէ, գուցէ նոյնիսկ, եթէ Աստուած կամենայ... Նա ձեռքը զրաւ հողին եւ պարզորոշ զգաց հողի շունչը, ջերմ, խոնաւ հողի շունչը, նա նոյնիսկ լսեց հողի շունչը, նախ՝ որպէս խուլ տնքոց, ապա՝ աստիճանաբար, ինչպէս միապաղաղ շարական, որի կապոյտ թրթիռների մէջ լողացել էր իր մանկութիւնը: Նրան թոււմ էր, թէ իր պատանուութիւնը շարունակուում է, եւ ո՛ւր որ է, Հիմա քր ներկայ պատեանի միջից դուրս պիտի քայլի իր անթաւամ երիտասարդութիւնը եւ ծխածաններ պիտի վար բերի երկնքից: Գրտինքի մէջ լողում էր նրա մարմինը, սակայն քրտինքը սառն էր, ծանր, անվաստակ: Սոսկայի Սահակը ճիգ արաւ, ոտքի կանգնեց, ձեռքերը տարածեց ու ամբողջ ուժով ազադակեց: Ու մինչ գազանային ոտնոցը շարունակում էր, նա դիւահար մի քանի քայլ առաջ վազեց, դանդաղեց, երեքայ, խոնարհուեց ու երեսն ի վար փոռեց նոր ծիւրի վրայ՝ խորտակելով խնամուած ածուն: Նա մի անգամ ձախ աչքը բացեց: Երկնքի սպիտակ կապոյտը խուժեց ներս, բեկուեց, դարձաւ կիսակամար, ապա աշխարհը սասեց, կուշ եկաւ նրա բիրբի մէջ:

ՄԵՐ ՄԱՅՐԵՐԸ

Մայրերու հետճճ: Ո՞րն է վեպը, որ կայծ-
նար եւստասարի հեղի:

Յ. ՕՇԱՎԱՆ

163-42572

Այսօր մայրերու սիրո է, մայրերու սով՝
աշխարհի բազում երկիրներու մէջ, բազում ժո-
ղովուրդներու համար, բայց մենք այդ սովորոյթին
հետեւելու մտքով մը չկազմեցինք հետապայ հե-
ղքը: Եղանք պարզապէս զուգարկուութիւն է:
Պարզապէս այս անուսն կարելի կազմեզ քով
քովի բերել ասանմեակներու ընթացքին հաս կամ
հոն հնչ մը անմուտ մեր բանաստեղծներուն ու
զրազեաներուն մեանք ասան մայրերուն նկար-
ները եւ անոնց մասին արգելներուն գրի ասան
սպրումները:

Կը խորհնք, թէ այս մէկտեղուց անկաս
պիտի շահեցի եւ ընթերցողը կրտստազիտութեամբ
պիտի նայի բացառիկ հակներու մուտք ասան
հայ մայրերու այս շարքին, ու մ'ի նրակին, որ
որգիները մայրական զգայութիւններու ծովին
սանկելով հոսեցուցին մեր զարուսթեան անկերուն:

Մեր զեղային խառնուածքին գանի մը բնորոշ
զինքը ու պատմական նահատարքին կապուած
շարք մը յազումներ բանտ զրութիւններ են որդ-
ւոց թուղթերը, ուր, ի զէմ մայրերուն՝ ան-
նաւարտան են մեր ասանգապալտութիւնը (Մեծա-
բնից), կարտի թափիքը (Չարուսթեան), կեանքը
վերանուստեկու կամքը (Միամանթո), զուհրե-
րութիւնը (Սեւակ), մոր ու մայր հոգին հաւա-
սարազոր ուժը (Շիրազ), եւ այլն:

Մեր մայր՛քը:

Կեանքի ո՞ր մարզին վրայ վեպական իրազոր-
նումներ չեն կապուած անոնց շուշին, ընծայա-
րերուց սպիկն, մասնակցութեան շտաշ կամքին:

Մեր բանաստեղծներին ու զրազեաներին շա-



ՐԱՏՅԻՒ ՄԱՅՐԸ

անքը երզան են ու պատկերացուցան իրենց սերը
իրենց մայրերուն հանգչու, շիրթուաններ ձեռան
են անոնց, երբեմն անբաղ շատորներ: Ամէնում
ձանթ է 50 հարաք ապաւանակով յայտ անտան
Շիրազի զՅուշարձան մայրիկիս հաւաքածան,
իսկ Շիրազին ասան Ռիկեթ Մարտիան ՎՄարզ-
կային կատաներգութիւնն անուն իր համբաւա-
րեր հատարը նուիրեց իր թագուհի մոր թագուհի
Մարտիանին, զիրքին ասանին էլը բանուղով անոր
ուզուած աս արատու ձեռնով:

Երկար ժամանակէ ի վեր կը պատրաստուէի
գրել Վեպ մը յատկապէս հեզի նաւար եւ կ'ուզէի,
որ անկիս ըլլար լաւ Վեպ մը. լաւագոյնը, գոր
կրելուցէ կրծայի գրել: Եւ այժմ, վերջապէս,
հիշ մը շտապելով, գրեցի գայն: Կրծայի երկար
պատել, շտաշ արովկեանս զձուար է գրուակել,
բէ ինչ կը պատանի վազը, կամ ինչ շնորհ ու
արամազարարիւն կը մնայ այս բարբեճ նախ, ա-



ԹՈՒՄԱՆՆԵԱՆԻ ՄԱՅՐԸ

Ճագարեցի ֆիչ մը եւ փարձեցի գրել իմ այժմեան ճաշկով ու տրամադրութեամբ:

«Յայտ ունիմ, որ շուտով շնորհալի մարդ մը հայերէնի կը բարգւաճէ այս վեպը եւ ամիկա կը տպագրուի քա լաւ ճանչցած տակերով: Թարգմանումս վիճակով բերնու տակի լաւ կարգացուի. քան անգլերէնով, եւ դուն, ինչպէս յաճախ պատուած է, զուցէ ուզես անկէ որոշ մասեր կարգալ ինծի:

«Այն տունն, կը խուսանամ ունկնդրել ճեզ ու սփանջանալ մեր լեզուին գեղեցկութեամբ, որ այճեմն ֆիչ ծածօք է ուրիշներում եւ գոր ճեզմէ բարձր ոչ ոք կրնայ գնահատել: Եւ որովհետեւ զուն չես կրնար անգլերէն կարգալ ու հիամալ, ինչպէս կը կարգա ու կը հիամա հայերէնով, եւ քանի որ ես չեմ կրնար կարգալ ու գրել հայերէն, ապա ուրեմն մեր յայտը կը դնեմ լաւ քարգումանիչի մը վրայ: Յամենայնդէպս, այս վեպը գրուած է ճեզի համարս:

Թարգմանութեան արհեստագործ՝ Մարտիանի ընդհանր կատարուեցաւ, Վարդկայի կատարուեցաւ թարգմանուեցաւ երկու անգամ, առաջինը Ա. Կեարքի կողմէ, 1943ին, Ամերիկայ, իսկ երկրորդը՝ Գրիգոր Քէլիչեանի կողմէ, 1950-ին, Հայաստան, քայքայ էր Կեղեցիկ ազուն անկէ Հասուններ կարգալ որդեգր Թարգմանի Մարտի

հանը, որմէ քարձր ոչ ոք կրնար գնահատել ճեր լեզուն:

Հետաքրքրական է նաեւ Պարոյր Սեւակի մօր կերպարը բնութագրող Սիւլվա Կարաուրիկեանի սա Հասուններ, որուն մէջ կարգի է տեսնել կենսագրութիւնն ու պատկերը բոլոր հայ մարտիան, ու զարմանալ ու հրճուել ի տես զբարախի այդ ցօղուններուն միջոցով կենեգ ասած զհրաշալի հասկերունն:

«Է՛նա վազուց ես ուզում էի բանաստեղծութիւն գրել Պարոյր Սեւակի մօր մասին: Ես ուզում էի բանաստեղծութեամբ իմաստաւորել այն՝ թէ ինչպէս փոքրամարմին, նարահարսի պէս մունջ ու խոնարհ այս կինը, որ ծնուել ու մեծացել է Հայաստանի փոքր ու անլատ Զանաւելի գիւղում, որ հիմա էլ հագնում է գիւղական, մինչեւ կրանկները համազ ծալեաւոր զգեստ ու բուրում է կաթով ու հողով, որ անմահօք ազամարդու եանգիպելիս զեռ բնագրով ձեռք տանում է քերթին ու բարձրացնում գարշագոյն գլխաշորի եզրը, թէ ինչպէս այս կինը ծնել ու մեծացրել է Պարոյր Սեւակը:—

«Հայաստանի ամենածամեակակից բանաստեղծին,

«20րդ դարի կուռքներն ու մտածողութիւնը իր մէջ հաւաքած բանաստեղծին,

«Խումաշխարհային ընդգրկումի մտածողին, «եայ լեզուի բոլոր հարստութիւնները, գայներն ու նրբանցանքը իր մէջ ամբարսլ՝ մերօրեայ անգուցական վարպետին»:

«Ես ուզում էի պատմել բարախի այդ կնոյ, այն ցօղունի մտին, որի միջոցով երաշալի հասկին՝ բանաստեղծ որդուն էր հաղորդուել իայրինի հողի աւիտն ու աւիշը, գարեքով կուտակած համեմուն ու լոյսը, ուզում էի պատմել զուարթ, կենսահաստատ իստեղծով, իմ ծաղկոյթի յաւերածական ուժն ու երիտասարդութիւնը հաւաստող հպարտութեամբ:

«Եւ տես չհասցրեցի»:

Որքան պիտի ուզէինք տեսնել ըլլալ Արտիանի մօր լուսանկարը, լուսանկարը Գուրբանի մօր, որ զաննուն ցու մ'ունէր, այն օնու ցար եւ էլի, էր զուկին անիտալ ճակատագրից գուշական Տէմիրճեպաշեանի մօր զիմանկարը, անիտալ միւս արտանկարին, Թարայի մօր զիմաստուերը, եւ տակաւին Պարեկը ալիսարճ բերած կնոյ զգեճը եւր», Ծառանեանի մօր եկարը, Կկարը Թոթովեցի զյամատ զանկրտաշ Մարգարիտ մօր, որ՝

«Ժպտում է մեր կապույտ լեռներից բարձրագույն արևի մթերից, սեռում եմ նրա ծամերը արևի շողերին խառնում եմ լուսնի եմ նրա շողերի ճայքը».

«Տուր քայքայից ինձ, մանուկ իմ, երգն իմ կողերի, ցնձա՛ գարնան մէջ, գարուն իմ ցնձագրն, վազիր բոց եւ դալար դաշտերում, իմ եղանակ քուտայր, սուրա՛ փրփրադէպ այի՛քների վրայ, ժպտա՛ ինձից ծծած կաթի մաքրութեամբ, զերմագին է աշխարհը, իմ գուռիս, իմ ծառ երկնայաց, իմ խնայարիւն, իմ սեր»:

Փնտրեցի՜նք, չգտա՛նք, չկա՛յ՝ Օշականի ժողովանկարը, կենդանութեան օրօք դժբախտ, բազմաշարքար, բազմախոց աչք մայրը, որ էր մահէն ոչ շատ ուշ երկնազած յարզանքը վայելից ամէնուն եւ զի՛ էր ետք քաջախառն ու մեծ եղաւ հայ մայրերու մեծութեան մէջ»:

Օշականի նկարագրութեամբ Օշականի ժողովրդ, լորս-հինգ որբուկներու հողով ծանրաբեռն աշխարհ,

«Որ պէտք չէ մեռնի, մտեր խորքով սպոց սիրոյն: Ան է պատճառը, որ այրիները կատարեն չարս կենդանի գործ, յոգնիլ չգրեանք աւ շտեխն, պարսկեն օտկատարքին ետրուածէն շաշախտանոց պատկանքը: Հիւս՛նք: Ան պէտք չէ ըլլայ: Պտակա՛ծ: Ան գործի վրայ, միշտ օտարի սուն, իրիկուր բերելու իր սպոց աման մը յետսու...»:

«Վէպ մը, անտանիս, անհետապէտ սքառուռ իմ երկրորդ մանուկները, որ աշխարհին բոլոր գրկանքները մամայիս բազուկներուն առնդովը կը վաճուէին ինձնէ: Վէպ մը անտանիս այն անպատանի տուգութիւնը, որ յորս-հինգ ֆէյթ բերաններուն համար հազի ազբուր մեծակայրին կայ: Եիմա կը խորհիմ՝ բերնու մանկամարդ: Եիմա կը խորհիմ՝ երթալայ հազարամէկ փարձաններու: Եիմա կը խորհիմ՝ ինքզինքս մառնալու իսկ անկարող, քանի որ մեր բազմապարտութիւնը ո՛չ միայն ետք կը բաշխէ իր ազգածին պէտ, այսինքն՝ անհուն յրբութեամբ, այլև իր ստորին կիբներուն յազարդ կը հետապնդէ ազգատանջան կարեկներուն ազգով»:

«Ո՛վ իմ մայրը: Ղուս ի՞նչ արցունք եղաք ինձի, շատ աւելի ետք, երբ քաղցիք մէկնիկ մէկնիկ այժիպ յուսերը ու անգրանցիկ գերեզմանին առջեւ: Եղա ուզեցիք իւր գլխուն...»:

Անգրանցիկ գերեզմանին առջեւ հո՛ւ ուզեցի գլխուն: Հո՛ւ ուզեցի: Այս ազգորք, զուկէն առաջ հող ինչնչու մայրական այս հողը ի՞նչը մեզի ծածկէ նաեւ ուրիշ պատկերով էր, իր անգրանցի-



ՊՅՈՒՆՔԱՆԻ ՄԱՅՐԸ

կը, եզրուարդ Պոյանանը հող դրած ժողովանկարով: Պոյանանի մանուկն շտապունքին, հարազատներուն ու խու՛ր մը բարեկամներու հետ գտնուցին նաեւ գերեզմանատուն: Մայրը, զուկէն զեւ թարմ հազարային վրայ ինչու, ու հողը ծածկով կ'ըլտէ ու կը կրկնէր.

— *Այստեղ մե՛ր անգն էր, հուրս՛ւմ, զան ի՞նչ դարձ անէկէր հոս, այստեղը մե՛ր անգն էր...*

Իր ժողը անցելով պաշտամունքի հասնող ազգունէն փրթան ազառակ էր անի նաեւ եղբորարիս ֆեյսմ բարեկան, արժանապատան՝ Ն. Զարեանի «Գաղտնիք» շարքին էջերուն: Վերահաս ազգուի նախորդին, Պոյան, «Ազատամարտչի խմբադրոսան մէջ, Վարսուհի, Սիմանթոյի, Վարդէսի ու Բարեկանի մասնակցերը, արժանապատկաններն ու մասնաւորութիւնները ուրումկարելէ ետք, Զարեան կ'առաջարկէ վերջինին.

- *Երբանէ իրրա մը խմէ՛ք:*
- *Խմե՛ք... Դուն ե՛րբ պիտի մեկնես:*
- *Վազը, միւս օրը... Չեմ գիտեր: Արտասիրին պէտք է աննիլ:*
- *Դժուար քէ սամ: Փարձէ... Եւ անցողիք իսկ աննիւայի, պիտի չկարենայի մեկնիլ... Ա՛յք կրճամ կըքայ... Մա՛յրս...*



ՏԵՐԵԱՆԻ ՄԱՍԲԸ

Մա՛յրս... Երբ քանի ժը ամիս եւք Փալա-
 աթի ստեղծանքը մերթաշուքին ու անշատե-
 ցին զինք հաբազտեներու շրջանակին, է՞նչ ժը-
 ւանեց արգեօք ժէճնական երիտասարդ զուրժը
 ժօրը ու իրեն համար նոյնքան պաշակի ժայր
 ժողովուրդին ժասին, իր կարգին՝ զժօթային
 ազրուժներու ինչպիսի՞ հետքի ժը վերածուեցաւ
 արգեօք ժայրը զաւկին ետեւէն, որ Բանին ու
 քարի քաներուն պաշտօն կատարած էր ժիտն ու
 Հիմա հոգեւաններու կողմէ կը քաշչուէր զկտի
 անյայտութեան յայտնի գողցութեանը:

Ի զէժօ հազարաւոր ժայրերու յիննք նաեւ
 Արամ Հայկազի ժայրը, որ նախազարկ իրենց
 կարուանին սահմանուած ճակատապիւրը, ճամ-
 բու հրալ տէր ժը փնտռեց իր տանը՝ հինգամեայ
 որդւոյն ու յանձնեց զայն քիւրտերուն, պատ-
 լիքելով՝

«Հոգ տար ասողութեանդ, բայր ուժովդ եւ
 ամէն միջոցով աշխատէ, որ պարիս: Օր մը այս
 փոքրիկն այլ կ'անցնի, այն ասեմ յիշէ մեզ,
 կրօնէդ, ւզգզ, հաւատէդ»:

Ըսաւ, զնայ, ով գիտէ է՞նչ խոր նաւասա-
 կութիւն ժը ապրելով, քանի ժը քայլ տեղին նա-
 հաստիւրեւէլ առաջ:

Այս ամենէն եւք, որքա՞ն էրու կը հնչէ Յ-
 շականի խօսքը:

— Մայրերու կեանք: Ո՞րն է վէպը, որ կա-
 րենար հաւասարիլ քեզիս:

Մայրերուն գուճարեմքը՝ զաւակներուն
 հանդէպ:

Զաւակներուն դաշտածուեցը՝ ժայրերուն
 նկատմամբ:

Այս կապը այնքան զբաւոր եղա՞ն է ար-
 քեօք նաեւ ուրիշ ժողովուրդներու մէջ եւ ծնունդ
 սուսած է այնքան յորդ զեղումներու:

Մայրութիւնը մեր մէջ մեծ տեղ զբաւած է՝
 սկսեալ ժայր ամենայն զգաստութեանց Անտիտ
 առուանուհիի տնայիւրի ժամանակներէն եւ ա-
 նարատ հոյս Աստուածանին Մարիամի օրերէն
 մինչեւ այսօր:

Մայրերու ստիժով երկիւղած սովորութիւն է
 յինչ ժայրերու ժայր Աստուածամայրը, յիննք
 կրկին Աստուածամայրը, որ այնքան արտեք,
 մօրեր, զգոյնութիւններ ժայրացոյց մեր զբա-
 կանութեան ու արուեստի քնազաւաններուն մէջ,
 յիննք Աստուածամայրը, քայց շտտանք մեր
 ժայրերը, որ կ'իսաստուածներ նաեւ մեզի, սաս-
 ւածային ստորագիծներու տէր ընտիրներ...

Մեր ժայրերը...



ԲԱՎՈՒՆՅԻ ՄԱՍԲԸ

ԸՍԷ ԻՆՏԻ, ԻՆՉ ԿԱՅ

(Մտք յիշատակին)

Մա՛յր, բոլոր ասոնք ու աս պատմաններուդ ամենայնոքն ժանրամանուֆրեններն այ ժխտքս են սակաւին, որոնք ասանին պղտորներն այ չեն ժողովրդն ու անոնք մէկ-մէկ սորվեցուցան ազգութեդ պէս կը լինեն, բայց՝ շատի սր կ'ըսեմ, միայն զիտեր ժը համարողով, այնքան ժը անզնկութիւններ կը բերէիր զիզէն, որ այնքան հեռու կը մտար մեզմէ, հիմա այ պահ ժը վեր ա՛ն պլուսիդ ու ըսէ՛ ինձի, ի՞նչ կայ անդին: — Ի՞նչ ունիս զերեզմանէն, որ հուսա այնքան այ մեր ժառը կը գտնուի: Ըսէ՛ Մայր, վաստակ եղիր, որ չպիտի մերժեմ լսել, երբեք չլղիտի ձանձրանամ ըսելիքներդ: Երազներուդ պէտ արգածք զերեզմանէն անդիմաններն այ նորէն ճշմարիտ իրականութիւններ պիտի հուսակես, թէ քայտրմակ ոչ չընչութիւն պիտի բռնա պարզապէս: Հարցուկի ժը պատկառոտ աստուաններուն մէջ ու միշտ անստուն կարեւորութիւնով մը պիտի լսէի քեզ, Մա՛յր, որն է երազը, սա արեւի՛նը, թէ վաղ-ւան ստուերներուն կեանքը, որուն զուն ամբաներէ ի վեր սկսուածքն ըրիր՝ զես մեզի բան չես սպաւարտ, մեզ յուսահատ արատանքի մը մէջ պաւտրներ կը պահես, բայց զուն այլա՛մ երկար չէիր քնանար, Մա՛յր, զուն արագազին ճիշտը ընդոտտ արթնցող մը, հիմա անդերը կը պտան արանները ու բնաւ շտ շարժիր, վեր չես ասներ զուրիշ, ազգութի չես վաղեր, երաններդ կրակահարութիւն թէ ինչ, չես յայտներ մեզի... ու կը զարմանամ թէ՛ ինչպէ՞ս կրնաս համարիցի:

Այլա՛մ երկար ու խորունկ զուն քնանալով, մինչև հիմա այնպէս ժը ըսելիք կը կախիք չըթուանքդ: Թողի՛ զիտերի մը կեանքէն ամէնքն ու, հիմա ի՞նչ պիտի կրնայիր խօսիլ ան մեն զիտերին կողքէն, անոր ասակայի ու խաւարակուլ աւերելն, սոր ժառը ու մարկիցի ճարտը ետեւէդ:

Ասանքն օրը ինչպէ՞ս համարողեցիր, որո՞ւ հանդիպեցար, ո՞ւր ըրիր հանգիստի վայրկեանտան զարգարդ, զուն որ արդէն չունէր կը կատիւնէր:

Այն պահուն, որ հոնք ու շարը բուռ-բուռ գու մարմինդ խփող սնուակին վրայ թափելով՝ զոտ թնդին մը կը լեցնէր զերեզմանդ, ի՞նչ խորհեցար արդեօք, հէք Մայր, մեղաւոր չընդկուհի՛ մը կը թաղեն ըսիր, թէ՛ մարդիկ մահուան վրէժը կ'առնեն այնպէս հոգին սակ քեզ՝ զու մարմինն նենկելով:

ճարանութիւն: Դիմացաւ սակայն: Անիկա կը դասաւորէր ուղեղին յատուկ
մէկ բաժինին մէջ, այդ ճամբուն վրայ զինքը յուզող մեծ-մեծ դաղափարնե-
րը: Հարկաւ քաղաք կար սա դաշտին երեսին: Կիլիկիոյ դռներուն, հազար-
ներու բարձրացող բազմութեան մէջ քիչ, բաղդատաբար, իր ցեղակիցները:
Բայց դժբախտութիւն. բոլորն «էլ հեթանոս», գուք իմացէք անգրագիտ:
Որոնց հետ կը խօսէր անհրաժեշտը միայն, օրուան հացէն ու ժամէն: Շէ՛շ-
տը: Բայց ով որս՞ւ: Ոչ ոք, որ դարձնէր ուշ ուրիշին ցաւին. իրենը այնքան
պաղտրկեանութիւն կ'որակուի եւ ցամաք հացով ու գաշտի խտտերով յի նը-
ւաճուի: Իսկ բառե՞րը: Բայց ո՞վ ունէր պէտք անոնց իմաստին: Մեծ մա-
սով թրքախօս այդ աղաքը զինքը ընդունեցին, առաջին իսկ հանդիպումին,
ըրդաթ(*) Մշոյ դեղերէն, որոնք իրարու օտար լեզուով կը խօսին յաճախ,
եւ որոնց մէկ թաղին մէջ ընթացիկ բարբառը միւսին համար անհասկնալի
է, կ'ըսեն:


Մեծ թիւով էջեր պէտք պիտի ըլլային, արձանագրելու համար, Մա-
թիկին հոգիին մէջ բարիքները այս եզակի ճամբորդութեան, որոնք անի-

(*) Ըրպթ.— Ալիստաւոր (հազարեմ):

կա տուաւ ձեռն կենդանութեամբ ու ինքնատիպ գոյնով: Կը նոթեմ ժիւայն քնարական իր զեղումները, իրեն վայելող լաւատեսութեամբ մը ծիրանաւոր, աչն դրուագումներէն, ուր անոր արուած էր ականատես ըլլալ մեր ժողովուրդին սահղծումին, քիչ շատ բարեկեցիկ շրջաններու, հակառակ անոր, որ ջարդին թաթառը ամէնէն ուժով դարկած էր պատմական այդ ճամբու երկու եզրերը, մասնաւորաբար գիւղերը քանդելով: Անիկա չէր կրնար հաւատալ իր աչքերուն, թէ սա ժպտուն, կանաչով սքողուն տուններու փունջը չորս-հինգ տարի առաջ սեւ աւերակոյտ մըն էր, որուն զանազան խորշերուն այրիներ ու պառաններ իրենց պղտիկները կը պատսպարէին վայրի խոտով: Հիմա՞: Անիկա չէր կրնար հաւատալ, թէ սա քաղաքը, նոյն այդ մամանակին, պարպուած էր իր խանութներուն բոլոր մթերքէն ու տէրերէն: Հիմա՞: Հայկին բարբառը, թէ եւ ազաւազ, կը հնչէր մեղմով լիքը մաճառատուններէն: Ու մասազ աղաք, հազիւ պատանի, արագ-արագ գոհացում կու տային հազարով այդ ճամբորդներուն: Այս գեղումը հպարտութիւն մը չէր իր մօտ, այլ խուլ արածութիւն մը: Ինչե՞ր պիտի չընէր այս ժողովուրդը, երբ այդ աշխատները վատնէր սեփական հողերուն ու հայրենի շէնքերուն: Բայց այս ուխտագնացութեան — իրն է տարազը — ամէնէն շահեկան կողմը Մաթիկին ինքնացումն է, հոգեկան նոր այդ շերտաւորումը, որով մեր ներքին իրականութիւնը նոր կ'առայթ մը կը ստանայ, հիւլեական նորոգ դասաւորման մը մէջ, ազդուելով խուլոր դէպքերէ, ընկերային կամ ցեղաբանական խուլ անդրադարձներով, ապաւելով մեր մէջէն ձեռք տաններ, որքէ հանելով ուրիշ կառոյցներ: Մեր երիտասարդութեան խակ մասը մէկէն կ'այլանայ այս կարգի հարուածներով: Սովորութիւն է այս հարուածներուն արձակումը կապել կիներուն մասններուն: Այնքան անսպասելի հոգեկան մասնութիւններ, ուրացումներ մեզ կ'ընեն քիչիկ մը իմաստուն զգացական մարդին վրայ: Պարուող երիտասարդը առաջին դասը երբեմն կեանքովը կը տուէ: Ու աւելի ետքը, կեանքին վրայ մեր նետելիք դոյնը կը ճարենք այդ առջի երիտասարդութեան մաղձէն կամ ծիրանի դօտիէն:

(Շար. 8)

Յ. ՕՇԱՆԱՆ



ՎԱՍՆ ԹՈՒՂԹԻ ՈՒ ԹԱՆԱՔԻ

Ազգրէան եղանի զոճերուն յիւստակին նուիրում զպատկին համար մէկտեղում զկայսութիւններ էին հետազայ զբութիւնները, զորս, ինչպէս նախնայան էին նախորդ թիւում՝ պարտաւարուցանը յետանչի այս համարին:

Անոնց, բոլորն ալ, կը խափն ժեր ու զարուար ժեր ստիին փոխարարութիւններուն ժառն, եւ ա՛յն ժառն, որ բնազարուիչը, բնազարուիչը, աւարտուն, ժարգապանը, ցնդապանը պէ՛տք է սանձուի այլեւս, պատմուի միանգամայն, ու միջազային հակակշտով մը վերահաստատուն ազգերու շնամիջին մէջ հայ ժողովուրդը կոչուան թուական ու պի-նական ուժով փոքր, այլ ներքին արժանիքներով հարուստ այս հասարականութեան ժարգ-կային ու հազային իրաւունքները:

— Այդ բոլորը խոց են միայն ու խոստում, խոց կզան ու խոստում մնային, — պի-տի ըսն հասնարար ընթերցողներին շատերը. նման գնահատումներ ըրան են արդէն ու-րիշներ, ստորները թէ՛ մերիները, յանախ, արանկ թէ՛ ստանաւոր յայտարարութիւններով:

Համալիւարային Առաջին մեծ պատերազմի վախճանին, կըր մեզի արուան բոլոր խոստումներուն ճոխրակոյրը մտց միայն ու մենք զա՛րճեալ ստանձին մտպիւնք մեր զը-ճընակ հակասազգրին զժ մանգիման, Ֆրանսացի բանաստեղծ մը, բնակչութեանց զէ՛մ ժողան զսման պայտարին իր արուեստակիցներուն ու մեր ժողովուրդին մանակցութիւնը կը պատկերացնէր հետեւեալ հակազրութեամբ.

— Հայ ժողովուրդի տառապանքներուն ցկարագրութեան համար ֆրանսացի գրողները քիչ բազր ու բանաւ չեն վառան, բայց կայ ժողովուրդը բանախի փոխարէն իր արեւն է տուան Փրանսայի ազաւարութեան համարս:

Եւ այն իրակտութիւնը նոյնպիսի գնահատութեամբ մը պատկերացուցան է նաեւ Պա-րոյր Սեւակ, ստանաւորով.

Ամենը մի-մի պողպատէ կամ՝

Եզան մեր սային...


— Վա՛յ տա՛մ մեր ծային...

Մեր արեան դիմաց՝ ծայինցին բանաւ:

Քսէիկո նիչ է, պատմական իրակտութիւն է, պատմական իրակտութիւն կզու յատկապէս մեր պարագային, բայց նիչ է նաեւ ա՛յն, որ թուզթ ու թանձրի բովանդական զբութիւնները արեւմտարուան զբութիւններ չեն կզան միւս: Եւ ստոր համար է, որ թուզթ ու թանձրի վարպետները կը փնտաւին աճին կողմ, կամ կը հալածուին ու կ՛անհետ-ան յանախ:

Մեծ է թուզթ ու թանձրին բովանդական խորհուրդը, ու եթէ որ մը սնկոր մտպան է սնիկա ժարգը խղճմանըը ցնչելու. իր իմաստն մէջ, սերիւ որ մը կը զորն իր լիանունը ազգանութիւնը, սրովհետեւ կըրեւ հետարուր չէ թուզթ ու թանձրի խորհուրդը վերնապէս զրկել իր լիանութիւնէն, յետազարձ ուժէն, արգարութիւն մը վերահաստատուել իր բախ-տարը կշիռէն:

Հուս արուան հաստանային վկայութիւններին սմանը թարգմանուան են նոր, իսկ միւսները սանուան են մեր պարբերական ճամուլին:



ՃԵՄՇԱ ՊՐԱՅՍ.— Բրիտանական պետական ղեմք, դատախազ և Հեղինակ: Ծնած է 1836ին, Պելթոսթ, մեռած՝ 1922ին, Մայրամուտ: Ասեմք մը Օքսֆորդի մէջ կը վարէ դատախազի պաշտօն: 1870ին կ'այցելէ Պոզնան, Հայաստան և Պոլիս և այդ համարողութենէն ետք իր մէջ կը սկսի վառ հետազոտութիւն մը Հայաստանի և Հայերու հանդէպ: Կը հիմնէ Անգլո-Հայկական ընկերութիւնը: Զանազան գործեր կը վարէ Կլառթոթոնի կառավարութեան մէջ: Մեծն Բրիտանիոյ զեպան՝ ի Ուաշինգթըն: Հեղինակ՝ բազմաթիւ գործերու: Իր վերջին կողմ կը վերաբերի հայկական հարցին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՊԱԳԱՆ

... Թուրքիան պէտք է առյաւէտ դադրի կառավարելէ ուրիշ կրօնքի պատկանող ժողովուրդները: Թուրք կառավարութիւնը տասնընիւց դարերէ ի վեր մարդկութիւնը տառապեցնողներուն ամէնէն վարիտութիւն եղած է: Թուրքերը միշտ եղած են, ինչ որ նախորդ սերունդին պատկանող նշանաւոր պատմաբան մը վանոնք անուանած է՝ գողերու խումբակ մը, որոնք տիրացած են իրենց նըւաճած և աներած հողամասերուն:

Անոնք երբեք բաղաբակրթուած չեն, երբեք չեն փորձած կիրարկել ո՛չ մէկը այն սկզբունքներէն, որոնց համաձայն պէտք է որ բաղաբակրթուած կառավարութիւն մը վարէ իր գործերը:

Փոխանակ ժամանակին հետ յառաջդիմելու՝ անոնք հետպիտէտէ անելի վատթարացած են:

Վայրենիներ էին, երբ իջան Թուրքեստանի և Արեւմտեան Ասիոյ դաշտագետիւնները:

Վայրենիներ էին, երբ հարիւր երեսուն տարի առաջ էտմոնտ Պիրք կը նկարագրէ վանոնք իբր այդ, և այսօր ալ տակաւին իրենց կառավարութիւնը կը պահէ իր վայրենի և անգութ նկարագիրը:

Վերջին քառասունըչորս տարիներու ընթացքին, թուրք վարիչները չորս պարիտութի ջարդեր կատարած են, որոնցմէ վերջինը ամէնէն սուկալին էր:

Պուկարներու ջարդը, 1875-76, որ պուկարներու ակատագրման պատճառ եղաւ 1878ին:

1895-96ին Ապտիլ Համիտ նոր ջարդերու շարք մը կազմակերպեց Փոքր Ասիոյ և Հայաստանի մէջ:

Երբ Ապտիլ Համիտի գահը տապալեցաւ և Միութիւն և Յառաջդիմութիւն կոմիտէն իշխանութեան տիրացաւ, իր գործի գլուխ անցնիլը նուիրագործեց նոր ջարդով մը՝ Ատանայի և Կիլիկիոյ մէջ, 1909ին:

1915ին, նոյն կոմիտէն գործելով յանուն սուլթանի մը, որ երկար բանտարկութեան մը հետեւանքով անմիտ դարձած էր, կազմակերպեց նոր ջարդերու շարք մը, որոնք գերազանցեցին բոլոր նախորդները:

Եթէ ուրիշ ազգերու և մասնաւորաբար տկարներուն և դժբախտներուն հանդէպ պարտականութեան զգացումը

պէտք է գործնական կիրարկում ունենայ՝ այդ պարտականութիւնը ո՛չ մէկ տեղ այնքան արդարօրէն պիտի գործադրուէր, որքան Թուրքիոյ ջրիստոնեաներուն առիթով, օգնութիւն փութացնելով անոնց: Որովհետեւ այն դժբախտութիւնները, զորս այս վերջինները կրած են, մեծ մասով հետեւանք են ա՛յն եսապաշտ քաղաքականութեան, որուն եւրոպական մեծ պետութիւնները հետեւած են Արեւելքի մէջ: Առանց կրկնելու երկարօրէն գերմանացիներու անպայտութեան պատմութիւնը, յիշենք, որ 1895ին, Լոպանովի շահական վարքագիծին ներքեւ՝ Ռուսիա միջամտեց, արգիլելու համար Ապսիլ Համիտի սկսած ջարդերը կասեցնելու այլոց փորձերը: Ֆրանսան եւս, Իտալիոյ չափ՝ անմասն չէ պարսաւէն, ինչպէս եւ մենք՝ անգլիացիներս:

Մտաւորապէս հարիւր տարիներու ընթացքին, անգլիացի պետական մարդիկ ինքզինքնին կապուած պզգցին այն ծիծաղելի աւանդութեան, թէ բրիտանական շահերը կը պահանջէին թուրք պետութեան պահպանումը:

Ֆրանսացի եւ անգլիացի շահադէտներ թուրքերուն փոխ դրամ տուին եւ թրքական փոխառութիւն մը երաշխաւորեցաւ:

Քրիստոնեայ պետութիւններու այս օժանդակութիւնը, որ իր գոյութիւնը պահելու համար միջոց հայթայթեց թուրք կառավարութեան, յաւերժացուց իր հպատակներու զերութիւնը եւ տառապանքները, երբ ապստամբութիւններ եւ ուրիշ բնական պատճառներ պիտի կարենային փութացնել իր վախճանը:

Արեւմուտքի դաշնակիցները պարտաւոր են դարմանում մը ընել պաակներուն անոնց, զորս իրենց տգիտութեամբ կամ իրողութեանց հանդէպ իրենց անփութութեամբ՝ պատճառ եղան գերութեան մէջ պահելու:

Աւելի բարձր ոգիով ներշնչուած Համաժողով մը եւ նուազ եսական, քան հին դիւանագիտութիւնը, պէտք չէ՛ր վբաղէր այս հարցերով, դարմանելու անցեալի սխալները եւ թողուր յիշատակը այս հին ցեղերուն, որոնք սակայն կենսունակ են, ապստութեան հետ տալով նաեւ պատեհութիւն մը՝ մտնելու քաղաքակիրթ ժողովուրդներու հասարակութեան մէջ եւ տարածելու խաղաղութիւնն ու բարգաւաճումը ա՛յն երկիրներուն մէջ, որոնց վրայ մահուան ստուերը թեւածած է բազմաթիւ դարերէ ի վեր:

ՀԷՅՄԱ ՊՐԱՅԱ

(Contemporary Review, 1918)



ԱՐՆՈՆԸ ԹՈՅՆՊԻ.— Անդրեոսի Եշանուոր
գրամագիրը ու գրասխառնը Մեծի է 1889ին, Լեւ-
տան, Ռուսիա քաղաք է Օւսթրոմի մէջ: Առա-
ջին եւ թէ Երկրորդ մեծ պատերազմներուն ըն-
թացքին աշխատած է բրիտանական արտաքին
գործոց նախարարութեան մէջ: Իր Եշանուոր
գործը կը համարուի 10 հատորներէ բաղկացած
«Պատմական ուսումնասիրութիւն մը» սեռի աշ-
խատութիւնը: Իր քաղաքական ու պատմագիտու-
կան ապարդիւններուն շնորհիւ՝ Քոլջեյկի մասին
ճանչցած է հայ մտազոյգը ու ձայն բարձրա-
ցուցած է նպատակները զատիւ:

Les Massacres Arméniens

1914ի աշնան թուրքիոյ մասնակցու-
թիւնը պատերազմին անմիջապէս շնա-
նայաց հայերու վիճակը: Մական Պո-
սոյ օսմանեան կառավարութիւնը — եթէ
այս կառավարութիւն բառը կրնայ եր-
բեւեղէ պատշաճիւ հնվէրի, թաւաթի
եւ «Միութիւն եւ Յաստատութիւն» կո-
միտէի միւս անդամներուն, զորս լորտ
Պրայս արգարորէն կոչած է «Անիթի
Խնկէրու խմբակ մը» — ուրեմն այս
հօր եւ անկողնուց կառավարութիւնը
կ'որոնար իր ծրագիրը, եւ զայն գոր-
ծադրութեան դնելու սկսաւ 1915ի Ապ-
րիլ ամսոյն:

Այս ծրագիրը կը կայանար օսման-
եան կայսրութեան մէջ ապրող ամբողջ
բրիտանական բնակչութիւնը բնաջնջելուն
մէջ: Որովհետեւ պատերազմի ժամա-
նակ, օսմանեան կառավարութիւնը ա-
զատած էր հող չէ թէ այն թեթեւ հըս-
կողութեան, զոր եւրոպական պետու-
թիւնները կրցած էին մինչ այդ գոր-
ծադրել: Եւ հնվէր իրեն խոստացուած
յաջիջանակին վստահեցաւ՝ խուսափելու
համար — ինչ եւ իր մեղսակիցները —
արեւմտեան պետութեանց եւ Ռուսիոյ
վրիժառուութեան, որոնք միշտ միջամը-

տած էին օսմանեան կառավարութեան
անգութ թշնամութեան եւ իր հպատակ-
ները եղող բրիտանական զուգորու անգո-
րութեան պարագային:

«Քափիթիլախի» ներու ջնջումը
տապալած էր այն օրինական արդէլը,
զոր բարձրացուցած էին մեծ պետու-
թիւնները եւ որուն ետեւ թրջական
կայսրութեան հպատակ բրիտանականները
գտած էին աւելի կամ նուազ ապահով
ապաստան մը: Թրջական կառավարու-
թեան կը մնար ուրեմն սպասել պատեհ
առիթիւն, որպէսզի արձակէր բնաջնջումի
ազդանշանը: «Ասկէ ետեւ, — ըսաւ Քա-
լաթի՝ երբ ջարդերուն հրամանը ար-
ձակեց, — յիսուն տարիներու համար
Հայկական Հարց գոյութիւն պիտի չաւ-
նենայ»:

Ոճիւրը պատրաստուեցաւ խիստ սխա-
տեմաթիք կերպով, որովհետեւ ապա-
ցոյցը ունինք, որ գործելակերպը յար եւ
նման եղաւ յիսունէ աւելի տարբեր վայ-
րերու մէջ: Սյդ վայրերը չափազանց
չառ են, որպէսզի կարելի ըլլայ անոնց
մէջ կատարուած իրադարձութիւնները
մանրամասնօրէն քննել հոս, բայց երբ
ըսենք, թէ միայն Ատախիւն եւ Աֆիւն—

Պարահիսարը դուրս կը մնան ցանկին, պիտի հաստատէք, թէ անոնց մէջ են Հայաստանի եւ Արեւելեան Անատոլիոյ բոլոր կարեւոր քաղաքները, ինչպէս նաեւ արեւմուտքէն Իզմիթն ու Պրուսան, առանց խօսելու Քրտիոյ կարգ մը վայրերուն մասին: Պատճառ մը չկայ Հոռազմապատկելու սարսափներուն պատճառով: Երբեք եւ Պոլսէն եկող բոլոր հրամանները իրարու կը նմանէին եւ տեղական իշխանութեան կողմէ զործադրուեցան բացառիկ կանոնաւորութեամբ մը:

✽

... Երբ կը կարգանք, թէ բարեկալան կամ առորական կառավարութիւնը «դերեմարտի» այս կամ այն պարտուած ժողովուրդը, այս կամ այն նուաճուած ցեղը, չենք հասկնար նման նախադասութեան մը ամբողջական իմաստը: Նոյնիսկ երբ կը տեսնենք զերիններու թափո-

րը այնքան իրապաշտ քանդակներու վերայ, չենք յուզուիք մինչեւ մեր հոգևոյն խորը: Բայց այժմ դիտենք, թէ ինչ կը նշանակեն նման բառեր: Ասիկա պատահած է մեր դարաշրջանին եւ տարրական ոճերը թուրքին ոճերին չափ դիւային չէր: «Սխտեմաթիք եւ անողորմ կոտորած մը», — ահաւասիկ ինչ կը նշանակէ այս տարադրութիւնը եւ այս բառը երբեք այլ նշանակութիւն մը ունեցած չէ:

Բայց առորեստանցին գոնէ թոյլ կուտար ապրիլ անոնց, որոնք կը վերապրէին երկար ճամբորդութիւն: Անոնց տուն եւ հող կու տար, եւ այսպէսով յաճախ աքսորի մէջ նոր համայնք մը ծնունդ կ'առնէր: Թուրքին անդթութիւնը աւելի սխտեմաթիք եղած է: Հայերը մահուան զրկուեցան եւ ոչինչ կրցաւ փրկել զանոնք: «Մինչեւ հիմա անոնց մասին լուր մը չէ եկած եւ հաւանորար պիտի չզայ», ինչպէս կ'ընէ ականատես վկայ մը:

ԱՐՆՈՂՏ Ճ. ԹՈՅԸՆՊԻ



ՏԵՅՎԻՏ ԼՈՅՏ ՃՈՐՃ.— Բրիտանական քաղաքական դէմք։ Մեծ է 1888ին, Մանչեսթըր, մեռած՝ 1945ին, Բարնարդոնշիր։ Խորհրդարանէն ներս առաջին անգամ մուտք գործած է 1890ին։ 1905ին՝ անկառնելի նախարար, 1915ին՝ զինամըթերի, 1918ին՝ պատերազմական։ 1916ին զը կոյտի վարչապետութեան պաշտօնին։ 1917ին զինուորական մարտիկներէն ետք զը զուշուհի Բիմանայի հետ եւ 1918 Ազգային զը յաջողի իրադրոնի Դաշնակից բանակներու հրամանատարութեան միացումը։ 1919ին զը մասնակցի վերստի զանազորի մշակման։ Երեսնական թուականներուն զրի կ'առնէ Առաջին պատերազմին կազմած իր յուշերը։

ԺԱՄԸ ՀՆՉԱԾ Ե ՀԱՇՈՒՆՅԱՐԴԱՐԻ

... Պայքարը այլեւս մեր հակակշորին տակ չէ. մենք կը գտնուինք ճակատագրին ձեռքերուն մէջ. եւ ճակատագրի հսկայ ժամացոյցին վրայ ժամը հնչած է՝ հաշուեյարդարի նստելու համար թուրքին հետ։ Ես անոր մասին չեմ խօսիր իբրև քրիստոնէութեան՝ թշնամի։ Կրօնական պայքարներու մէջ պատերազմը ամէնէն անհեթեթ միջոցն է։ Մենք մահմետականութեան դէմ չենք պայքարիր, այլ կը կռուինք թուրքին դէմ։ ... Օսմանեան կայսրութիւնը արդէն մահմետական երկրորդ կարգի կայսրութիւն մըն է միայն, հակառակ անոր, որ ինքզինքին կու տայ մահմետական ամբողջ աշխարհի վրայ գերիշխանութիւն ունենալու հով մը։ Անտեղի յաւակնութիւն։ Թուրքը իր սեփական հաւատքին մեծագոյն թշնամին է, որովհետեւ ան իր յոռի վարչակարգով անպատուեց այդ հաւատքը։ Ի վերջոյ անիկա հասարակաց ինչ զիմ ունի Հնդկաստանի վարդաքան մահմետականին հետ։ Մտքի բարձրագոյն մակարդակներուն վրայ, Հնդկաստանի մահմետականը կը գրաւէ պատուաբեր տեղ մը։ Արաբները ստեղծեցին իւրայատուկ քաղաքակրթութիւն մը, որ մինչեւ այսօր հարստացնող որակ մը ունեցած է եւրոպայի համար։ Իսկ թուրքերը՝ Ռ'վ կրնայ մեզի ըսել, թէ անոնք բանով մը նպաստած են քաղաքակրթութեան, արուեստին, կամ

մարդկային յառաջդիմութեան որեւէ մէկ բնագաւառին։ Իրենց բունակալութիւնը մարդկութեան համար եղած է քանսեր մը, հոգեվարք մը, որ սողոսկած է իրենց ենթակայ ժողովուրդներուն միտին մէջ, փտեցնելով կեանքի բոլոր նեարդները։ Իրենց լուծը ծանրացաւ բոլոր այն երկիրներուն վրայ, որոնք քաղաքակրթութեան օրրաններ եղած էին։ Այդ հողերը մահմանակին եղած էին աշխարհի ամէնէն արգասաբեր եւ հարուստ մասերը, Արեւելի թէ Արեւմուտքի շտեմարանները։ Երբ ան ներխուժեց բարեբեր այս հողերը՝ արինաթաթախ իր մոյկերուն հայտնը վիրատոբեց ու չորցուց այս հողերուն կեանքն ու աւիշը։ Հազարաւոր քառակուսի ջիոմեթրներու վրայ, տեսանք բոլոր հատիկներուն խամրումը։ Այս ճիւղին տեսքը միայն անապատի վերածեց հարուստ դաշտերն ու արտերը։ Դարերու ընթացքին այս ռեժիմին ենթարկուած ժողովուրդը դարձաւ գոհը անոր անփութութեան, անատակութեան, հեշտամոլութեան։ Եւ հիմա, որ մեծ հաշուեյարդարի արեւը ծագած է ազգերուն համար, ուրախ ըլլանք, որ թուրքը վերջին անգամ ըլլալով կը գտնուի ցանկին վրայ, պատասխանելու համար մարդկութեան դէմ գործուած իր ոճիրներուն եւ եղկելի արարքներուն համար։

ՏԵՅՎԻՏ ԼՈՅՏ ՃՈՐՃ

ՀԱՆՐԻ ՄՈՐԿԸՆԹԱՌԻ.— Ամերիկացի իրաւաբան եւ պետական գործիչ: Մեռել է 1856թ. Գերմանիա: Հետազոյիւն կը հետազոտուի Ամերիկա եւ կ'աւարտէ Գոյովպիա համալսարանի իրաւագիտական ճիւղը: 1913-1916 թուականներուն կը վարէ Միացեալ Նահանգներու դեսպանի պաշտօնը՝ Քուրթիոյ մէջ: Եղած է փոքր ասեկնակտաւ ներքին Իսթ Բիլինթ քննչական կոմիտէի, եւ ասեկնակտաւ՝ յոս վաղթականներու անդաւորման համար կազմուած Ազգերու Լիկայի յանձնախումբին: Հայութեան վերաբերող իր երկերէն շատերը կը կոչուի «Ինքան Մարիլըքտուի պատմութիւնը», լոյս տեսած 1918թ.: Մեռաւ Ամերիկայի մէջ, 1946թ.:

ՀԱՅԵՐԸ ՊԵՏԲ Է ԱԶԱՏԱԳՐՈՒԻՆ

Հայկական ինչորը տակաւին չի կրնար բախտորաջ լուծումի մը յանգած նկատուի: Բայց մէկ բան պէտք է ըստայց ըլլայ, — հայերը պէտք է ազատագրուին թուրք տիրապետութեան լուծէն:

Ես կը գարմամ, որ չորս հարիւր միլիոն քրիստոնեաներ, որոնք ամբողջականօրէն տէրն են Եւրոպայի եւ Ամերիկայի կառավարութիւններուն, կրնան կրկին անպատիժ թողուլ թուրք կառավարութեան յանցագործութիւնները:

Եւրոպական կառավարութիւնները, Գերմանիայ պէս, իրենք եւս պիտի բռնեն թուրքին արիւնտ ձեռքը, պիտի ներեն անոր, եւ բարձրագոյն շքանշաններով պիտի զարգարեն զայն, ինչպէս ըրաւ քաղաք Վիեննա:

Խուճղաւժ անարեկումները, Վայրագ շարժարանները, Կիները դէպի հարւմները քշելու փաստերը,

Աննկա ազդիներուն բռնի պռնկացումը, աննցմէ շտաբուն հատը ուրտան անթի վաճառքը,

Անպատկանում մէջ անօթութենէ մահացածներուն պարագան,

Հարիւրաւոր գիւղերու եւ քաղաքներու քանդումը,

Թուրքիայ հայ, յայն եւ սուրիացի քրիստոնեաները բնաջնջելու կանխամրտածուած դժոխային ծրագրին ամբողջ գործադրութիւնը,

Թուրքիայում պիտի թայտարուի՞, պիտի քաջայերուի՞ն անոնք՝ իրենց իշխանութեան տակ գոնաւոր քրիստոնեաներուն հետ շարունակել վարուիլ՝ իբր «անհաւատ շուն»երու հետ, քէ անմիջապէս վճռական քայլեր պիտի առնուին՝ հայ ազգի, վազմչական եւ քաղաքակիրք քրիստոնեայ այդ ժողովուրդին բեկորները մշտնջենապէս փրկելու համար անոնց ներաններէն:

ՀԱՆՐԻ ՄՈՐԿԸՆԹԱՌԻ

*ՃԱՅՑ ԵՂ ՄԱՐԿԱՆ.— Ֆրանսացի պատմադէր
 և Հեռախոյզ: Կնած է 1857ին, Ռեփոս սիւր Բոն-
 առն, ժնած՝ 1924ին, Մարտիլ: Առնն ժը վարած
 է Եզդաուսի Հեռանուժեան սպասարհութեան
 տնօրէնի պաշտօնը, ապա, 1887էն սկսեալ՝ Պարս-
 կաստանի Միւս զաղազին ժէջ կտարած է Հեա-
 խուզական աշխատանքներ: Հեղինակ՝ պատմական
 և Հեռաչափական բազմաթիւ աշխատութիւննե-
 րու: Ժող աը Մարզան 1919ին լոյս ընծայեց իր
 Հանրահայեղ դարերին ժէջը՝ շէտյոց պատմու-
 քիւնք:*



ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՖՐԱՆՍԱԿԱՆ ԹԱՂԵՐԸ

Առաջաւոր Ասիոյ հիւսիսային բրիտանականները, մասնաւորաբար հայերը, կազմակերպուելու ընդունակ միակ ժողովուրդն են: Միւսները՝ քուրդներ, քաթարներ, փուրներ դեռ երկար ժամանակի համար յառաջդիմութեան օտակ պիտի չըլլան: Անոնք երբեք պիտի չբարտեալուին, բայց բարեմասն ամենօրեայ օրինակին և ուսուցման շնորհիւ միայն հայերը ի վիճակի են քիչ առ քիչ դարմանել այս գարիւրիլի բարբարոսութիւնը: Անբաժնէտ է, որ հայերուն վստահինք իրենց դրացիները կրթելու ջանքը և որպէսզի անոնք կարենան այդ պատուով կատարել՝ կարեւոր է, որ իրենք իրենց տէրը ըլլան և ըլլան ուժեղ, պաշտպանուած Եւրոպայի կողմէ: Այդ աստի, իրքու ամենամեծ օրհնութիւնը բոլոր ազգերու՝ բարբարոսութիւնը Ասիոյ խորերէն պիտի անհետանայ: Ասիկա նպատակ մըն է, որուն կ'արժէ հասնիլ և քիչ քաղաքակիրթ աշխարհը պիտի չէ անտեսել այդ ճշմարտութիւնը:

Ուրեմն, աշխարհի ապագայութեան

համար կարեւոր է, որ Հայաստանը իր պետութիւն մեծցուի և գորացուի, բոլոր միջոցները տրամադրուած ըլլան իրեն՝ հարստանալու համար, որպէսզի իր դերը կատարէ ազգերու միութեան մէջ: Այսպէսով ան նպատակ պիտի ըլլայ քաղաքակիրթ աշխարհին և կարելի է հաշուի առնել իր գործակցութիւնը:

Հայերը միայն իրենց կրած սոսկալի տառապանքներով նանչուած են անո՛ր համար, որ շատ քիչ անձեր գտնոնք կը ճանչնան, անո՛ր համար, որ մարդիկ կ'անգիտանան անոնց անցեալը, երկիրը, և որովհետեւ անոնք դարերէ ի վեր կարսնցուցած են իրենց քաղաքական ինքնութիւնը:

Հայերը մեզի համար գոյութիւն ունին այնքան, որքան պատերը և պարբերանները, իրքու Թուրքիոյ միւս ազգութեանց մէջ կարսուած ժողովուրդ մը: Անոնք, իրենց այդ կացութեան մէջ, այլեւ ծառայելու ընդունակ չէին քրտեր: Որքա՛ն սխալած էինք:

Բայց սեռաւսիկ դէպքերը կը գահա-

վիժին: Ապագան պիտի որոշէ թուրքիոյ, այս փտած կայսրութեան բախտը, աշխարհի մշտնջենական անհամաձայնութեան այս պատճառը: Այն ատեն է, որ պէտք պիտի ըլլայ կոյուվի ժեստի մը, եթէ հարկ ըլլայ նոյնիսկ բուռն ժեստի մը. Հայաստանէն վտարելու համար այս անարժան բռնագրութիւն ու հայերուն վերագարձնել իրենց նախահայրերուն երկիրը: Ձվարանիմք այսօրուրնէ իսկ մեր դիտաւորութիւնները հռչակելու՝ Հայաստանի անկախութեան յայտարարութեան համար: Հո՛ր է մեր շահը, մեր պատիւը, որովհետեւ չմտնանք, թէ մենք կը կռուինք հարստահարուած ժողովուրդներու ազատագրման համար:

Որքա՛ն ծանրօրէն կը սխալին անոնք, որոնք հակառակ ամէն բանի տակաւին կ'ըսեն. թէ թուրք ժողովուրդը ուղղելի է. թէ՛ կրնայ ինքն իրեն բարեփոխի, եւ թէ՛ պէտք չէ ջնջել իր անունը բարւէսին վրայէն: Այդ անձերը որքան քիչ կը ճանչնան Արեւելքը եւ արեւելցիները:

Ո՛չ: Թուրքը տակաւին երկար ատեն է վիճակի պիտի չըլլայ նրբացնել իր հոգին, հրաժարիլ իր առհասական տնտեսիւններէն: Ի՛նչ որ ալ ըսէ ան եւ ինչ որ ալ խոստանայ՝ չվստահինք: Որովհետեւ օր մը մեր տկարութեան համար կրնանք զգալ:

Թուրքիան, այսօրուրնէ իսկ, ամբողջովին պէտք է փոխէ իր տէրը:

Ազատագրե՛նք Հայաստանը, վերագարձնե՛նք ամբո իր նախահայրերուն հողերը եւ հսկենք այս թուրք կայսրութեան մնացորդին, որ ծնունդ տուած է ամէնէն գազարի աւարներուն: Չմտնանք, թէ այս բարբարոսները քաղաքակրթութենէն յափշտակած են ա՛յն ճահանգները, զորս այսօր իրենցը կը դաւանին. մինչդեռ իրենց ճշմարիտ հայրենիքը հոն է, Մայրագոյն Արեւելի մէջ. Այդայի գրեթէ անապատային երկիրներուն, եւ Ասիոյ խորերը, եւ թէ՛ Առաջաւոր Ասիոյ, ինչպէս եւ Եւրոպայի մէջ անոնք ո՛չ մէկ իրաւունք ունին:

ԺԱԳ ՏԸ ՄՈՐԳԱՆ

ՈՒՆԱՍԹԸՆ ՁԸՐՁԻԼ.— Բրիտանական քաղաքական գեներալ և Հեղինակ: Ծնած է 1874ին, Պիեյ-կայմ Փուլըն, Ճեռած՝ 1965ին, Լոնտոն: Խորհրդազարանին ներս առաջին տեղում ժուռը իջ դործն է 1900ին, 1911ին՝ Եռվային նախարար, Վարչապետ՝ 1940-1945 և 1961-1965, Ղեկավար՝ Ծղլիկայ պահպանական կուսակցութեան:

Նույնիան գրական պատկուտը՝ 1963ին:



The Aftermath

Փոքր Ասիոյ ժէջ, Բրքական կառավարութիւնը 1915ին սկսու ու զորքազօրէն զործադրեց կայիտու ընդհանուր ևս տնարդ շարքերն ու տեղաւանութիւնը: 300ին 400 հազար սոյեր, կեներ ևս երեխաներ փախան գէղի առուական հողատեղ, ևս ուրիշներ՝ գէղի Պարսկաստան ևս Միջագետք, բայց Փոքր Ասիոյ ժէջ հայ ցեղին բնաջնջուց աշխան ամբողջական էր, որքան կրնար նման բան ժը պատահի ուղղան ընդարձակ շափի ժը վրայ:

Կենթազրուի, որ այս շարգերուն ևս տեղաւանութեան ենթարկուեցան 1-250-000 հայեր, որոնց կէսն տակին բնաջնջուեցաւ: Տրամաբանական սէ ժէջ կտական ախ ժառն, թէ այս սնէրը երազրուած ու զործադրուած չէր քաղաքական պատճառներով: Պատահութիւնը ներկայացած էր Թրքական հողը ժաբէրու ջրիտանեայ ցեղէ ժը, որ զէժ էր Բրքական բուր փառասիրութիւններուն, ունէր տղային ձգտումներ ու տնկեր, որոնք կրնային գտնու-

ւիլ ժիւյն Թուրքիոյ ի վտա, ևս որ աշխարհապարկանորէն իջ գտնուէր Բըրքական ևս կովկասեան իւլած ժաղափորդներուն ժիլիւ: Կրնայ ըլլալ, որ կալիփոլիի Թերակղզիին վրայ տեղաւան յարձակուցը հրահրած ըլլայ Բըրքական կառավարութեան տնտեսը կառաղութիւնը, Փան-Թուրքիստները իջ իտրէնէն, որ ևթէ Պուլքը ինտար ևս Թուրքիա կորսնցնէր պատերազմը, հայերու բնաջնջուց զա՛րնուլ պիտի սուկնար իր արդիւնները ևս ժառայն առուակութիւն ժը ապահոված պիտի ըլլար Թուրք ցեղին տղապային:

Հայ ժողովուրդը Առաջին ժէն Պատերազմէն դուրս կլաւ արտոյնուած, արժատախիլ կղտն թաղութիւ նաւանդներու ժէջ ևս, ժէջ երբորզով կտարակուած՝ շարգերու, կրիւնքու ևս բանազաղթի պատճառով, զոր Թուրքերը որդեկրած էին սպանութեան իրրու գրի-

ըին միջոց: Եւրջը երկուքուկէս միլիոն-
նոց ժողովուրդէ մը երեք-քառորդ մի-
լիոն մարդիկ, կիներ եւ երեխաներ բը-
նալնընւած էին: ... Բայց հայ ժողո-
վուրդին սպանացող աշխոններուն վախ-
ճոնը ժողովուն էր ազանովարար:

Հայերու կրած նախկին շարքարանք-
ներն ու ջարդերը ծանօթ էին ազիւսցի
ժողովուրդին՝ պր. կրտսըութոնի հըւ-
լակին եւ պերճախօտութեան շնորհիւ:
Կարծեքե՞րը սակայն միանամուտ չէին,
ոմանք իրենց ուշադրութիւնը աւելի
կեդրոնացուցած էին հայերու դժբախ-
տութեանց վրայ, մինչ ուրիշներ՝ տնոնց
ձախողանքներուն ու թիրացումներուն:
Ամէն պարագայի, ի հակադրութիւն
այն ընդհանուր անասրբերութեան, ու-
րով արեւմտեան ռամկապետական եր-
կիրները կը հետեւէին արեւելեան եւ
միջին-արեւելեան ժողովուրդներու
բախտին, հայերը եւ իրենց դժբախ-
տութիւնները ծառէն ծառով էին Անգ-
լիոյ եւ Միացեալ Նահանգներու մէջ:
Հայերուն հանդէպ այս հետաքրքրու-
թիւնը առաջ եկած էր կրօնքի, մար-
դասիրութեան եւ քաղաքականութեան
շնորհիւ: Այն վայրագութիւնները, ու-
(«Անանիայ վազորայն», 1941)

րոնք գործադրուեցան տնոնց վրայ՝
անդիտախօս ամբողջ աշխարհին մէջ
զրպուած էին զայրոյթը պարզ եւ
վեհանման մարդոց եւ կիներու:

Վերջապէս, եկած էր պահը, որ
հայերուն արդարութիւն ըլտը եւ ա-
նոնք սասնային իրաւունքը խաղաղու-
թեամբ ապրելու իրենց ընդհ հաշին
վրայ: Այն զահիճներն ու բռնապետ-
ները, որոնք հալածած, սպանած ու
զերեվարած էին զիրենք՝ տապալած
էին պատերազմի թէ յեզափոխութեան
պատճառներով: Յաղթանակի ժաման
աշխարհի մեծագոյն ժողովուրդները
հայերու բարեկամներն էին, որոնք պի-
տի ջանային արդարութիւն ընել ի-
րենց:

Սերմբունի կը թուէր, որ հինգ
ձեռ զաշնակիցները շկարհնային իրենց
կամքը արդիւնաւէտ զարմեւել: Բայց
մինչեւ որ յաղթականները Փարիզի
մէջ հաւաքուէին Հայկական Հարցին
գննարկման, զաշնակիցներուն միտա-
նութիւնը չբացած էր արդէն, չբացած
էին նոյնպէս իրենց բանակները եւ
իրենց որաւումները պարզ խօսքէն ա-
ւելի արե՞ք լուսէին:

ՍԻՐԵՍԹԸՆ ԶԸՐՁԻՂ

Ջարդարեաններու քաց թէ Զածկազիր բոլոր միջնայութիւններուն տեղակի եւ Տէր-Ջորի, Քոտ-իւ-Այնի եւ արոնց մասիկ շրջաններուն մէջ 1916ին կառարուած անշուր եղանակաբարձութիւններուն տկուտանութեամբ, զաշխատանք փոխ անուշիկ մաս աւագ քարտուղարի պաշտօնին կրուած Նախ մէջ՝ զբի առաւ վաւերագրիներով յազնացած իր յուշերը, որոնք տեղիբնի թարգմանուելով ու Արամ Անտոնեանի կողմէ կառարուած լրացումներով հասարակական 1920ին, Լոնտոնի մէջ:

Անգլիերէնով հրատարակուած Նախ մէջ այս յուշերուն հետ իրրեւ յաւելուած արուած է նախագահ Ուիլյամին ուղղուած քաց թանկ մը, գրուած՝ Լուրգերուն տկուտան զերմանցի գրողէս Արմին Ք. Վէկնէրի կողմէ:

Դիմացի էջին արուած հաստատները տեսուած են մեր աստուգանքները բաժնած եւ հայ ժողովուրդին արդարութիւն ընկուտ պայքարին սեւարար իր մանակցութիւնը բերած այս կարգի գրադէտին յիշուայ ընդարձակ նամակէն:

Ստորեւ ընտիմ գլէյի յուշերուն յառաջանքը, Վայրաւանք հյուարթնի ստորագրութեամբ:

**ՆԱԻՄ ՊԵՏԻ ՅՈՒՇԵՐՈՒՆ
ՅԱՌԱՋԱԲԱՆԸ**

Պեղեցէք օսմանեան կայսրութեան արիւնշաղախ պատմութիւնը եւ պիտի տեսնէք, որ գերջին հինգ տարիներու դաժանութիւններուն նման ուշին պիտի դտնէք հոն:

Քրքական կառավարութեան ուղղակի հրահանգով կառարուած ալրուրու, կիներու եւ մանուկներու բնաջնջման ահաւոր պատմութիւնը հնարաւոր չէ բաներով քացատրել: Իրենց սառնարիւն եւ անասնական կատաղութեամբ ծանօթ ինվերի եւ թալաթի անուաները վճռապէս դատապարտուած են յաւիտենական անուանարկութեան:

Ինչպէս ըրած եմ իմ կարգիս, ընթերցողները եւս նշանակալից այս յիշատակարանէն պէտք է հանեն իրենց եզրակացութիւնները:

Մանօթ ենք եղերական իրողութեան, այսուհանդերձ աւելի լաւ է դիտուալ, թէ ինչպէ՞ս եւ որոնց կողմէ կազմակերպուած ու գործադրուած էին ջարդերը:

Գիտակից թուրք կառավարութեան մը հետ՝ պատրաստելու վրայ ենք դաշնադիրը այն եղելութիւններուն, որոնք ցայսօր ամէնէն հարուստ երեւակայութեան յղացած ամէնէն դժոխատիպ պատկերներն անգամ կը դին կ'անցնին:

Արդար է յիշել, որ ոճերը յղացողներուն իրրեւ գործիք ծառայող անձերը եղան աւելի ղթասիրտ, եւ թէ՛ կարգ մը թուրք պաշտօնական մարդիկ բարի էին եւ մարդկային:

Բայց ինչ կը վերաբերի թուրք կառավարութեան, դաժանագոյն բառերն իսկ անգոր են զայն բնորոշելու համար: Եթէ պարտականութեան եւ արդարութեան արդի բմբունումին մէջ կայ աննիւք որեւէ քայլ, ատիկա պիտի ըլլայ ա'յն դաշնագիրը, որ միանգամ ընդմիշտ պիտի ազատէ քրիստոնեայ այս ազգին վերապրողները ճարձրագոյն Դրան աննկարագրելի ոճիներէն:

ՎԱՅՄՔԱՌԻՆՔ ԿԼԱՏՄԹՈՆ

24 Դեկտեմբեր 1919

ԲԱՅ ՆԱՄԱԿ՝ ՆԱԽԱԳԱՀ ՈՒՒԼՍԸՆԻ



ՊԱՐՈՆ ՆԱԽԱԳԱՀ,

Պերլին, Յունուար 1919

Բռնկրկտին ուղղուած 8 Յունուար 1918ի ձեր պատգամին մէջ, դուք պահանջք դրիք, որ օսմանեան կայսրութեան մէջ գտնուող ոչ-թուրք բոլոր ժողովուրդները ազատագրուին: Այդ ժողովուրդներէն մէկն է հայ ազգը: Խօսես կ'ուզդեմ ձեզի նիշդ այս ազգին անունով:

Իբրևս մէկը այն հազարազիւս եւրոպացիներէն, որոնք սկանտեսնա վերականգնող եզան հայ ժողովուրդի ահաւոր բնաջերմումն՝ սկսած Անատոլի բարեքեր դաշտերէն մինչև անոնց հոգեվարքը Եփրատի ափերուն, ես ինծի իրաւունք կու տամ ձեր այնքան առջեւ փռել թշուառութեան եւ սարսափի ա'յն պատկերները, որոնք ամբողջ երկու տարիներ տողանցեցին իմ այնքանու դիմաց եւ որոնք երբեք պիտի չհեռանան մտէն:

Այս կողմ կ'ուզդեմ ձեզի ա'յն պահուն, երբ Փարիզի մէջ ձեզի դաշնակից պետութիւնները խաղաղութեան բանակցութիւններ կը վարեն, որոնց նպատակն է ճշդել աշխարհի նակատագիրը յաջորդող տասնամեակներուն համար:

Հայ ազգը փոքր ազգ մըն է՝ ուրիշ շատերու կողքին, եւ կշիռքին միւս ճծարին մէջ կան աշխարհի շահերը հետաքրքրող ուրիշ ազգերու սպագանքը: Վախ կայ ուրեմն, որ փոքր եւ ծայրայեղորէն տկարացած ազգի մը արժէքը բոլորովին մթազնի եւրոպական մեծ պետութիւններու կշիռով ծանր եւ ետակեղորոն փառասիրութիւններու ետին եւ Հայաստանը դարձեալ թնտեսաւի, ինչպէս յաճախ պատահած է պատմութեան ընթացքին:

Բայց այդ անտեսումը համազօր պիտի ըլլար մեծ անարդարութեան մը, որովհետեւ աշխարհի վրայ ո'չ մէկ ժողովուրդ տառապած է այնքան, որքան հայ ազգը: Հայկական Դասը քրիստոնէութեան նստիւթեւումը դատ է, համայն մարդկութեան դատը:

ԱՐՄԻՆ Թ. ՎԷԿՆԵՐ

Պ Ա Տ Ա Ս Ի Ա Ն

Օ Ս Մ Ա Ն Ե Ա Ն

Պ Ա Տ ՈՒ Ի Ր Ա Կ ՈՒ Թ Ե Ա Ն

Ն Ե Ր Կ Ա Յ Ա Ց ՈՒ Ց Ա Ծ

Ց ՈՒ Ծ Ա Գ Ր Ի Ն

Պ Ա Ր ՈՆ Ն Ա Ն Ա Գ Ա Հ ,

Դաշնակից գլխաւոր պետութեանց Խորհուրդը մեծ ուշադրութեամբ կարգաց այն յուշագիրը, զոր Ձերդ Վսեմութիւնը յղած էր իրեն, 17 Յունիսին: Իր տուած խոտուածին հաւատարիմ՝ Խորհուրդը կը փափաքի այդ յուշագրին մասին կատարել հետեւեալ նկատողութիւնները:

Յուշագրին մէջ արձանագրուած քաղաքական էնթրիքները, որոնք թուրքիան մղեցին պատերազմին մէջ մտնելու, եւ ողբերգութիւնները, որոնք հետեւեցան նոյն այդ էնթրիքներուն, հերքելու ոչ մէկ ճիշդ կ'ընէ Ձերդ Վսեմութիւնը եւ ոչ ալ կը փորձէ մեղմել այն սնիրները, որոնք յանցաւոր կը կացուցանեն թուրք պետութիւնը:

Ձեր յուշագիրը վճռապէս եւ բացայայտօրէն կ'ընդունի, որ թուրքիան պայքարի ոչ մէկ պատճառ ունէր Դաշնակից պետութիւններուն դէմ, թէ անիկա Գերմանիոյ ձեռքին մէջ եղած է պարզապէս հլու զործիք մը, եւ թէ՛ պատերազմին, որուն սկիզբը եղաւ անարդարանալի, եւ ընթացքը՝ անզուխ, ընկերացան ջարդեր, որոնց հաշուրած բրաութիւնը կը հաւասարին, եթէ չեն դերպահանջեր՝ պատմութեան ամբողջ երկայնքին արձանագրուած բոլոր սնիրները:

Ձեր յուշագիրը այնպէս կը ձեւացնէ, թէ այս սնիրները զործուած են կառավարութեան մը կողմէ, որուն կարելի չէ մեղսակից ընդունիլ թուրք ժողովուրդը: Թէ՛ այդ սնիրները, որոնց հետեւանքով մահմետականները նուազ շտապակեցան, քան քրիստոնեաները, կրօնական մոլեռանդութեան ոչ մէկ տարր կը պարունակէին եւ որոնք երբեք համապատասխան չեն օսմանեան այն աւանդութեան, որուն համաձայն թուրքիան պատմութեան ընթացքին վարուած է իրեն հպատակ ցեղերուն հետ: Ձեր յուշագրին մէջ կը յիշեցուի նաեւ, որ օսմանեան կայսրութեան պահպանումը անհրաժեշտ է՝ աշխարհի կրօնական հաւասարակշռութեան համար եւ թէ քաղաքականութիւնը, ոչ նուազ քան արդարութիւնը՝ կը թելադրէ ուրեմն ամբողջովին վերահաստատել թուրքիոյ հոգաժառանգը՝ նախապատերազմեան իրենց վիճակին մէջ:

Խորհուրդը չի կրնար ընդունիլ ո՛չ այս եզրակացութիւնը եւ ոչ ալ այն

ԺՈՐՃ ՔԼԵՄԵՆՍՑ.— Յրանացի գնացական ղեմը՝ ծնած է 1841ին, Մուլլերոն-Վարեա, ճեռած՝ 1920ին, Փարիզ։ Առաջին անգամ խորհրդարանին ներս մուտք գործած է 1875ին։ Ղեկավար՝ արժատական ժախակողմաններու։ Իր ցուցարեւած արտակարգ ուժականութեան եւ նըրբամտութեան համար վերակոչուած է Յրանայի Վարչը։ Վարչագետ՝ 1806-1900։ Խզում ընկերվարականներու հետ։ 1917ին կրկին կը կոչուի վարչակոմիտեան պաշտօնին եւ քննչիք ուժըղովին կը նստի պատերազմը է նպաստ Դաշնակիցներուն աւարակու գործին եւ ձեռնադրդականութեան կ'արժանանայ յաղթանակին ետք։ Կը մտնակցի Վերայի գաշնալըին ճշակման։



պատճառաբանութիւնները, որոնց վրայ կը հիմնուի այդ եղբակացութիւնը։ Խորհուրդը ո՛չ իսկ վայրկեան մը կը կատարի այն ժառանգ, որ Քուրքիոյ այժմու կառավարութիւնը խորագէտ կը դատարարուի իր նախորդին վարած քաղաքականութիւնը։ Թրքական կառավարութիւնը եթէ նոյնիսկ չի բանաձեւեր այդ մեղադրանքը բարոյական նկատառումներով (ինչ որ իրականութիւն է այս պարագային), պէտք է ընէ ատկա պարագայական մտահոգութեամբ։

Այսուհանդերձ, բոլոր այս փոփոխութիւններուն մէջ, Եւրոպայի, Ասիոյ եւ թէ Ափրիկէի պարագային՝ կարելի չէ գտնել երկիր մը, որուն վրայ Թրքական տիրապետութեան հաստատումը իրեն հետեւանք ունեցած չըլլայ նիւթական բարգաւաճման նուազում մը, եւ զիչ մը՝ մշակութային մակարդակի վրայ։ Չկայ նաեւ պարագայ մը, որ Թրքական տիրապետութեան անհետացումը առիթ տուած չըլլայ նիւթական բարգաւաճման եւ մշակութային մակարդակներու բարձրացման։ Եւրոպայի ջրիտոնեաներուն, թէ Սուրիոյ, Արարիոյ ու Ափրիկէի մահմեդականներուն պարագային, թուրքը իր նուաճած երկիրներուն մէջ մի՛միայն աւեր բերած է։ Ան երբեք ինքզինք ի վիճակից չէ տուած խաղաղութեան մէջ զարգացնելու այն, ինչ որ լաւած է պատերազմով։ Իր կարողութիւնները երբեք այս ուղղութեամբ չեն օգտագործուած։

Թուրք կառավարութեան հրահանգով կատարուած ջրիտոնեայ հայերու ջարդը եղաւ միակ առիթը, ուր կարելի եղաւ դնահատել կանխամտածուած մոլեռանգութեան մը ճաշակը։ Բայց Ձերդ Վեճմութիւնը նկատել կուտայ, որ այդ դեկավարութեան հրահանգով ձեռն թիւով անոնոս մահմեդականներ եւս ջարդուած են, եւ բաւական ջստմնիք պայմաններու տակ, եւ ատկա կը յիշեցնէք հարկաւ մեղմացնելու եւ ոչ թէ ամբողջովին ծածկելու համար կրօնական ամէն կողմնակալութիւն։

ԺՈՐՃ ՔԼԵՄԵՆՍՑ
Փարիզի խաղաղութեան համաժողովի նախագահ

Արևելագիտության բարձրագույն ուսման տեղ, մեր և՛ թուրքերու փոխդարձությունների շարունակը պատմության ճաշակեղանակ ու նաև իբրև զբաղման զամբարի անհատականության՝ Պոլսումն կրթությանը կը նկատուի մէկը աշխարհի մեծագոյն հաստատութիւնն: Եր այս նամակը, որ զբրւած էր Եղեռնի Յիսնամակին, մեր ժամույնն մէջ առաջին անգամ լսու անտու Վայիրիս շարժաբաններին (ՃԳ. Տարի, թիւ 30, 31) էջերուն:

Հոս արուածը թէև ամբողջութեանը չէ նամակին, բայց ամբողջական գաղափար մը կուտայ այս լե՛զ արտգետին զազափարական մե՛հ ու մարդը հուսնան մասին, որուն աշխարհն պոռթկացող ազազակը իրապէս քրովանգակ մարդկութեան խղճին ծայնն է, այն խղճին, որ չի կրնար համզիտ զոմնի անստեղծ կայ ժողովուրդի 60 տակոսին բնայնութեամբ և անոր պատմական կայրեմիքին 90 տակոսին բնագրաւումը:

Միացեալ Ազգերու այն օրերու ընդ՝ զարտուղարին ուղղուած այս նամակը, ինչպէս նաև հան յիշուած կրթականի երևց տարի առաջ՝ զրի առան միս նամակը՝ ճնամակ իմ վաղեմի բուրբ բարկամիտ, իբևեց բովանդակած վաներական աստեղծութիւն, մարդկայնական մթնոլորտով ու արամաւանական առաջադրութիւններով կարելի է և՛ ոչ՛աք է համարել հայկական հարցին վերաբերող թղթածրարին ամենէն ուժեղ ճառագուստներէն մէկը:



ՊՈՆՏԱՆ ԿԻՊՐԱՍԿԻ

ՆԱՄԱԿ ՄԱԿԻ ԸՆԴՀ. ԲԱՐՏՈՒՂԱՐ

ՈՒԹԱՆԻՆ

Այս նամակը կ'ուզեմ մեզի մ'չ միայն անոր համար, որ զուրջ Միացեալ Ազգերու կողմակերպութեան առաջին ներկայացուցիչն էք, այլ նախ և՛ առաջ՝ այն պատճառով, որ շատ բարձր կը զմահանեմ զմեզ իբրև մարդ: Եւ յատկապէս մարդ հակին անմիջական այդ զգացումն է, որ կը մղէ զիս անկեղծօրէն արտայայտել այն բոլոր ժամանակները, որ ունիմ քառականին զաման մեր վերջին հարիւրամեակի ամենէն ցաւայի և՛ ամենէն խայտառակ հարցին շուրջ: Յիսուս տարիներէ ի վեր այդ հարցը կը տանջէ ամբողջ մարդկութեան ինչպէս... Եւ ժամանակն է, վերջապէս, որ արգար լուծում մը գտնէ:

Յօսքս կը վերաբերի 1915 թուականի հայկական անպատեմելի կոտորածին, որուն կէտարեան տարիները կը իննք այս օրերուն, ինչպէս և՛ այդ յիշատակութեան հետեաններուն երկար շաբանին, որուն պատճառով ամբողջ Տանկասթանակ զարման է այսօր աշխարհի ամենէն զարգացած ժողովուրդներէն մէկուն գերեզմանացը, իսկ հրաշքով փրկուածները պանդուխտ և՛ ի սփռուա աշխարհի:

Բայց որպէսզի այս նամակին մէջ շուտօրում ինչորք առաջին իսկ վայրկեանէն զրուած ըլլայ շիտակ գիտնի միայ, պէտք է աւելցնեմ, որ ես ինքս հայ չեմ, և՛ այս նամակը թիւղարուած չէ գոյութիւն ունեցող կառավարութիւններէն սեւէ՛ մէկէն: Աւելի ճիշդը՝ նամակս բովանդակ մարդկութեան խղճին ծայնն է, այն խղճին, որ չի կրնար հանդեսս պանել անստեղծ կայ ժողովուրդի 60 տակոսին բնայնութեամբ և՛ անոր պատմական հայրենիքին 90 տակոսին բնագրաւումը:

... 1961ին, երբ թուրք ժառանգանութեան կողմէ լղեցի այդ հարցին շուրջ (այդ կողմ ամբողջ աշխարհի շրջանը ըրու և՛, ի միջի այլոց, Ամերիկայի մէջ ուլ ապուսեցու առանմին զբրայիմ մը — A Letter to my Turkish Friend) ուլ մէկ թուրք արձագանդեց իմ կողմս: Նոյնիսկ կոմունիստ նազըմ Հիքմէթը թուրք համարեց լսու մնալ:

Ողբ երկրպագուածը ընդգրկող մեր եւալուստ զորուսնութեան ընթացքին, գիտեալատեա տեղ,

բողոքիս զրոյած էր անկախութեան ձգտող պաշտօնային ժողովուրդներու հարցով: Եւ ձեր աւձեր նախորդին թանկացին անկախութեան շնորհիւ՝ այդ ժողովուրդները յաջորդաբար կ'օգտատարուէին: Իսկ ի՞նչ կ'ընէիք, յարգելի պարոն, որեւէ զազաւթարար պետութեան, եթէ իրեն նմանակալ ժողովուրդք ձեր պատասխանական ձգտումին ի պատասխան, այնտեղ զրկէր ժինչեւ անկաւանար զինուած զորքեր, ասկիւսմայ ընէր այդ երկրին ամէն մէկ անկիւնը, սպաննելով բոլոր բնակիչները, տղամարդիկը, ձերեքը, կիներն ու մանուկները, եւ այդ զարհուրելի արարքը վերջացնէի ձեռք, լղիջըսէն յայտարարէր. թէ սառնակ զսպառնին հարցը զորութիւն լուսի այլեւս, քանի որ բնակիչներ չկան այնտեղ: Բայց այդ ոնցորոք զազաւթարարը զոնչ կորեւոր չքովկոնալ ձեր առիւ, թէ զգալթային այդ ժողովուրդը զայրացուցած էր զինք անկախութեան յանդուող ձգտումներով: Իսկ ի՞նչ կ'ընէիք, պարոն, այնպիսի կառավարութեան մը, որ ի սպառ ջարդէց ու մէկ կերպով անկարգութիւն չընող, իրեն հպատակ երկու միլիոն բնակիչներ, զկառավարութեան հարցը զորութիւն չկարենայ անկախութեան ձգտել: Ամենայն հասանալիսութեամբ, եման կառավարութեան մը համար զուք կը պահանջէիք այնպիսի վերա մը, որ համապատասխանէր ներքինիքին Միջազգային Գաւառանի որոշումներուն, որոնցմով ցեղասպանութիւնը համարուեցաւ իրբն ամբողջ մարդկութեան զէմ գործուած սեխը, արժանի ծանր պատիժի: Այդ որոշումները, որքան զիտեմ, սասցան Միջազգային Օրէնքի սեմ, եւ ի զորու կը մնան միշտնայ այսօր:

Վերս յիշած եմ արդէն, թէ հայերը կը ջարդուէին ո՛չ միայն Արեւմտեան Հայաստանի մէջ, այլեւ սեմանեան կայսրութեան ամբողջ տարածութեան վրայ, ինչպէս այն օրերու մայրաքաղաք Կոստանդնուպոլսոյ մէջ: Կը ջարդուէին իրբն այլապատան փոքրամասնութիւն. բուն մը, որ ներքինիքին Միջազգային Գաւառանի որոշումներու լոյսին տակ կը ներկայանայ իրբն մարդասպանութեան քիփիփ օրինակ:

Այսօր, թուրքիան ինչպէ՞ս կրնայ ստալ ընդ կիրպոնքի թուրքերու իրաւունքներու պահանջը, երբ ինք, իրբն պետութիւն, ազգային փոքրամասնութիւններու հարցերը կը լուսնէր զուրոյում կամ հրապարակ: 1915-1920 թուականներու ջարդերը հայերու հերթական իններորդ կատարածն էր, 1877ին սկսեալ: Այդ ժամանակաշրջանին մէջ, եւ անկէ ուշ, ասան-ասին կը կատարուէին ջարդերը՝ յոյներուն, օսերտներուն, ասորիներուն եւ արարներուն (1915) զէմ. իսկ 1916ին կատարուեցաւ պուլկարներու հանքանանթ ջարդը:

Եւ միւս այնպէս կը գաւառարուէր, որ բազմաթիւ թուրքեր կը գաւառարուէին կատարանները, միայն թէ՛ անոնք, որ կը գաւառարուէին՝ իշխանութեան շունչին, իսկ անոնք, որ իշխանութեան ունէին՝ կը ջարդուէին:

Ինչպէս զիտեմ, ձեր վեմութեան, Միջազգային Ատեանին վճիռն է, ի միջի այլոց, որ իր որոշումները ի զորու են ո՛չ միայն ներկայի եւ ապագայի համար, այլեւ անցեալի, այսինքն՝ յետագարմ աւ սեխն: Այդ որոշումներով գաւառարուեալութեան հիմնական սեխի թուր սեխները զործուած էին Գաւառանի սառնակ նիտանի սառնակ. այսուհանգեմ, նոյն այդ որոշումներուն հիմքով բանասերուեցան եւ պատիժ կրեցին Երրորդ Ռայիի մարդասպան մեքենային զիտարար կողմակերպիչները: Գերմանիոյ ներկայ Գաւառանային Հանրապետութեանը կարծէք միակ պետութեանն է, որ պատերազմէն ջանաւ արի ծառք, պատերազմի յետագործները կ'ուզէ զերմ կայսուցանել հետապնդումէ: Միջազգային արարներ զերթէ թուր պետութիւնները կը պնդեն, որ եման ոնքերն ժամանցումի նմանակալ չեն: Եւ նոյնմիակ Արեւմտեան Գերմանիոյ կառավարութիւնը, որ ասորքը պատեւաններով յատկապէս կաշկանջուած է իր ներքին ջաղաքակաւութեան մէջ եւ կը հրամարի անհաս յերագործները անհաստակ հետապնդել, բայց վճի՛ն ներթ չէ զարմներ զործուած ոնքերն փոխարէն հասուցում ընելու ինչորը, հարաւորութեան սահմանին մէջ:

Իսկ այս պարագային, իսսցօ կը վերաբերի յատկապէս հայ ժողովուրդին փոխհասուցման: 1915ի ջարդերը կողմակերպողներէն զիտըր կ'ազրին այսօր, իսկ ապրողները, այն ոչնչորդական օրերուն, եղած են, շատաւս, երկրորդական զերագաւարներ: Կը մնայ միայն ափսոսու, որ թուրքերը իրենք, օրին, չպատեցին իրենց ոնքագործները: Հիմա արդէն որոշ անհասներու որոշ պատիժ սահմանելու համար ուշ է: Թուրք պետութեանն ու ժողովուրդն են, իրբն ամբողջութիւն, որ կը կրեն յետան արի սառնակ զործուած եղանին պատասխանատուութիւնը եւ պարտաւոր են հասուցումի այնպիսի մեմ մը զտնել, որ հայերը բաւարարուին, եթէ երբեքն կարելի է հասուցանել միլիոնաւոր մաները եւ այն միւս միլիոնները, որեք թուրքերու մեղքով ոչնչացուեցան զեւ աշխարհ յեկան...

Հասուցումի միակ մեք, որուն մասին արժէ խօսիլ, զոնքու իսկական ժառանգորդներուն՝ այսինքն ի սփիւսու աշխարհի սրտած հայերուն՝ վերագարմնելն է իրենց հայրերուն հոգերը, որոնց սահմանները պէտք է որոշուին փոխազարմ համաձայնութեամբ:

Թուրքերը իրաւունք չունին օգտուելու հայրական հոգերէն, քանի որ փաստորէն անոնց աբրուցան մարդասպանութեան համարով, այսինքն՝ մարդկութեան զէմ սեխը զործելով: Այն իրողութիւնը, որ ցարը անոնք կ'օգտուին այդ հոգերէն անուխորէն կը հակաւ արդարութեան տարբարան սկզբունքներուն: Զէ՛ որ ասորիս ուրիշ բուն պիտի ընշանակէր, եթէ ոչ վարձատրութեան՝ ունքերն համար:

ՊՈՂՏԱՆԻ ԿԻՊԱՐՍԿԻ

ԻՏԱԼԻԱՆ՝ ԱԶԱՏԱՐԱՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԱՌԻՃԻ ԱՌԻՄԱԹՔԻ.— Իտալացի էջիմաուզէտ, անտեսազէտ եւ զազաքական գէմբ: Մեռած է 1841ին, Վենետիկ, մեռած՝ 1827ին, Հոսմ: 1891էն մինչև 1900, եղած է բազմաթիւ անգամ նախարար: Վարչապետ՝ 1910-1911:

Լուիսի Լուսինաթի, մէկը Քուրջ քաղաքացոս պետութեան անհաշտ Քշիմիներէն, երկարատեւ պայքար մը մղեց ի նպատակ Հայաստանի ու զրեց շարք մը յաջողակներ, որոնցմէ իբրև նմոյշ կը ներկայացնենք երկու նատուածնոց նետեւալ էջը:

Օսմանցիները, արժեցնելու համար իրենց տիրապետութիւնը, մինչև այս վերջին շարքափերս վերադառնալու թայտառնեցին ինքզինքնում սովորական դուրձած կտորածները: Այս սարսափելի պատերազմը հայոց զարդով սկսաւ եւ կարելի է ըսել, թէ անով պիտի վերջանայ: Արդարեւ, էրզրումի համագումարէն յետոյ, ուր հայ ժողովուրդին բաշտը ներկայացուցիչները հաւաքուած էին եւ, սքանչելի ժեստով մը, որ պատմութեան մէջ պիտի մնայ՝ մերժած էին Դաշնակիցներու գէմ գործելու թուրք պատուիրակներու առաջարկները, առաջ եկաւ այն գարեւորելի կտորածը, որուն ընթացինքն էիւրտերը 700 հազար հայեր ջարդեցին: Այս կտորածը մեթուտի եւ կատաղութեան տեսակէտով իր նմանը չունի պատմութեան մէջ: Փամանակը կը պակսի՝ պատմելու համար, թէ ինչպէս հայ կամաւորները մեր կողմը բռնած կովկասի եւ Պաղեստինի մէջ մեծ քաջութիւններ եւ զինուորական յաջող գործողութիւններ կատարեցին, որոնք Անգլիոյ երեսփոխանական ժողովին օ-

րակարգին մէջ յիշուեցան: Ներելի է գարմանալ, թէ ինչպէս Դաշնակից կառավարութիւնները, որ ճանչցան եւ լաւրին, ինքնավարութիւնն ու քաղաքական ներկայացուցչութիւնը լեհերուն, չեխերուն եւ հարաւի սլաւներուն, չյօժարեցան նոյնը ընել դժբախտութիւններով առանձնաշնորհեալ հայերուն պարագային: Բայց մտալուս է ազատագրութեան օրը: Նախածեղութիւնը կը պատկանի Խալիպայ, որ միշտ քաղձաց իր իսկ անկախութեան հետ լուծի տակ գտնուող միւս բոլոր մարդոց անկախութեան:

Խճը նաք պատիւ Խալիպայ համար, որ կը վերստեղծէ միջնադարեան իր մեծ հանրապետութիւնները Հայաստանին միացնող կապերը. եթէ ստանձնէ ազատագրումը այս փոքր եւ մեծ ժողովուրդին, այնքան անգամներ խարուած քաղաքական սնտի խոստումներով եւ որ միմիայն քաղաքական ամբողջական անկախութեամբ կրնայ գտնել այն խաղաղութիւնը, որուն դարերէ ի վեր յումակտս կը ցանկար:

Իտալիան ազատարարը Հայաստանի, — այս մեծ պատիւը կը մաղթեմ հայրենիքիս:

ԱՌԻՃԻ ԱՌԻՄԱԹՔԻ

(«Քարրիէրէ Տելլա Սերա»
26 Նոյեմբեր 1918)

Ս. Ս Ա Ն Ի Ն Ե Ա Ն

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Մեզ սպանենէլ էին :

Մեզ սպանենէլ էին ու մեր վրայ խըն-
դացել :

Փաստ է, որ Հարիւր հազարաւոր
մեր եղբայրները, մեր փոքրիկ աղբա-
րիկները խոշտանգուել են, սպանուել :
Փաստ է, որ Հարիւր հազարաւոր մեր
մայրերը, մեր քոյրերը, մեր քոյրիկնե-
րը լակուել են ու պղծուել :

Փա՛ստ է, ահաեւ իբրէն վիրաւորա-
կա՛ն : Ցասուժնայի՛ց :

Ինձնից բացի ոչ ոք չգիտի, թէ ան-
զօրութիւնից, այդ ահաւոր փաստի յի-
շողութիւնից, ես ծածկօրէն ինչքան եմ
լացել : Ի՛նչ ծրարիւններ եմ որոճացել
վրէժխնդէր լինելու համար :

Շա՛տ, շա՛տ ծրարներ : Ամէնքն ալ
անհնար : Երազ : Վառ ցանկութիւն :

Սակայն, ես, որ իմ անձնական
կեանքում երբեք երջանիկ չեմ եղել, ե-
րեք անգամ երջանիկ պահեր եմ ապրել :

Հիմա ես ուզում եմ իմ այդ երջանիկ
պահերի մասին պատմել :

Ա.

Այդ Գերմանիայում էր, Երկրորդ
Համաշխարհային պատերազմից անմի-
ջապէս յետոյ : Ես նոր էի ազատուել
ուսուցանողական ճամբարից : Ճամբար-
ներում տարիներէ շարքաւ աշխատան-
քից եւ կիսատօբից ես հիւսած էի,
սպառուած : Մարմնով վտիտ :

Հոգեպէս ես բնկճուած էի : Պատե-
րազմը զամել էր մէջիցս կեանքի նկատ-

մամբ ունեցած խանգաւառութիւնս :
Հոգիս դատարկ էր : Էլ ոչինչ ինձ չէր
ուրախացնում : Ոչի՛նչ :

Եւ մի օր էլ ուրախութիւն : Յնձու-
թիւն : Բերկրանք :

Ասեմ, որ այդ ժամանակ Գերմա-
նիան աւերականոց էր եւ ամէն ինչ բաժ-
նելափի էր ենթարկուած : Ուրեմն մի
քիչ հաց ունենայու համար, ինձ պէտք
էր քաղաքապետարան գնալ, քորտ ստա-
նալու համար :

Ահա այդտեղ էր, որ կատարուեց
անսպասելին :

Ես հերթի էի կանգնած, երբ ինձ
մտեցաւ սելսի պէս երկարուկ գլխով
մէկը եւ սուսերէն Հարցրեց, թէ արդեօք
հա՞յ եմ ես :

— Այո, — ասացի :
— Իսկ ես թաթար եմ, — ասաց նա
այնպէս, որ կարծես, որ ես շատ ուրախ
պիտի լինէի այդ բանի համար :

Սակայն ես լուռ մնացի :
— Զեր վրայ մի որեւէ տպաւորու-
թիւն չթող՞ց իմ ազրբէյջանցի լինելը,
— Հարցրեց նա :

— Ոչ, — ասացի :
— Բայց ուրիշ հայեր մտերմութիւն
են ցոյց տալիս, երբ մի ազրբէյջանցի են
տեսնում, — ասաց նա :

— Ես չէ, — ասացի :
— Ես Խան Խոյսկիի որդին եմ, —
ասաց նա :

— Ես այդպիսի մէկին չեմ ճանա-
չում, — ասացի :
Իրապէս չէի ճանաչում : Խորհրդա-

յին դպրոցում, այն օրերին ո՛չ հայոց հին պատմութիւն էին սովորեցնում եւ ոչ էլ հայ ժողովրդի ժողով անցեալի պատմութիւն: Համապատասխան դրահանութիւնն էլ արդիւրեւ չէր եւ ես չէր ղիտէի, թէ ով է եղել Պան Պոյսկին:

— Կան Պոյսկին ազատ Ազրբէյջանի վարչապետն էր, — ասաց նա:

Ես ուներս վեր հանեցի:

— Դուք սպանեցիք չօրս — ասաց նա ժպիտով:

— Մենք՝ ո՞վ, — հարցրի:

— Դո՛ւք՝ հայերդ:

— Ինչո՞ւ, — հարցրի:

— Հօրս ահարեկեցին, ամբաստանելով ջարդարարութեան մէջ:

— Ուրեմն ձեր չօրը սպանել են հայկական ջարդեր կազմակերպած լիւնելո՞ւ համար, — հարցրի ականջներես չհաւատալով:

— Այո՛ւ...

— Նրան այդպէս էլ տէ՛ր էր, — ասացի բերկրանքով:

— Հայրս չէր մեղաւորը: Այդ Ձիւանչիւրն էր:

— Նա՞ ով էր:

— Նրան էլ սպանեցիք:

— Ես իմ ամբողջ կեանքում աւելի հրաշալի լուր չէի լսել, — ասացի եւ սկսեցի ծիծաղել ու անգուսպօրէն ծիծաղել:

— Դուք ծիծաղո՞ւմ էք:

— Տեսնում էք, որ այո՛ւ:

— Ինչո՞ւ:

— Որովհետեւ երջանիկ եմ:

— Դուք միշտ երջանիկ է՞ք:

— Ո՛չ: Ես ինձ ամէնից դժբախտ մարդն եմ համարում: Բայց հիմա դուք ինձ երջանկութեան երկու լուր հաղորդեցիք:

Ք.

Տարիներ անցան, եւ ես ինձ դատայ Նիւ Եորքում: Աղբրում ես եղիլ էի Բոստոնում: Բոստոնում մենակութիւնից եւ տխրութիւնից ես ա՛նդամ շնչել չէի կարողանում: Ինձ համար օդն այնտեղ հալուած եւ սառեցուած ապակի էր թրւում: Բոստոնում մարդիկ չեն խօսում,



ԱՐԱՐ ԵՐԿԱՆՅԱՆ
Խաճ Խոյսիկի ահարեկիչը

չեն ծիծաղում, եւ նոյնիսկ չեն ժպտում: Կիսակենդան մարդիկ, գուճատ եւ հողապոյն դէմքեր: Բոստոնն ինձ համար համատարած ուրուականաց էր թւում:

Նիւ Եորքը մի քիչ ուրիշ էր: Բայց նորից ես մենակ էի, մենամենակ: Ութ միլիոն ժողովուրդ եւ ես մենակ: Ըստ երեւոյթին, նիւեօրացին դուռ է մենակութիւնից փախելու ձեռք եւ խնկարեցի:

Բայց Բոստոնը եւ Նիւ Եորքը բացառութիւն չեն կազմում: Ամբողջ Ամերիկան մենակների աշխարհ է: Սուտ են ծաղարանները, գինեաները, գիւերային ակումբները, զուարճարանները: Մարդիկ այն վայրերն են գնում իրենց մենակութիւնը մոտանալու համար, բայց այդ վայրերում իրենք իրենց տեսիլ մենակ են զգում: Մենակ են զգում քառանկյուններն ու քնտանիքների անդամները, իրենց մենակ են զգում եւ ամուսինները, որոնք միասեղ նոյն անկողնում են պառկում: Եւ այդ է պատճառը, որ Ամերիկա-

յում ամէն երեք ընտանիքից մէկը բաժանուած է կամ բաժանուելու նախապահելն է:

Նիւ Եւրոբում մենակութիւնից բացի, եւ տառապում էի անդործութիւնից: Ամերիկայում ինձ նման մէկը, որը իր մի քանի դրեքից բացի ուրիշ սեփականութիւն չունի, իրաւունք չունի անդործ լինելու: Ձի կարող սպրեկ: Անգամ սենեակի վարձը չի կարող վճարել:

Պէտք է ասել, որ անդործ մէկն ոչ այնքան նիւթականի պահասից է նեղում, ինչքան բարոյական ճնշումից: Անդործ մէկն ինքն իրեն հասարակութիւնից վտարուածի պէս է զգում:

Այդ օրերին էր, որ ես պատահաբար ծանօթացայ, այժմ հանդուցեալ, բժիշկ Մատուր Բաղդասարեանի հետ:

— Մուրէն, — ասաց նա, — պէտք է մի որեւէ մասնագիտութիւն ձեռք բերես:

Եւ որովհետեւ ինք բժիշկ էր, ուղեց ինձ քաշել բժշկական ասպարէզ: Նա նախ ինձ սենեակ տուեց եւ սկսեց օգնել աննստապէս: Մի օր էլ իր պալատանման տունը հրաւիրեց բազմաթիւ հիւրեր, որոնց մէջ էր նաեւ մի բժշկուհի՝ ուսուցիչականի իշխանական մի հին տունից:

Բժիշկ Բաղդասարեանն ինձ ծանօթացրեց բժշկուհու հետ: Բժշկուհին խոստացաւ ինձ աշխատանք տալ իր տարրալուծարանում, մի աշխատանք, որն ինձ անծանօթ էր: Բժշկուհին խոստացաւ ինձ սովորեցնել:

Սակայն այդ չէ կարելորն, այլ ամիս, թէ ինչպէս բժշկուհու ասնր ես հանդիպեցի գոլիցիներէն տունից մէկին:

Ասեմ, որ իշխան Գոլիցիներ ցարերի ժամանակ Գովկասի փոխարքայի պաշտօնն ու Հայաստան քաղաքականութիւն էր վարում:

Նրա աթոռանիստ քաղաքն էր Թիֆլիսը:

Այդ ամիս Գոլիցիներն էր, որ Բաֆֆիէ աննախընթացօրէն փառաշուք յուղարկաւորութիւնն իր պալատի լուսամուտներէց մէկից դիտելիս, դարձել եւ իր օգնականներին տեսել է:

«Հայերը հրաշալի թաղողներ են երևում»:

Սակայն Գոլիցիների հայաստան քաղաքականութեան համար, նա մէջտեղից պիտի վերցուէր:

Ես ծանօթ չեմ Գոլիցիների անբեկման մանրամասնութիւններին, իմ լըսածս այն է, որ երկու Հայոցիներ յարձակում են նրա վրայ, երբ նա կառքով ինչ-որ տեղ էր գնում: Սակայն դժբախտաբար անարեկումն անյաղ է լինում, բայց Գոլիցիներ սարսուղից թողնում է իր պաշտօնը եւ Պետերբուրգ է փախչում:

Գոլիցիներից յետոյ էր, որ Գովկասի փոխարքայ նշանակուեց իշխան Վարնցով Դաշկուլը, որը իրը թէ ասարտակիւթօրէն Հայաստան է եղել:

Մի օր, բժշկուհին իր տանը մի մեծ կոնյունք էր սարքել եւ ինձ էլ հրաւիրել: Երբ ես մտայ կոնյունքի սրահը, այնտեղ բազմաթիւ հիւրեր տեսայ, մեծ մասով տարիքոտ: Դրանք բոլորն էլ Ռուսաստանից փախած նախկին զազնուականներ էին, ուստի, կամ էլ ուսուցիչական ծաղումով:

Բժշկուհին ինձ ներկայացրեց ներկաներին եւ տալով անունս եւ ազգանունս, անմիջապէս հրաւիրեց սեղանատուն, ընթրիլու:

Ես Հագիւ էի նստել ինձ յատկացուած աթոռին, երբ մօտս եկաւ եւ կողքի ազատ աթոռին նստեց մի շատ տարիքաւ մարդ, որը թթուած երես ունէր:

— Իմացայ, որ Հայ էք, — ասաց նա:

— Այո, Հայ եմ, — տասցի:

— Իմ ազգանունը Գոլիցին է, — ասաց նա, շեշտակիօրէն դէմքիս նայելով եւ սպասելով իմ անդրադարձին:

Ես դիտէի, թէ նա ինչ էր հետապնդում: Փոխարքայ Գոլիցիների ղէպը մի քիչ ծանօթ էր ինձ: Եւ ես անմիջապէս զուարճութիւն զգացի ներսուսու: Ձգիւտեմ, թէ ինչպէս բացատրեմ, որովհետեւ նման խոսակցութիւններն ամէնօրեայ եւ սովորական չեն: Բայց դու քեզ անսահմանօրէն Հպարտ ու երջանիկ ես զգում, երբ քո ժողովրդի ոխերիմ որ-

դին կամ էլ մտտիկ ազդականը թեղ ասում է՝ «դուք սպաննեցիք իմ հորը, դուք ուզեցիք սպաննել իմ հորեղբորը»:

Յնծութիւնից եւ մոռացայ բժշկուհու ընդունելութիւնը եւ ծագրորէն երկարացնելով զարմանքս, բացազանչեցի:

— Ի՞նչ էք ասում: Թերեւս դուք ազդական էք փոխարքայի հետ:

Ծերունին հասկացաւ, որ ես զուարէանում եմ եւ է՛լ աւելի մոայլուեց:

— Նէ վեսելիս (մի ուրախացիր), — ասաց նա, — դուք չկարողացաք սպաննել հորեղբորս:

— Այ թէ չկարողացանք, այլ չուզեցինք, — ասացի:

— Դա՞. — ծաղրեց նա:

— Այո:

— Վոս նովստոյ (Ահա, նորութիւն), — ասաց նա:

— Փաստ է, — ասացի:

— Եթէ պիտի շտապանէիք, հաղա ինչո՞ւ յարձակուեցիք, — Հարցրեց նա:

— Պիտի սպաննէինք, բայց ձեր հորեղբոր կիներ տեսնելով ահաբեկիչների դաշոյնները, ճշացել է եւ իր ժարմնով ծածկել կառավարիչին: Հայերը կանանց վրայ երբեք զէնք չեն բարձրացրնում:

Իժկուհուհին մտնեցաւ մեզ եւ սկսեց լսել: Յետոյ նա ձեռքը դրեց ծերունու ուսին:

— Դեսպոնա վասիսա, — ասաց նա, — այդ բաներն անցել են: Իսկ հիմա ուսելու ժամն է:

Ծերունին ելաւ տեղից ու զնաց:

✱

Մի օր, վաշինգտոնում, անցնում էի մի շէնքի լայն ու երկար միջանցքով, երբ գէմուղէմ եկայ մրացի իմ բարեկամ Պետրէին: Նա քայլում էր մի ձիւնի պէս ճերմակ մազերով եւ կարմիր-կարմիր զէմքով ու շատ պզտիկ մի ծերունու հետ:

Ես բարեւեցի եւ ուզեցի անցնել, բայց Պետրէն ինձ կանչեց:



ԴԻՐ
Իշխան Նակաշիցի տեսքով

— Սուրէն, մտայիր, ես ուզում եմ թեղ ծանօթացնել իմ լաւ բարեկամ իշխան Նակաշիձէլի հետ:

Ես մտնեցայ եւ զլիտով բարեւեցի ծերունուն, առանց անգրագառնալու նակաշիձէ անուանը:

Նակաշիձէն ձեռքը պարզեց եւ ժպտաց:

— Ես ձեր կողմից սպաննուած Բաքուի նահանգապետ զօրավար իշխան Նակաշիձէի եղբոր որդին եմ:

— Ա՛յ, ա՛յ, ա՛, — դուարճացայ ես:

Չզիտեմ, թէ ինչու, ծերունին նայեցաւ խանդափառուեց:

— Թէեւ հորեղբորս սպաննողը Դրրոն էր, բայց ես եւ նա լաւ բարեկամներ էինք:

Ընկերս՝ Պետրէն, որ մի ազնիւ մրացի երիտասարդ էր, եւ որի հետ մենք երբեք Հայ-մրացական ազդայնական դժտութիւնների մասին չէինք խօսում, զարմացած՝ մէ՛կ նակաշիձէին էր նայում, մէկ ինձ, երեւի մտածելով, թէ

այդ երկուն ինչպէս կարող են մի ըս-
պանութեան մասին խօսել եւ ծիծաղել:
Նկատելով Պետրէի տառապանքը,
եւ ուղեցի շուտ բաժանուել նրանցից:
Սակայն ծերունի Նակաշիմէն բռնեց
Քենոսցիցս:

— Մէկ վայրկեան եւս: Քէնու իմ
ինչորանքով Դրոն ինձ պատմել է, թէ
ինչպէս օգնանեց Հօրեղոսոս, բայց միշտ
էլ ժողովքիս հետ նրան հարցնել, թէ նա
քանի՞ տարեկան էր ահաբեկման ժամա-
նակ: Դուք զիտէ՞ք:

— Այո, — ասացի, — այդ ժամա-
նակ Դրոն 21 տարեկան էր:

Իշխան Նակաշիմէն է՛լ աւելի խան-
դավառուեց եւ դարձաւ դէպի ընկերս:

— Տեսնում ես, Պետրէ՛: Քանի՞ տարեկան
տարեկան լինել եւ օրը ցերեկով մի նա-
հանդապետի օղջը հանել այն էլ թաթա-
րական թաղում, Բաբելում, այդ պէտք
է, որ մի արտակարգ խիզախութիւն
լինի:

~*~

Ինչպէս երևում է՝ ինձ բերում է,
որպէ՞զդ մի աղբրէլանցի, մի սուս
եւ մի վրացի, երբ ինձ հետ ծանօթա-
նան, սահու լինեն՝ դուք, հայերդ, ըս-
պանեցիք իմ Հօր, իմ ազգակրօնին, իմ
Հօրեղոսոս:

~*~

Թուրքի նկատմամբ եւ դարչանք
ունեն: Եւ այդ դարչանքը այնքան մեծ
է, որ երբ ես Հայերէն կամ օտար թեր-
թերում թուրքի մասին մի զրուցիւն եմ
կարդում, ընթերցումից յետոյ անմիջա-
պէս վազում եմ լուսցարան եւ ձեռքերս
օճառով լուանում եմ:

Բայց, ինչպէս նախապէս ասացի,
ինչպէս երևում է՝ մեր ահաբեկչութիւն-
ների գծով ինձ բերում է: Եւ ես սպա-
սում եմ, որ մի օր էլ մի թուրք կամ էլ
թուրքեր, երբ դիտենան, որ ես հայ եմ,

ինձ մօտենան եւ ասեն, դուք՝ հայերդ
սպանեցիք մեր Թալաթիւն, մեր Ջե-
մալին, մեր Պեհլուտին Եաքիբին, մեր
Սաիդ Հայիմին, մեր Ջեմալ Ալիմին...

Այդ թուրքերին եւ ցնծութեամբ
կ'ընդունեմ, թէ եւ յետոյ ես կը վազեմ
լուսցարան ձեռքերս լուանալու:

~*~

Այնպիսի մարդիկ բաժանուած են
երկու իրար հակադիր դասերի: Այն է՝
երջանիկներն եւ դժբախտներն: Ես անձ-
նապէս ինձ դժբախտներից դժբախտ եմ
համարում, եւ այդ այդպէս է:

Սակայն այս պահիս, երբ դրո՞ւ եմ
այս սողերը, ես ինձ շատ երջանիկ եմ
զգում: Որովհետեւ տարիներ տառջ,
երբ ես պատանի էի, աննշանք ունէի
տեսնելու հայ մի ազգային Հերոսի:

Արտասահմանում ես բախտ ունե-
ցայ տեսնելու Արշալիք Շիրակեանին,
հանդուցեալ Յակոբ Խաչմանեանի միջո-
ցով Սոզոմոն Թեհլերեանին, ծածօթա-
ցայ եւ բարեկամացայ Միսաք Թորլաք-
եանի հետ:

Միաքը լեզուային դժուարութիւն
ունէր: Մի օր ես նրան հարցրի.

— Միտա՞ք, Ջիւանշիրից բացի, քա-
նի՞ թուրք ես սպանած:

Նա անակնկալի եկաւ, բայց կակա-
զելով ասաց.

— Ես ի՞նչ դիտեմ, սպանած եմ:
Ես ծիծաղեցի:

— Միտա՞ք, — ասացի խանդավա-
ռութեամբ, — ինչ օր ցանկանաս, ես
պատրաստ եմ քեզ համար անելու:

— Կ'ընե՞ս:

— Կ'ընեմ:

— Դե՛հ, եկուր իմ յուշերը գրենք:

Ես սարսափեցի: Միաքը խօսել
չդիտէր, էլ ուր միաց, որ պատմել կա-
րողանար: Սակայն ես խօսք էի տուել
մեր ազգային Հերոսին, մէկին, որն ինձ
համար հազար-հազար անգամ աւելի
մեծ էր, քան այնպիսի բոլոր երկրների
վարչապետ-մարչապետները, նախա-
դահ-մախազանները, թագաւոր-մազա-
ւորները:



ՄԻՍԱԲ ԹՈՐԱՔԵԱՆ
ձիւանդիրի տեսքեկիչը

— Գրենք, — ասացի: Եւ սկսեցինք զրել: Մէկ լման տորի, որը տար ժամ: Եւ ժողովքէ կի ամէն ինչ, նոյնիսկ մի կտոր հաց վաստակելու ծանր խնդիրը: Եւ գրեցինք Միտաքի կեանքի պատմութիւնը, որը յայտնի է «Օրերուս կենս» վերնագրով: Միտաքի այդ գիրքը, թերեւս հինգ անգամ աւելի մեծ ծաւալ ունենար, եթէ Միտաքը պատմել գիտէնար: Բայց Միտաքը ահարկելի էր: Նա գիտէր ահարկելի մեր ցեղի ոսոխներին եւ նրա այդ բնական ընդունակութիւնը հազար-հազար անգամ աւելի մեծ էր, քան պատմելու ընդունակութիւնը:

Միտաքն առիւծ էր: Առիւծները միայն մոնչալ գիտեն, եւ ոչ խօսել:

Կար ժամանակ, որ ամբողջ աշխարհը ցանկանում էր Ամերիկա գնալ: Եւ էլ գնացի Ամերիկա: Միտաքն էլ Ամերիկա եկաւ: Ամերիկան Միտաքի եւ իմ տեղը չէր: Միտաքը նախ իր տարիքի բարումով չէր կարող աշխատանք ունենալ, եւ, երկրորդ՝ Հոգեպէս այս շոր ու ցամաք երկրում Միտաքը ձանձրանում էր:

— Միտաք, տեսնում եմ, որ ձանձրանում ես, — մի օր ասացի նրան:

— Հա, ձանձրանում եմ:

Եւ որպէսզի չձանձրանար, Միտաքն անդատականի նման այս երկրի հայաշատ քաղաքները այցի էր գնում: Նա ամէն տեղ բարեկամներ ունէր, եւ ամէնքը սիրում էին նրան:

Մի օր, Նիւ Ենթում հանդիպեցի նրան եւ ասացի.

— Միտաք, չեմ ուզում, որ դու միշտ այդպէս թափառական լինես: Աշխատանք որ ունենամ՝ բնակարան պիտի վարձեմ եւ դու եւ ես միասին պիտի ապրենք:

— Ապրինք, Մուրէն, ապրինք:

Բայց Միտաք գնաց:

Երբ Միտաքը մահամերձ էր, նրան այցելութեան գնաց եւ աղօթեց Ամենայն Հայոց Հայրապետ Վազգէն Առաջինը:

Միտաքից առաջ գնացել էին նրա պաշտօնակից ուրիշ ահարկելիները: Նրանք զարկել էին մեր ոսոխին եւ ոսոխներին, ցոյց տալու համար, որ նենգաբար հայ մանուկ սպաննողը լան-սասակ է լինում:

Նրանք զարկել էին: Եւ մենք դեռ պիտի զարկենք:

«Զարկի՛ր լաօ, մըռնիմ քոզի»:

Ս.ՍԱՆԻՆԵԱՆ

ՋԻԻԱՆՇԻՐԻ ԱՆԱԲԵԿՈՒՄԸ

1921 Յուլի 18ին, երկրային երկու ինքնաշարժներ եկան ու կանգ առին Հերանոցի դրան առջև: Բարձրահասակ, փափախը դիտուն՝ ձիւանչիբ դուրս եկաւ 4-5 հոգիի հետ ու միտիւ բարձրացան Հերանոց: Ուշգիբ կը հայտնէր: Փէլ վերջ դուրս եկան Հերանոցէն քուրք միտիւ եւ մտան մասիկ Փըթի Շանի պարտէզը, յառաջացան զէպի անկնածայրը: Մենք երուանդ Գուստուքեանի հետ մտանք պարտէզ. բազմութիւնը խնուան էր, դժուար էր շարժիլը. կարիկ շեղաւ յառաջանալ եւ իր նստած տեղը գարնել: Մտկայուած նստանք մուտքի դրան մօտ զեռնուած նստարանի մը վրայ եւ որշեցինք, որ գործի անցնիմ դուրս գալէն ետք, Հերանոցի մուտքին:

Երկար սպասելէ ետք, ժողովուրդը խուռնրամ սկսաւ դուրս գալ: Ժիւանչիբ արդէն անցեր էր մեր առիւկէն: Ամբոխի խոնաւածութեան պատճառով չկրցայ հասնիլ մուշը, շատ որոշ կը տեսնէի զենք: Դէպի Հերանոցի մուտքը կը մօտեանար, որուն 50-60 մեթր արդէն ճակեցեր էի: Դժուար էր ժողովուրդը եւ ճամբուն երկու եզերքներուն շարուած բազմաթիւ ինքնաշարժները ճեղքել ու անցնիլ: Մտանկի, որ այս արդիւններով պիտի չկրճած հասնիլ իրեն: Ուստի՝ ինքնաշարժներու մէջտեղերէն արագ-արագ մօտեցայ:

Այժմ հազիւ 30 քայլ հետո էի իրմէ. նկատեցի, որ դուրսը եւ զարձակ ու սկսաւ շարժիլ հայրի, սպա հորին շարունակեց ճամբան: Կտակած արթնցաւ մէջս, թէ թերեւս կտակածս է ու պիտի խուսապի: Ուստի՝ անին կերպով պատրաստ զգացի ինքզինքս, հոգեպէս ու մարմնայէս պինդ ու անխոսով: Եւ հազիւ զլուրք զարձակած պիտի գալէր, յամրոցեցայ հասնիլ քովը: Քաշեցի ատրճանակս: Շատ երկարահասակ մարդ էր, մընացի ցած, պարսաւորուած գարիկ կողքին, փոխունակ դիտել, ատրճանակիս փողը գրեթէ հագուտակն կպած: Ուրիշ կերպ չէր ըլլար. եանաւ ինքնաշարժ կար, կողքերը՝ ժողովուրդ, ինքն ալ դիմացս: Ազատ շարժելու հնարաւորութիւն չուէի:

Առաջին զեղակին շինեաւ. միայն ժողովուրդը թիւ մը բացուեցաւ: Ընդհակառակն, շակուեցաւ եւ երկու ձեռքերս կրցաւ ամուր բռնել, քանի որ եւ շուռնելու կարելիութիւն չունէի: Անքերս բռնելը շատ լաւ եղաւ, որովհետեւ, զարմաւ զէպի իննի եւ կուրծքը առաջ եկաւ: Այս



անգամ երկու զեղակ եւ տեղաւորեցի ուղղակի կուրծքին: Ինկաւ:

Երբ ուղեցի փողոցի անկիւնը դառնալ, ակտուրիս հասաւ ձիւանչիբի ձայնը, որ խնայաւ — օգնութիւն — կը պուար: Կէս դիւրուան ժամը մէկի ատեններէ էր: Կտակած արթնցաւ մէջս, թէ մտած չէ: Ծանկարծ միաքս ինկաւ կրցաւ, որ տեսեր էի քանի մը որ առաջ եւ ընկերներուս պատմած: ...Այս երազը տղոց կողմէ մեկնուեցաւ իրեւ գործիս անյախոջութիւն:

Ահա այս երազի վերջումսով անկիւնը շարժած, երբ մայրս ակտուրիս հասաւ, մաքուս ըսի. «Մեռած չէ, վերադառնաւ ու վերջացնեմ»:

Ես զարձայ զէպի դիտել: Երբ մօտեցայ, զլուրք հուարուած էի 20-30 հոգի: Բոլորն ալ շուռնեցան՝ ատրճանակը ձեռքս տեսնելով: Մօտեցայ եւ դատիւն փողուած ձիւանչիբի գիտուն վրայ կեցայ: Կուրծքին զեղակ մըն ալ պարզեցի: Ապա շուրջս հայեցայ եւ տեսայ, որ 4-5 օտտկաններ, ատրճանակներ ձեռքերին, բռնած էին այն անկիւնը, ուրիշ կրեայի փաթուղաւ տալ:

Ատրճանակիս մէջ մնացեր էին շորս փամփուշտներ: Նորը լեցնելու հնարաւորութիւն չունէի: Չայրկենայէս ինքզինքիս եկայ, շուրջի անիւք բարդացնել խնդիրը եւ հաշտուեցայ յանձնելու զազգափարին հետ: Թեքուեցայ, բացուեց գրի ինքնաշարժի կողքին, հատ մը կրակեցի օդին մէջ ու սպասեցի:

Այդ պահուն թուրք օտտիկան մը մօտեցաւ, բռնեց մախ բացուեցաւ եւ կ'ուղեր ատրճանակը ձեռքս առնել: Ըսի. «Չգիտեմ, թէ ոչ լաւ նըման կը ստակեցնեմ»:

Այսպէս շարուած կեցած էինք, երբ հասան Քրահասցի օտտիկանները...

ՄԻՍԷԼ ԹՈՐԱԲԵԱՆ

ԷՆՎԷՐ ՓԱՇԱՅԻ ԱՀԱԲԵԿՈՒՄԸ

Ահաւասիկ ձեր նախորդ թիւով խոստացուած այն գրութիւնը, որ առաջին անգամ լայն տեսանքով երևան հրատարակուող «Հայրենիքի» ձայնը շարժաթերթերի 28 Ապրիլ 1967ի Համարին մէջ: Ի դէպ, ձեր նախնի մէջ անհիւստի թերթագրորդ վերադրուած էր Աստուածի գրչին, մինչ քան չհաջողէր նա երևցած տեսնել է, Ար. Մնացականեան:

Պատմութեան դիտելը, որ ձեռնարկ փոշոյի աւարակուող հոտարակուող թերթերի մէջ, 22 Յունիս 1922ին:

Իսկ Մնացականեանի վկայութեամբ էնվէր փոշոյի աւարակուող Համար ձեռնարկը:

«Էլիտար» հերոսամարտը տեղի ունեցաւ 1922 թուականի Օգոստոս 4ին:

Այսինքն՝ ձեռնարկ սոստանալու նշանը ուղիղ 15 օր հարց:

Այստեղ յստակ է ու սիրտ պարտկող:

Քիչ մը շփոթ սահմանող Արեւմտեան Միասնակեանի առջև առջին լայն ընծայած յոգուածն է՝ «Երեկ գիշեր մենք անդեկուրիւս ստացանք», եւ այլն:

Անցնող 15 օրերու ընթացքին, ձեռնարկ՝ «Երեւոյն թերթերի մէջ սկսուած ձերբակոտորման գործողութիւնները Հասանական է, որ դեռ կը շարունակուէին Համայնավար ինտենսիւններուն կողմէ, մինչ անդին, Համայնավար նախ շրջաններին մէջ Միասնակեան յոգուած կը հրատարակէ եւ շարունակուող գերեզման» իջած շարունակներուն ցանկին մէջ չի ժողովար նաեւ յիշել ձեռնարկ փաշան: Քիչ մը տարօրինակ է, բայց, այնուամենայնիւ, իմ սա պատուարեր Միասնակեանի Համար, որ այդ օրերուն դիտուող ու կրցաւ քարձրածան հրեւոյն շարժաթեր պարտկուողներուն ստատկուած ի լուր...

Լինելով ինչ գիտութեամբ, Յակոբը լայն ծանօթ էր բարեխոսական երկրամասի ազգերի կենցաղին, գիտեր լեզուները: Միջուկները շատ անգամ, զգեստափոխուած, որպէս գիւղացի կամ մանրալանաւ, անցնել է բաւառիչների շրջանները, անձամբ հետախուզել թշնամուս: Միջուկները շատ մարտնչ վարեց բաւառիչների դէմ: Այդ մարտնչում, այժի ընկած գիտութեանը էին Ալ. Տօնիկեանը, որին Ֆրանսիայէն պարգևատրեց ասկէ ժամացոյցով, Նամադան Բաղաժի կուսակցական կամիտէի նախագահ Ա. Գալստեանցը, մարտիկներ՝ Գ. Թեւոսեանը, Պ. Բալսեղեանը, Հ. Սահակեանը եւ ուրիշներ:

Գլխաւոր հերոսամարտը տեղի ունեցաւ 1922 թուականի Օգոստոս 4ին: Նախօրեակին Միջուկները քրիզադէ Բաղաժիում գնդերը մտնեցին էնվէրի վերջին հանգրուանին: Հետախուզները հետուում էին էնվէրի անձնական պահակախումբի ամէն մի Բայրի: Էնվէրը, իր շփոխումով, Օգոստոս 4ի առաւօտուն, բշտայից գնում է Չագան գիւղի մզկիթը ազօրքի: Միջուկներին իրազեկները անլի են մտնում եւ գրթէ շրջապատում գիւղը: Տիրառչակ «գնեցրալիսիւնուող» ազօրք է անում եւ դուրս գալով մզկիթից, իր թիկնապահների հետ շարժում է դէպի միջուկ, նստելու եւ դէպի Ափղաճիստանի սանձանը չուելու համար: Մրտադուրի սպանող գնդացորդները լում են Միջուկներին հրամանը՝ «համազարկ»: Որտուում են գրեզացիներն ու հրացանները: Բաւառչական բանակի ղեկավարների դիակները փուտում են մզկիթի բակում:

Քիչ յետոյ, Միջուկները, Բաղաժի մարտիկների հետ շրջում էր սպանուած բաւառչիների դիակների մէջ: Ահա նա ստանաւ արիւնարբու հորդանների գլխաւոր ղեկավարն ու ոգեշնչողը, հայեական Մեծ Եղեռնի կազմակերպողը, յետոյ՝ Հոկտեմբերեան Յեզափաշտեանի դէմ սուր բարձրագրած բախտախրոզիքը: Նա անթիւ եւ անհամար ճիւղեր գործեց հայ ժողովրդի դէմ, պատժուեց հայ ժողովրդի կամքով, ընկաւ հայ ժողովրդի գաւակի հասցրած մահացու հարուածից: Էնվէրի եւ բաւառչական հորդանների ռշրնչացման լուրը տարածուեց երկրում:

Մամուլում հրատարակուեց Ալեքսանդր Միասնակեանի նշանաւոր յօդուածը՝ «Երեկ գիշեր մենք տեղեկութիւն ստացանք էնվէր փաշայի սպանութեան մասին: Կործանուեց վերջին նրիտութիւնը: Սպանուեց աւանտուրիստական, իմպերիալիստական եւ շարժաչինովիկեան թուրքիայի գլուխն ու ոգեշնչողը: Թալաթ փաշա, Տոթթ. Պեհաւտիսին Շաֆիր, ձեռնարկ փաշա եւ էնվէր փաշա՝ սհա այն բարձր, երթմնի հըպարտօրէն ենչող անունները, որոնք մէկը միսին յաջորդեցով, այնպէս՝ անփառուանկ գերեզման իջան: «Հայրենիքի» ձայն» 28 Ապրիլ 1967

ԱՐ. ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆ

«ԵՒ ԻՆԿԱ՛Ն. ԵՒ ԻՆԿԱ՛Ն. ԵՒ ԻՆԿԱ՛Ն»...

Էնվէրի ստտակման ժառին «Բագին»ի ապրիլեան բացառիկին մէջ երեւցած յօդուածին հետ՝ դիմացի էջին վրայ տրուած հայրենի մտաւորական Ար. Մնացականեանի հաղորդած մանրամասնութիւնները վերջնապէս կը փարատեն ինդրոյ առարկայ գործողութեան վրայ կուտակուած ճշուշը եւ, ինչպէս ըսուեցաւ անպամ ժը, կը հաստատեն ճշմարտութիւնը, որուն փառքը կը պատկանի ոչ թէ ճշմարտական դիմադրի ժը փամփուշտին», այլ զնդրապետ Յակոբ Մելքումեանի նախածեռնութեան եւ իր հայկական վաշտի համազարկին:

Հիմա այլեւս հայ ժարդը իր տրամադրութեան տակ ունի գլխաւոր դահճապետներուն առնուազն ամփոփ պատմութիւնը, ահաբեկիչներուն առնունքներով ու ճշգրիտ թուականներով:

Գիտապատ ինկածները լրիւ չեն ներկայացնիր հարկաւ մահուան դատապարտուածներուն այն ցանկը, որ կազմուեցաւ Երեւանի մէջ կայացած Հ. Յ. Դաշնակցութեան Յրդ ժողովին մէջ: Գլխաւոր ճիւղներէն ետքին հաշիւը մաքրելէ ետք, ահաբեկչական այդ գործողութիւնները ընդհատուեցան ժեզի անձանոթ պատճառներով եւ կարգ ժը հրէշներու ոչնչացման համար բռնկած ծարաւները անկատար մնացին:

Անոնցմէ մէկը, անպայման գլխաւորը, հայաստանութեան ծրարները գործադրելու կոչուած եռանգամ յանձնախումբին մաս կազմած կատաղի թուրանական Տոքթ. Նազըմ էր, որ խուսափեցաւ մեր արդարութենէն, բայց չենք գիտեր ինչպէ՛ս եւ ինչո՛ւ հտեւեալ պարբերութեան մէջ յիշուած է հայ ահաբեկիչներու զնդակէն ինկած թալապի եւ միւսներուն շարքին:

«... Եւ այն ի՛նչ որ չկատարեցին յաղթանակները՝ կատարեց հայուն վրիժառու բազուկը. եւ ինկա՛ն. եւ ինկա՛ն. եւ ինկա՛ն. ինկան թալապը, Սախտ Հալիմը, Տոքթոր Նազըմը, Պետախտին Շաքիրը, ձեմալը, ձիւանդիբը, եւ Երիշներ. անոնց հետ ինկաւ նաեւ Խնկէրը, շա՛տ հաւանաբար հայ հանալնալայի մը գնդակով, Թիւրքմենիստանի մէջ»:

Պարբերութիւնը տունուած է նոր հրապարակ ելած Լեւոն Վարդանի «Ժամանակագրութիւն հայկական տասնընեակի, 1915-1923» անուն աշխատութենէն:

Մենք դեռ չկարգացինք այս գործը, կրցանք զայն թղթատել միայն եւ առաջին ակնարկով ունեցանք այն սպաւորութիւնը, որ վաւերազրական տուեալներու վրայ ընթացած եւ երկար ժամանակ արժած լուրջ աշխատանք է եւ ճիշդ այդ պատճառով անհասկնալի մնաց մեզի մեր վրիժառուներուն զնդակով ինկածներուն շարքին Տոքթ. Նազըմը յիւած ըլլալու հանգամանքը: Երանի՛ թէ իրականութիւնը Լեւոն Վարդանի գրածին պէս ըլլար, մեր ահաբեկիչները դասած ըլլային ու ոչնչացուցած Վլադիմիր Գաբրիել Է զնդուին» վճռող ու գոռացող այդ հրէշը, բայց դժբախտաբար այդ երջանկութիւնը շարուեցաւ մեզի, այսինքն՝ Տոքթ. Նազըմ միւսներուն պէս «չիմկաւ, չիմկաւ, չիմկաւ», այլ բարձրացա՛ւ, բարձրացա՛ւ, բարձրացա՛ւ... կախողան, Աթաթուրքի կողմէ, Իդրիբի մէջ, 1926ին:

Լեւոն Վարդան յայտնապէս ձեմալ Աղմիին հետ չփոթած է Տոքթ. Նազըմը ու առաջինին փոխարէն վերջինը տեղաւորած է ինկածներուն ցանկին մէջ:

Գիտական գործերը իրենց բոլոր մանրամասնութիւններուն մէջ պէտք է ընթանան գիտութեամբ եւ նուազագոյն թիւրիմացութիւնն իսկ պէտք չէ տեղ գտնէ անոնց մէջ:

Լ Է Ո Փ Ո Լ Տ Լ Ա Պ Ե Ց

ԳՐՈՂՆԵՐՈՒ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ
ՅԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ ՇԱՐՎՈՒՄՆԵՐՈՒ
ԸՆԹԱՑՔԻՆ

Հայացուց
ԳՆԱՐ ՃԻՆՊԱՇԵԱՆ

Փարատըսէն աւելի բան մը գտ-
յութիւն ունի նախկին ստալինեան տե-
սարանին եւ գրական քաղցքնի ճաշակ-
ներուն միջեւ: Ստալինեան տեսարանը
բաւական լրջորէն կը պնդէր, որ Սոլժե-
նիցին «ընկերակցական իրապաշտ» մըն
էր եւ որ Լուբասի նախնորած համաշ-
խարհային ըմբռնումին «չօջափելի շա-
փանիչը» կարելի է կիրարկել ընկալի
Տեղիստիլի կեանքին մէկ օրը» գործին
կապակցութեամբ: Յամենայնդէպս, ե-
թէ նոյնիսկ ատիկա ճիշդ համարենք (թէ-
եւ Լուբասի բաժը այդ չէր), թէ՛ կեդ-
րոնացման ճամբար մը կը ներկայացնէ
ստալինեան Ռուսիոյ «չօջափելի շափա-
նիչը», այնուամենայնիւ, ասկաւին չենք
կրնար դանել այն պատճառը, որ Սոլ-
ժենիցինը արուեստի շափանիչով գե-
րակայ կ'ընծայէ — օրինակ, Տուսինցե-
ւի վրայ, որ իր «Մարդ ոչ միայն հացիւ
կեցցէ» (Not by Bread Alone) մէկին
մէջ, դարձեալ կը բովանդակէ «չօջափե-
լի շափանիչ» մը՝ Խորհրդային Միու-
թեան մասին:

Մենք ձեռով մը կը գտնուինք այն
չրջանին մէջ, երբ մարքսիստ գեղագի-
տութիւնը «Տոն Քիշնուտ» կը մեկնաբա-
նէր այն իմաստով, որ իբր թէ Սերժան-
թէս կը ներկայացնէր թշուառացած Հի-
սալիկայի (Hidalguia) Հետաքրքրու-

թիւները, կամ՝ Միքիելիչի «երիմեան
ստիպանիզը», որոնք իբրեւ թէ կը ցո-
յացնեն Օտեսայի ամբարներուն մէջ Հա-
ցաՀատիկի դիներուն բարձրացումը:
Բայց հակառակ դեղագիտութիւնը ըն-
կերաբանութեան արուեստին չենթարկը-
ւելու համար Լիւսիէն Կոլտմանի եւ Բո-
լան Պարթի մղած ակներեւ ճիգերուն,
Հիմնական այդ հարցը տակաւին կը գրա-
դեցնէ մարքսիստները: Մարդ կրնայ
շատ Հետաքրքրական բաներ սորվիլ
«Թափնուած Աստուած»ը (Le Dieu Caché)
գործին մէջ, բայց չի կրնար հասկնալ,
թէ ի՞նչ բանի մէջ կը կայանայ Բասինի
չարունակական կոչը: Մարքս անկեղծօ-
րէն կը գիտակցէր իր սեփական դժուար-
ութիւններուն, երբ դէմ յանդիման կը
գանուէր յունական արուեստի տեսու-
թեան: Ան, Մարքսը, կը հաւատար, որ
«նիւթական փոխակերպութիւնները կա-
րելի կ'ըլլան իրագործել բնական գի-
տութեան ճշգրտութեամբ», բայց նոյ-
նինքն «Բալաֆալիան տմտեսագիտա-
թեան քննադատութեան անփոփոխ» ա-
նուն աշխատութեան մէջ, ան կը գրէր.

«Իժուարութիւնը այն իրականու-
թեան մէջ չէ... որ յունական արուեստը
եւ դիցարանութիւնը մտէն կ'առնչուին
ընկերային յարադիմութեանց կարգ մը
ձեւերուն: Դժուարութիւնը Ե՛րբ, որ

ատուի տակաւին կը շարունակեն մեզի պատճառով գեղարուստական հանձնք եւ ձեռնով մը մեզի կը ներկայացնեն նորմ մը եւ անհայելի չափանիշ մը :

Այսուհանդերձ, Մարքս արուեստը իբրև ընկերային յառաջդիմութեան օրոշ երեւոյթ նկատելու իր հասցեակէտին եւ յունական արուեստի անժամանցելի (timeless) արժէքին մասին ունեցած իր հաւատքին միջեւ երբեք հակադրութիւն չստեղծեց : Ան փորձեց յաղթահարել իր դժուարութիւնը, ըսելով՝ որ յունական արուեստը կը ներկայացնէ «մարդկութեան մանկութիւնը», որ «կը փորձարկէ իր հմայքը իբրև անվերադարձ հանգրքաւան», բայց սահկա կազացող բացատրութիւն մըն է : Ո՛ր միայն յունական արուեստը, այլև իւրաքանչիւր մեծ արուեստ ունի իր անժամանցելի արժէքը, որ կը մատնանչէ իր մասուարական ամբողջական ինքնավարութիւնը, երբ դէժ յանդիման գտնուի մարքսեան տեսնական հիմունքին :

Յեղափոխական իր վերլուծումին մէջ Մարքս այժման բացայայտօրէն անօգնական էր, որքան արուեստի եւ գրականութեան վերլուծումին : Ան գրած էր չարք մը պատասխաններ վերա Զասիւլիի, որ հարց կու տար իրեն, թէ Ռուսիա կրնա՞յ ընկերվարական դասնալ՝ առանց գրամատերական հանգրքաւաններէ անցնելու, բայց, թերեւս Թլորտեան պատճառներով, այս պատասխանները չէր հասցուցած հասցէատիրոջ : Վերա Զասիւլիի տակաւին մինչև օրս պատասխանի կը սպասէ :

Թիւով այսքան շատ թիրաճ երկիրներու մէջ «ընկերվարութեան» կառուցումի երեւոյթը տակաւին պատասխան չունեցող նոյն հարցումը կը դնէ անոնց շրթներուն, որոնք իրենց վերլուծումներուն կը սկսին մարքսեան նախադրեալներով : Որքան ալ յաւելիալ որակումներ մուծուին որդեգրուած տեսնութեան մէջ, անոնք չեն կրնար պատասխանել վերոյիշեալ հարցումին, ճի՛շդ այնպէս՝ ինչպէս չեն կրնար բացատրել նոյնինքն մարքսիզմի տարածումը (կամ տարածումը քրիստոնէսութեան, մահմեդականու-

թեան կամ պուտոսայականութեան) հիմնընդուն տեսնական հիմքի եւ գաղափարաբանական գեր-կառոյցի միջեւ գոյութիւն ունեցող փոխարարութեան տուեալներուն վրայ :

Գրականութիւնը եւ մեծ արուեստներու շարունակական ձողականութիւնը կարելի չէ բացատրել պատմագիտութեան որեւէ մէկ տուեալով :

Փաստերնաք ըսած է .
«Բանաստեղծութիւնը եւ պատմութիւնը անջատ տիեզերքներ են, մէկը գոյութիւն ունի յախտնականութեան մէջ, միւրը՝ ժամանակի» : Բանաստեղծը «յախտնականութեան պատմունկ է՝ ժամանակի հանդէպ» :

Անտրէ Մայրո գրած է .
«Յախտնականութիւնը կը պարփակուի արուեստի գործին մէջ» :

Իր կարգին, Պլէյբ կ'ըսէ .
«Մարդկային կեանքի մէջ յախտնական սկզբունքները կը յայտնուին բանաստեղծներում՝ բոլոր դարաշրջաններուն» :

Մարդկային հարցերուն մէջ յստակ է, որ բաւական չափով համաշխարհային նոյնութիւն եւ նմանութիւն գոյութիւն ունին, հակառակ մեծ գրողներու եւ արուեստագէտներու գործածած ոճերուն եւ ձևերուն տարբերութեան եւ անոնց ունկրելիքներուն ժամանակի ընթացքին կրթած փոփոխութիւններուն : Այս բոլորը բաւական են՝ հեղինու համար գեղագիտական որեւէ տեսութիւն, որ կ'ուզէ արուեստը վերլուծել, հիմնուած՝ պատմական կամ ընկերաբանական յարաբերութիւններու վրայ : Գեղագիտութեան մէջ՝ յարաբերականութիւնը կարեւոր, բայց ոչ վերջնական հարց մըն է : Ժամանակակից մարքսիստներէն Արնոլտ Լոսըր տակաւին կը փորձէ ազատել մարքսեան գեղագէտները, ընդգծելով մտածումին գաղափարական բնոյթը, գիտութեան յարաբերականութիւնը եւ անոնց փոխ ազդեցութիւնը զասակարգային եւ ընկերային ենթահողին վրայ : Սակայն Լիսիէն Կոլուման, որդեգրելով հանդերձ նոյն մտածողումը «Թոմֆլուած Աստուածը» գործին մէջ, կ'ընդունի, որ յունական արուեստը

մասին Մարքոսի հարցադրումը սակայն ունի շփոթեցնող նկարագիր մը: Վերոյիշեալ հարցին տուած կոչումանի անձնական պատասխանը կը հակադրուի մարքոսեան զեզագիտութեան հիմնական նախադրեալին եւ հազիւ թէ կը փորձէ ամբողջականորէն եւ ոպառիչ ձեւով զիմագրաւել զայն:

«Արուեստի գործ մը կամ փիլիսոփայութիւն մը կրնայ իր արժէքը պահել ժամանակէն եւ իր ծննդավայրէն դուրս ա՛յն պարագային միայն, երբ, արտասայտիով մարդկային յատուկ կացութիւն մը, նոյն այդ կացութիւնը կարեւոր փոխադրել մարդկային մեծ հարցերու գետններուն, ուր անիկա ստեղծուած է մարդէ մարդ եւ մարդէն աշխարհ գոյութիւն ունեցող փոխարարութեանց ընդմէջէն»:

Վերոյիշեալ յայտարարութիւնը աշխարհեան կացող է, որքան Մարքոսի ճարտարագութեան ժանկութիւնը բացատրութիւնը: Յամենայնդէպս, անիկա հարցը կը դիտէ գործնապէս, պատմականէն աւելի՝ մէկնարանական ահնոցով: Մարքոսը եւ մարքոսեաները միշտ մերժած են գոյութիւնը շարժականութիւնը եւ շեշտած են պատմական յարաբերութիւնը, բայց գրականութիւնը կապ ունի ո՛չ միայն ընկերային կացութեան, այլեւ մարդկային կացութեան հետ, ուրիշ խօսքով՝ անիկա չի կրնար լքել մարդկային մտահոգութիւններու կարեւոր մեծամասնութիւնը էրզաթ կրօնքի մը սիրոյն, որ կ'անտեսէ մարդկային գոյութեան խորհուրդը, կը բանադրէ բընականացական փիլիսոփայութիւնը եւ, բարձրացնելով յեզագիտական երեւոյթը տատնմի՛ք աստիճանի մը, կը ձախողի՝ զայն բացատրելու ատեն: Մարքոսը կ'ակնարկէ Մարքոսի ճարտարանական զեզագիտութեան», բայց աւելի լաւ կը հնչէ Փորֆ. Բիւֆիւս Մաթիւսընի «19րդ դարու մարդակերպային դրապաշտութեան դասաւարտութիւնը»: Իր նեղ գիտունիւնով՝ անիկա չի կրնար ըստպառիչ ձեւով զբաղիլ ո՛չ զեզագիտական հարցով, որ կը կատարէ գրականութեան, ոչ ալ մարդաբանական

հարցերով, որոնք կապ ունին կրօնքին հետ, որովհետեւ ասիկա կը դադրի ըլլալէ ա՛յն՝ ինչ որ մարդ էականորէն համար կը ներկայացնէ մահու եւ կենաց սարբական հարցը: Նման դրապաշտութիւն մը ընկերութեան պարտադրելու փորձը անխուսափելիորէն մեզ կ'առաջնորդէ գրականութեան փոքրացումին: Երբ նման օրէնք մը պարտադրուի, հետեւեալը կ'ըլլայ մտքի եւ զգացումներու ծանծաղութիւն մը: Նման իրադարձութիւն մը չի կրնար ծնունդ տալ ո՛չ «Աստուածային կատակերգութեան» եւ ոչ ալ «Մարդկային կատակերգութեան», այլ պարզապէս կ'առաջացնէ «Լատտոս ալքերգութիւնը»:

Վիշնեւսկիի թատերգութեան առանձնէկ յայտարարութիւնը կարելի է համարել Հոլիմուտի կողմէ ներկայացուած շեղիկոս թագաւորը կամ «Անքիկոնը» ուրախ աւարտով մը: Նման յարադրութիւն մը մարդկային տոնապանքն ու զոհողութիւնը կը դարձնէ անհասկնալի եւ ոգրերգութիւնը կը վերածէ անիմաստ բանի մը: Լատտոս ոգրերգութիւն մը աշխարհ իմաստ ունի, որքան ընդանցական գրապաշտութիւն մը կամ հեշտապաշտական հաւատք մը՝ Բարձրեալին հանդէպ: Վիշնեւսկիի թատերգութեան մէջ ոչ մէկ ուրախ աւարտ կայ, հոն գոյութիւն ունի միայն խոստում մը՝ անխուսափելիորէն փայլուն ապագային մասին: Անիկա, անկասկած, արտասայտութիւնն է աշխարհական յառաջադէմ հաւատքի մը՝ պատմութեան զգիտական» ընթացքին վրայ իբրև աւելի բարձր եւ աւելի լաւ բաներու ձգտող ուժ, բայց որ հազիւ թէ կը համընկնի ոգրերգական ըմբռնումին հետ:

Գրողներու համար, որոնք աւելի մակերեսային հայեցակէտ մը ունին մարդկային կացութեան հանդէպ, մարդկային հարցերու արժարժումը եւ անոնց գրական ըմբռնումը աւելի ճակատագրական է, քան իրենց գրութիւններուն արտաքին գրաբնութեան պարագան: Անիկա կացութիւն մըն է, ուր գրողի զգայնութիւնը կը զուարեարուի տիրող զազա-

վարարանութեան: Գրողները, երբ կը փորձեն դիտել իրողութիւնները պահանջը ած ուղիներու ընդմէջէն, ստիպուած կ'ըլլան ուրանալու իրենց վաւերականութիւնը: Գրաքննութիւնը կը միջամտէ միայն արտայայտութեան ազատութեան ստիպողական դիտելակերպը եւ ինքնազրաքննութիւնը կը վնասեն նոյնինքն ստեղծագործութեան: Բանաստեղծները աւելի ուժգին ձեւով մը կը հարուածուին, որովհետեւ զստեղծագործական արարօքին մէջ, անոնք ակամայ կամ ենթադրական մտածումին կը յենուն աւելի մեծ շահով մը, քան ուրիշները: Եթէ անոնք ստիպուած ըլլան զրաքննել իրենք դիրենք, կը դադրին ստեղծագործելէ, իսկ եթէ զրաքննութիւն չընեն՝ քաղաքականօրէն խոցելի կը նկատուին: Անաթէ ինչու այնքան մեծ թիւով զոհեր կան բանաստեղծութեան մէջ:

Բնաւ պատահական չէր, որ Թորհրդային Միութեան սահմաններէն ներս փոմբերանցելի կողմէ եղած զանկեղծութիւն՝ զրականութեան մէջ կոչը առաջին պահանջն էր մակուսթային փոփոխութեան, Ստալինի մահէն ետք: Այդ կոչին յարդիւնք բառերուն իրենց հարազատ իմաստը վերադարձնելու ճիգը: Ստորերկրեայ Հրատարակութիւն Ստալինի անխոցեցաւ, որովհետեւ վերոյիշեալ արտագործութիւններէն եւ ոչ մէկուն կարելի եղաւ դուհարում տալ: Մը աածումի ազատութիւնը անջատելի է արտայայտութեան ազատութիւնէն, բայց խորհրդային պայմաններուն մէջ կարեւոր է յատկապէս առաջինը:

Օրինակ մը կրնայ պարզաբանել այս կէտը, նկարագրել նախապէս Խաչատուրեանի: Ասիկա յաճախ սխալ հասկացողութեան մը ենթարկուած է Արեւմուտքի մէջ, ուր անիկա, այդ Վերարծեւորումը՝ նկատուած է խորհրդային մտաւորական խաւին հաշտոյն իրրեւ ազատագրումի եւ ազատութեան հաստատման ճշմարիտ փաստ մը: Ձեւով մը կրնայ այդպէս ըլլալ, որովհետեւ թէեւ նախապէս արդիւնաւորութիւնները հրապարակ կ'էլլեն, բայց վերարծեւորուած խորոյ առարկայ

հեղինակներու էական պատգամը կը ներկայացուի դարձադարձիկ եւ մտնուածուպատ ձեւով մը: Երկու զգայուն պարտազաններ, պարագաները Քաֆքայի եւ Տոմսթոյեակիի կը լուսարանեն այս կէտը: Երկուքն ալ կը վերարծեւորուէին, հասկառակ իրենց զարգացմանը մասնազուտը տարողութեան: Բայց ինչպէ՞ս կը ներկայացուէին անոնք: Քաֆքա կ'ենթարկուէր քննադատական հնձումի մը, ուր մահուան հրեշտակները կը շարունակէին հարածի զինք, մինչդեռ նորնիսկ անոնք, որոնք ըմբռնելի էին՝ կը շարունակէին խօսիլ ու գրել այնպիսի ձեւով մը, որ ամբողջութեամբ կ'անհետանար մարդկային կացութեան հետ ունեցած Քաֆքայի կապին իմաստը: Օրինակ, ինչպէ՞ս կարելի է ըմբռնել հետեւեալ գնահատանքը.

«Քաֆքայի ստեղծագործական երկերուն մէջ զայսօրին ունի ուժգին քրեմադատութիւն մը: Թէեւ Քաֆքա կը ցոյցանէ քաղցրի դասակարգիմ յատկանշական սալստոյքը՝ մարդկային ընկերութեան վրայ ընդհանրապէս: Ան քաղցրապէս կ'արտայայտուի եւ գրեթէ աստուածացեացած է դրամատիքական պիւրմտային ստատմայական գորութիւնը:

«Ինչպէ՞ս ձեռն ընթացող կրնա՞յ արդեօք առնչութիւն մը տեսնել այդ գործին եւ խորհրդային պիւրմտային միջուկ, կամ՝ առնչութիւն մը Վատուվարութիւն ստեղծագործութեան եւ ըստապիւնեան մարդագործումներուն միջեւ: Անկցի՛ մտածումը: Անոնք կ'առնչուին միայն զքաղցրի դասակարգին» եւ զքրեմադատական պիւրմտային: Ձեւան չաւառեանական ճշմարտութիւնները, զըրականութիւնը վըր ցոյցանէ՞ միայն իր ժամանակը եւ ընկերութիւնը: Հետեւաբար, Քաֆքա կրնայ ցոյցանել միայն աւարտ-հունգարական վարչաբարական սարսփելի փորձառութիւնը, բայց չի կրնար ընդունուիլ իրրեւ խորհրդային ընկերութեան ամենող առաջնորդ:

Հակառակ այս բոլորին, կրնայ ըրալ, որ Քաֆքայի կամ ուրիշ ոչ-քոշեր (non-kosher) գրողներու Վերարծեւոր-

բուժը կը միտի, ինչպէս Մաքս Հէյ-
ւարտ կ'ըսէ՝ «խորհրդային գիտակցու-
թեան աստիճանական ընդլայնումի մը»,
բայց մորդ նոյնպէս պէտք է նկատի առ-
նէ պաշտօնական փորձերը՝ որոշելու
Համար անոնց խորութիւնն ու որակը:

Պարագան նոյնն է Տոսթոյեւսկիի:

Տարիներ շարունակ անարզանքի են-
թարկուելէ ետք, «Այտահարներուն Հե-
զինակը ներքոզի կ'արժանանար իր ծը-
նըդեան 150րդ տարեդարձին առիթով»: Կը
մոռցուէր նախկին կայուն տեսակէ-
տը՝ իր գառաջուր հակայեղափոխականի
մտածողութեան մասին եւ «Փրաւտա»
(11 Նոյեմբեր 1971) գրագէտին տարե-
դարձին օրը կը յայտարարէր:

«Պատճառ չկայ, որ այս մեծ գրողը
մեզի դասնիք հակայեղափոխականներու
շարքին: Մեզի չեմք կրնար հաշտուիլ
հակայեղափոխականներու եւ խռատիստ-
ներու հետ, որոնք իրենց գրագէտը կը
նկատեն Տոսթոյեւսկիին»:

Որպէսզի Տոսթոյեւսկիին վերադար-
ձընէր իր արժանիքը եւ ան դատուէր խոր-
հրդային գրականութեան յատուցուած
յետնորդներուն շարքին, անհրաժեշտ էր
կատարել «փոփոխ» վերամեկնարանու-
թիւն մը: Լենինի այն բնորոշումը, որ
Տոսթոյեւսկի «մեծ վաստ» մըն էր՝ դադ-
րեցաւ այնեւ մէջբերուելէ: «Այտահար-
ները» վէպը նոյնպէս դադրեցաւ այլեւս
որակուիլ իբրեւ «կատաղի պարսաւանք
մը առաւ ազատագրական շարժումին» ու
սկսաւ նկատուիլ «իբրեւ կազմախօսու-
թիւնը եւ քննադատութիւնը իւրաւ-ծայ-
րայեղութեան», ինչպէս կը գրէ Պ. Լ.
Սուլշովը՝ «Լիթերատուրնայա կագեթա»
Հանդէսի 17 Նոյեմբեր 1971ի թիւին մէջ:
Նոյնիսի Կորդի վերտաին կը դատուէր
Տոսթոյեւսկիի Հետեւորդներուն շարքե-
րը: Երկու գրողները կը ներկայացուէին
իբրեւ ազգականներ իրարու, Չեկալովի
կողմէ ստորագրուած յօդուածի մը մէջ,
որ վերնադրուած էր «Տոսթոյեւսկի եւ
կորգի» ու երեւցած «Լիթերատուրնայա
Ռասսիա» թերթին 12 Նոյեմբեր 1971ի
թիւին մէջ: Չեկալովի իր յօդուածին մէջ
կը յանդէս այն եղանակացութեան, որ ըն-
կերվարական իրապաշտութեան էջ միայն

կարելի կը դառնայ մուծումը խոր եւ
ստեղծագործ աւանդութեան եւ օրինաւ-
բութիւնը դասականներուն»: Իսկապէս,
Բոժէ Կարտուի նմանօրինակ բան մը ըսած
է աւելի խեղաթիւրեալ (sophisticated)
ձեւով, իր «Անափ իրապաշտութիւն»
գործին մէջ: Բայց մինչեւ անգամ Կար-
տուի պատարակուած է եւ, Հետեւաբար,
ոչ ոք կրնայ ըսել, թէ երբ Ստալին չկայ,
ամէն բան արտօնուած է: Ոչ անգամ «ըն-
կերվարական իրապաշտութեան» նեղ
պրիսմակին մէջ: Այսուհանդերձ, ինչ որ
արտօնուած է խորհրդային գրագէտնե-
րուն, ոչ մէկ աստիճանութիւն ունի Տոսթո-
յեւսկիի հանճարին էութեան Հետ: Տոս-
թոյեւսկիի Ռուսիոյ մէջ կրցաւ տեսնել
յեզափոխական դիցարանութեան եւ ամ-
բողջատիրական բարոյացիտութեան ա-
մուսնութեան ծնող հակացողութիւնը
աւելի յստակօրէն, քան ուրիշ ոեւէ մէ-
կը: Ներկան կը բերէ այդ գնահատանքը
իր ներհայեցողութեան Հաւելոյն:

«Տոսթոյեւսկիի համեմար էր նախա-
տեսութեան, բայց ինչ որ ան երբեք չը-
կրցաւ նախատեսել՝ ա՛յն էր, որ իր վէ-
պերը մտանկացութիւն պիտի սերէին ըն-
կերվարութեան կառուցումին»:

Ի՛վան Քարամազով իրաւունք ունէր,
Եթէ Աստուած գոյութիւն չունի, ապա
ուրեմն ամէն բան արտօնուած է: Ամէն
պարագայի, ան դժուար թէ կարենար ե-
րեւակայել, որ ատիկա պիտի այլակեր-
պէր Տոսթոյեւսկիին ու վերածէր դայն
«յասալոյճական գրողի» մը: Կրնա՞ր ու-
նէ մէկը պատկերացնել «Այտահարնե-
րուն» Հեզինակը՝ իբրեւ մասնակից բն-
կերվարութեան կառուցման», Պր. Պը-
րեժնեի իշխանութեան ներքեւ: Նոյ-
նիսի Ստալին ի՛նքը պիտի զարմա-
նար՝ տեսնելով, որ մինչ Թրոցքի
իբրեւ հակայեղափոխական տակաւին
կը խարանուի Խորհրդային Միութեան
մէջ, Տոսթոյեւսկի զազրած է այ-
լեւս իբրեւ այդ նկատուելի: Գրական
նութեան (գոյտտեւող) եւ յեզափոխու-
թեան (կայուն) հանդիպումին իբրեւ
արդիւնք որքան զարմանալի էլք մըն է
ատիկա: Յիսու՛մը ինչ տարիներ անցած
են յեզափոխութեան փոթորակմէն առ-

դին, այսուհանդերձ, միջին մարդը տակաւին որոշապէս մօտեցած չէ Արիստոտելի եւ Կէօթէի մակարդակին, բայց Սմերտիաքով դեռեւս կը հետապնդէ խռովարարիւնը (Agitprop):

Արեւմուտքի մէջ, Տոթթոյնեօկիէն աւելի Թրոցքին է, որ վերածնունդ մը կ'ապրի: Ծնաւք Տէօչէրի, Փիթըր Ուէյտի եւ Րիչըրտ Պրիթընի կողմէ ան վերածնունդ է արամաթիք անձնաւորութեան մը: Թրոցքիի շարունակական (permanent) յեղափոխութիւնը քորոզուած է Վեր յեղափոխականներու կողմէ, որոնցմէ շատերը ունէին քաղֆենի անամոքելի ծագում մը, ինչպէս Թարիք Ալի կամ Թերեզա Հայթէր, որոնք խաղացին «Այսահարմիրը», առանց նոյնիսկ կորզացած ըլլալու զայն:

Յեղափոխական վիպականութեան ուղիքը միաթաղանական թուականներու պաշտօնական գրողներուն», բայց առիչ անկախ, գրողներու ընդհանուր հակազդեցութիւնը տարրեր եղաւ երեսնական թուականներուն տնտես տնտեսութեան կեցուածքէն: Շատ քիչիւր պատրաստ էին իյնալու նման առասպելի մը ի խնդիր, ուրիշներ հակակրանք ձեւացուցին Վեր յեղափոխականներուն հանդէպ,

(Շար. 6)

— անոնք մոռցած էին երեսնական թուականներու դասերը: Այսուհանդերձ, անոնք այլեւս սովեթական հակամենք չունէին եւ անոնց «յեղափոխական» յանձնառութիւնը այլեւ ոչ-անորոշ (unambiguous) չէր: Ատիկա ձեւով մը օրուան նորոյթն էր աւելի, քան խորունկ կլանում մը: Սախրարար, Նիւ Նորքի մէջ թէ Փարիզի՝ տնտես կը ներշնչուէին Կրիստիան Գիլդի կամ Ջոն Ալի նորոյթներէն, թէեւ անոնցմէ շատեր հիմա արդէն շատ հեռու կ'ապրէին մասայիկ թողած մասերէն: Բայց թէեւ մոլեռանդ պատճառով յիմականներուն մէջ շատ քիչ թիւով գրողներ կային, քան երեսնական թուականներուն, ու նաեւ աւելի տարած էին իրենց զազափարտանութեան մէջ, սակայն եւ այնպէս անոնք պատրաստ էին լծուելու յեղափոխական կարգին, հակառակ տնտ, որ յատկորէն չէին դիտեր, թէ այս բազմակեղրոն աշխարհին մէջ ո՛ր ուղղութեամբ կը թաւալէր այդ կարգը, եւ կամ՝ ընդհանրապէս կը թաւալէ՞ր թէ ոչ: Յեղափոխական առասպելին տարածուիլը եւ յառաջադէմ կանչը սիրուած էին անցնող տասնամեակին «Տիւր Նիւ Եսթ րիւիլիու պուխ» կոչուած ներկայացուցչական հանդէսին «արժատական բարեձեւութիւն» սինակին մէջ:

ԼԷՈՓՈՒՏ ԼԱՊԷՑ



«ՈՒՆԱՅՆՈՒԹԵԱՆ ԱՓԵՐԸ»

(ՆՈՒՊԱՐ ԶԱՐԽՈՒՏԵԱՆ)

Վերջերս լայն տեսած նույնպիսի Զարխուստանի շրջանում տեղի ունեցած զենքի և զորքի փոխանակումը մեզ է ժամանակից դեռ չվերջացրել, հետևաբար անցնալիս միջև խորհրդալուր ապագան:

Անիկա կը բազմաթիվ հիմնական երկու բաներով:

Առաջին՝ Հին ժամանակները, որոնք կը վերջանան Բրիտանիայի գաղութացումով:

Երկրորդ՝ նոր ժամանակները, որոնք կ'առնուին զանազան տարածությունով լեզուներ մեր ներքին և արտերկրյան հարաբերությունները:

«Ունայնութեան ամբարձր զենքը մեզ է հասնել անասունական այն մթնոլորտէն, ուր եղծման պարտեզին մէջ կը կերպարանաւորուէր մեր նախահայրը, Աղամ, զորացած Հողէ, բայց կրկնով արարչազորն հողին մասնիկ մը իր մէջ:

Անոր ընդհանուր թեման մարդկայնութիւնն է, անկերբի և կենցաղային բարեբաւ նկատմամբ Հայկեցու թեման իր յատուկ բոլոր ստորազիններով: Յայն և յատարեկութեան հողի մասնակցութեամբ մարդը, որ յարստեւորէն կ'ազդի, կը ստասպի ի խնդիր իր կորուսեալ երազին, եղծուած խղճմանցին, հուսովան: Պիտաւոր Հերոսը հայնն է, ժամանակի լաստին վրայ կանգնած մարդը, որուն հազարամեակներու տարողութիւնը ընդհանրապէս ճամբորդութեամբ կը բացուի առաջին գլուխը:

Երրորդն էրեւակայութեան մը արդարեւն է «Ունայնութեան ամբարձր», ուր կան կեանքէն զազուած և բնականութեամբ երանգուած տաղանակներ, մասնաւոր:

Իր ճամբորդութեան ընթացքին հայնն կ'ենդրայնանայ, կը կարեկցի մարդու հետ առնչուող

հնազոյն թէ հարազ բոլոր հանդէս հարցերուն: Յատկանշական պարագայ մը, որ զինք կը զբոսնէ ճամբորդիկայինի առջեմը՝ ազգային պատկանելութեամբ մը: Այսպէս, փնտռելով իր հայրենիքը, կորուսեալ միջոցը, հայնն հարազատ թարգմանը կը նանդիանայ Հայրենազորի սեւեւ ժողովուրդի կարոտարազմ զգացումներուն: Մեծապատիւ ժամանակ յայտնաբերուած զղջումի յուսահատական պարագան կը պատկերանայ Յուզայի հետ ունեցած իր խոսակցութեան ընթացքին:

— «Ա՛հ, կայլ՛՞՞՞՞, կայլ՛՞՞՞՞, քրտնի մեղի, որ յիշեցին կը հաւատաս ներսով: Ո՞րքեմ կամ, որ կը գործուէին մարմինն դէմ այն անիրոնքը կրնան ներսով արժանանալ: Բայց կամ անիրոնք, որոնք կը գործուին հոգիին դէմ, անոնք ամենքիսի կն: Երբեք էու մեզի գործած ըլլայի: Կան զանիմներ, որոնք տխրի արժանանալ ներսով, բայց դաւանանքը՝ կրքեմ:

Վէպին երկրորդ մասին մէջ հայնն կը տեսնէ Հայու անասունները եղծունի ճամբուն վրայ, անհաստես կ'ըլլայ անմարդկային արարքներու և, վերջապէս, հիշատական ուսման յառաջացած սպիտակ: Հայկական մթնոլորտը անիւ զգալի է այս մասին մէջ, որ կան պատկերներ տարազրուցներէն, պայքարներէն: Կան վրէժի և վրէժառու արարքներու պատկերացումներ:

Վէպը հետզհետէ զարգանալով՝ կը հասնի զաւիթ սերունդներուն, փոխադրելով ընթացքը գիտա-երեւակայական մթնոլորտ մը, մասնաւորաբար, էգերու Մայրաքաղաքը՝ Տիւնիզիան, ուր այր մարդիկ կը տատային սարկութեան լուսնի տակ: Ապա՝ արուներու միջնարդը՝ Ենթադրան,

յասակներուսած՝ տեսնել բերդերով եւ մահապահու
զենքերով: Աւ վէպը կը վերջանայ երազային
մթնոլորտի մը մէջ, երբ հսկայ պատուաւին
վայայ կը պատկերանայ Հայաստանը, ինչպէս որ
իւրաքանչիւր հայ կ'երեւակայէ զայն:

Վէպին հերոսը՝ Կայէն, որ կը խորհրդանշէ
մարդկութեան մեծ անհուժեղներն ու վերելքները՝
տառալիկ վայրկեանին իսկ կը գտնուի ողբերգա-
կան վիճակի մը մէջ: Կը եկամէ ինքզինք անար-
գարութեան մը զօհը, կորսնցուցած ամէն բան՝
— Հայրենիք, սիրելիներ, Եգիպտոս: Իր ամբողջ
կենսաքի ընթացքին, որ այս վէպին մէջ կը հաս-
նի հազարաւոր ասորիներու՝ Կայէն ունի երազ մը
միայն, վերադառնել այդ Հայրենիքը, կորստեալ
նշեմը:

«Ունայնութեամ արկերք վէպին վերջին մա-
սը մեզ կը վերադարձնէ ճախնակն խուարիկ: Արդեօք
ամէն ինչ մահով եւ խուարով պիտի վերջանայ:

— «Այս գետը, — ըսաւ Լիլիթ, — մեզ կը
տանի դէպի անցեալ, դէպի ունայնութեան արկե-
րք:

— Բայց անցեալէն անցին, կրկին կը սկսի
ներկան եւ ապագան, — պատասխանեց Կայէն, —
եիմա մենք կը մուտքիմք դէպի յաւիտեակեանու-
թեան արկերք:

— Ի՞նչ պիտի ըլլայ այս մամբարդութեան
վայնամուր, — հարցուց Լիլիթ անմկութեամբ:

«Կայէն յպատասխանեց: Ուշ ուշով կը զըն-
նէր ազնուազնիւ ամեռն եւ անսահման միօրի-
նակութիւնը:

«Իբր յանկարծ՝ հեռուն՝ ունայնութեան մաշ-
պիւրեմ անդին, բուրբուր եւ երկինքի գիծին
վրայ, նրեցաւ յաստար կէտ մը...»:

Արդարեւ, արդ բաժանումի գիծ մըն է ծո-
վու եւ ցամաքի միջեւ, եթէ պահ մը մեր ընա-
կան այգիքով դիտենք Տիեզերքը եւ նակատա-
դիրը մարդուն՝ կը տեսնենք անանցանելի սահ-
ման մը, որ կը կոչուի Ունայնութիւն: Բայց ե-
թէ դիտենք մեր հոգեկան աչքերով՝ պիտի տես-
նենք, թէ այդ անանցանելի արկէն անդին կայ
խորհրդաւոր լոյս մը, որ կը խորհրդանշէ Յա-
ւիտեակեանութիւնը, Հոգիի եւ մաքի փոխարա-
բերութեանց այս լուսարմակին տակ կը յտակա-
նայ իմաստը «Ունայնութեան արկերք» վէպի
խորագրին:

Վէպը ուարտելէն ետք՝ էական հարց մը կը
ծագի ընթացողի մաքին մէջ: Արդեօք ինչո՞ւն
Կայէն դարձած է հեղինակի նոխարութեան
տարական, վէպի իրեն հերոս: Կարելի չէ՞ր
պատճառեան որեւէ մէկ շրջանէն կամ ներկայ
իրականութենէն վերցնել արկար մը եւ այդ
արկարին նկարագրին, խոսնուածքին, արուս-
ներուն կամ իւրայատուկ բարեմանութեանց
համարով զարգացնել վէպը: Եման մտածում մը,
տակայն, անհեթեթ պիտի թուէր, որովհետեւ վէ-
պի նիւթը բարդ թւում մը կ'ընդգրկէ եւ որում
տարողութիւնը հազարամեակներու կը հասնի:
Աւելին. սովորական հերոս մը, որքան ալ սո-
սուրտ ըլլայ իմացական թէ ֆիզիկական յա-
կութիւններով՝ պիտի տկարացնէր մթնոլորտի
ուժանութիւնը: Միայն Կայէնի արողութեամբ
տառապիտակն եւ այլարանակն դէմք մը կրնար
հանդիսանալ միութեան շաղախը, որուն երկարը
տանջըը մտածանքն է, որ հոս ներկայացած է
խաղաղ ու լայն գետով մը: Այս հնարքներուն
շնորհիւ է, որ կարելի եղած է այժմ անցնել
մարդկութեան աստեանկեր, այլ հրանայի յա-
ռաջնապաշտը:

«Ունայնութեամ արկերք վէպը ունի հիմնա-
կան տկարութիւն մը տակայն, որ կը կայանայ
համամարդկային տարապիտակ մասնա իւրաք
մը արկարներու միջեւ: Հոգեկան կամ իմացական
զօրաւոր բախումներ տեղեկու հեղինակի ան-
տեսումին մէջ, Ուշագրաւ երեւոյթ է Կայէնի եւ
Յուգայի նման եղիտեամբաւ սերտարներու
հանդիպումը Երուսաղէմի մէջ, Աւագ Հինգշաբ-
թիի օրը: Անոնց զրոյցը աշկոյտ հոգիի մը դա-
րուար տառապանքը չի փոխանցեր մեզի, զլլու-
մի գերբազայն հոգեկանակամ եւ պտտիւմեն-
րով բացայայտուած: Այլպէս, չի նաչ արկար-
ներու միջեւ հոգեցունց բախումէ մը յառաջա-
ցող ընդգրկումը, տեղը, դառնութիւնը համեմա-
տաբար ընդուն եւ բարեբար ասորիքով պիտի
նպաստէին վէպի դեզարուեստական արժանիքին:

Այսուհետեւերմ, հանդուրանալիկ հանելի ու-
ղեւորութիւն մըն է այս վէպը: Մարդկութեան
խորհուրդին բացուող համայնապատկեր մը՝
պատկերացուած՝ ընդհանրական արուստներով:

Յ. Մ.

Մեծափայլ տնօրենքու ու աղծկարար գործօններու կողքին, բոլոր գրականութիւնները եւ բոլոր ժամանակներուն ունեցած են կուսակցական ու անկուսակցական գործօններ, որոնց բարեմասնութիւնը կ'ըզմէ քաղաքակրթական երջանու մը, ու կ'անհրաժեշտ է կամապատասխան կամարում մը վայելելէ ետք, բաժանման պահուն տիրութեամբ կամակամ են չհոռուէն կամ մտէն իրենց գործունէութեան չհետեւած անձնաբը:

Կեանք տնօրենքու մը կամակուցան անպայման բոլոր անոնք, որ իմացան Օննիկ Փանիկեանի մահուն լուրը, զոր Մարտ ամսոյն երկուրէն գունձեցին Հայաստանի գրողներու վարչութիւնն ու մամուլին ծանօթ օրգանները:

Օննիկ Փանիկեան, զրական ծանկանունոյ՝ Օննիկ Ջարժուրի, ծնած էր 1905ին, Մաշխարաւ Տասը տարեկան էր ու եսիակրթարանի սալկերու, երբ չըլանի հայութեան չեւ կը տարագրուի մինչեւ Տէր-Ջոր: Ջորս տարի ետք, վերադարձ իր հայրենակիցներուն հետ կը վերադառնայ իր մենկավայրը, բայց երէք տարի անց, քեմալական շարժումին չհետեւանքով կրկին համբայ կ'ելլէ ու կը հաստատուի Պուլկարիտ, ուր կը պարսպի ուսուցչութեամբ:

1946ին, Փանիկեան կը ներգաղթէ Հայաստան եւ շուրջ քառորդ դար կ'աշխատի Վճայաստանի հրատարակչութեան մէջ:

Պուլկարիտ մէջ բանաստեղծութիւններու շորս հասար յոյս ընծայած է Փանիկեան, իսկ Հայաստանի մէջ՝ երկու հասար բանաստեղծութիւն, մանկական գրականութեան պատկանող վեց չրքոյնի, յուշերու ժողովածու մը, ու խմբագրած է իրեն հայրենակից Մակարացի կարոյի (Ար. Յարութիւնեան) գրչին պատկանող գործ մը՝ «Փիշիքային Ֆամրոյրը»:

Տարագրութիւն, ցաւալին անդադարներով չի վերադարձ պատանիի մը բախալը, ուսուցչի շարքարգին առեւայ, Հայաստան հաստատուած առաջին տարիներուն ստալինեան գիշերներու մղձաւանջը տակաւին, բայց նաեւ իրմէ ուրտագրուած քովի ստանաւորին չերտին մասնած վարքին պէս վարք մը, տեւելու կամք ու ստեղծագործելու համոյթ:

Յարգանք իր յիշատակին:



Հ Ա Յ Ը


Հայը նրման է՝ գետի՝ մը հոսան. Եթէ ընթացքը խափանի ազն, Ձի՛ կեճար բընու, յարգելով հունձն, Ճամբայ կը բանայ, կ'ընթանայ նորէն:

Հայը նրման է՝ ծառի՝ մը դալար. Գու տեղեկները կը բափին հովն, Մարդիկ ճիշդը, աւա՛գ, կը կրտքն, Արեւտը խորն է, ծառը կ'ա՛յն նորէն:

Հայը նրման է՝ արեւի՛ն յուսեղ. Եթէ գլուխը կըտրեն ու ճնտնձ, Ձերք վերջալստի արեւ երբեղէն, Յարող առտու ան կը ծագի՛ նորէն:

Հայը նրման է՝ թըլուծին փիւնիկ. Թըլնամիններ ծիտ, ինչու՛ր գայն կ'այրեն. Երբ գիտնն որ Ան, ի՛ր իսկ մոխիրէն, կը ծընի, կ'ապրի՛, կը թըռչի՛ նորէն...

Օ. ԶԱՐՄՈՒՆԻ



ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄՔ ՍՏԱՑԱՆՔ

ՅԱԻՆՐԺԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀ (ՎԷԿ),
Գ. ԱճԵՄԵԱՆ, ՊԷՂՐՈՒՔ, 1975

ՔԱՐԱՑԱԾ ԼԵՋՈՒՆԵՐ (Բանաստեղծութիւններ),
Շահանգուխտ, ՊԷՂՐՈՒՔ, 1975

ԲԱՐԵՒ, ՀԱՅԱՍՏԱՆ (Արձակ),
Մ. ՊՅԱՖՆԵԱՆ, ՊԷՂՐՈՒՔ, 1975

ԳԱՐՈՒՆ՝ ԱՄՐԱՆ ՄԷՋ՝ (Բանաստեղծութիւններ),
Յ. ԱՅԱՆԵԱՆ, ՊԷՂՐՈՒՔ, 1975

ԲԱՐԵՒ ԲԵՋ, ՄԱՐԴ (Բանաստեղծութիւններ),
Գ. ԽԱՆՆԵՅ, ՊԷՂՐՈՒՔ, 1974

ԵՐԿԱՐ ԳԻՇԵՐԻՆ ՄԷՋԷՆ (ՎԷԿ),
Ա. ԱՆՊԵՂԵԱՆԵԱՆ, ԼՈՍ ԱՆՃԵՆԻՍ, 1974

ՆԱՅԻՐԵԱՆ ԵԱՂԻԿՆԵՐ (Բանաստեղծութիւններ),
Ա. ՄԱՐԶՂԵԱՆ, ՊԷՂՐՈՒՔ, 1974

ԱՊՐԻԼԵԱՆ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ ՇԱԻԻՂՈՎ (Յօդուածներ),
Ա. ՀՈՎԻՆԵԱՆ, ՊԷՂՐՈՒՔ, 1975

ԳԷՈՐԳ ԿԱԿՈՍԵԱՆ (Այլսով),
Խմբագրում՝ Յ. Ա. ԿԱԿՈՍԵԱՆ, ՊԷՂՐՈՒՔ, 1974

ՄԻՀՐԱՆ ԹՈՒՄԱՆԵԱՆ (Այլսով),
Գործ՝ Մ. ՄԻՆԱՆԵԱՆ, ՆԻՍ ԵՅՐԲ, 1974

ԱՐԱՐԱՏ (Հանդէս-ալսում),
Լուսանկարներ՝ Յ. ՉՈՒԲԵԱՆ, ՆԻՍ ԵՅՐԲ, 1974

ՏԱՐԵՎԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

ԼԻԲԱՆԱՆ 40 Լ. ՈՍԿԻ
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ 20 ՑՈԼԱՐ
ՀԱՏԱՎԱՃԱՌ 4 Լ. ՈՍԿԻ

باكين
مجلة شهرية ، ادبية وفنية علمية
مدير المسؤول
السيد ارتين كارنيك قزائجيان

•

PAKINE
REVUE MENSUELLE
LITTÉRAIRE & ARTISTIQUE
Propriétaire
A. KAZANDJIAN

•

Բ Ա Գ Ի Ն
ԱՄՍԱԿԻՐ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԵՐ ԱՐՈՒԵՍԻ

•

ԽՄԱԳԻՐ
Գ. ՄՆԱԳԵԱՆ

Հեռաձայն՝ 296898

Վարչությունի հասցե

K. ARARADIAN
Rue Selim Boustani
Beyrouth -- Liban